

6740

0597

7-17 1881

12507

ԸՆԴԱՐՁԱԿ

059
7-17

Օ Ր Ա Յ Ո Յ Ց

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ

1897

5/17

ԹՈՒԱԿԱՆԻՆ ԲՐԻՍՏՈՍԻ



Յ Օ Ր Ի Ն Ե Ա Ց

Գ. ՊՍ. Դ. ՏՍ. ՍՍ. ԲԵՍ. Ն



Կ. ՊՈԼԻՍ

ՈՒԹՈՒՆ Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

059
7-17

Սէֆէր	օր 29	Յունիս	19
Բէպիւլ էվվէլ	օր 30	Յուլիս	18
Բէպիւլ ախըր	օր 29	Օգոստոս	17
ձէմազիւլ էվվէլ	օր 30	Սեպտեմբեր	15
ձէմազիւլ ախըր	օր 29	Հոկտեմբեր	15
Բէճէպ	օր 30	Նոյեմբեր	13
Շապան	օր 29	Դեկտեմբեր	13

ՆՇԱՆԱԻՈՐ ԱԻՈՒՐՔ ՏԱՃԿԱՅ

Պէրաժ կէճէսի	Շապան 15	Յունուար	6
Գատըր կէճէսի	Բամազան 27	Փետրուար	17
Բամազան պայրամը	Շէվվալ 1	Փետրուար	20
Գուրպան պայրամը	Ձիլճիճճէ 10	Ապրիլ	30
Աշուրէ կիւնիւ	Մուհարրէմ 10	Մայիս	29
Մէվլուտը շէրիֆ	Բէպիւլ էվվէլ 12	Յուլիս	29
Գանտիլ կիճէսի	Բէճէպ 2	Նոյեմբեր	14
Միրաճ կիճէսի	Բէճէպ 27	Դեկտեմբեր	9
Պէրաժ կիճէսի	Շապան 15	Դեկտեմբեր	27

53830-ս

ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿՔ

Գարնանամուտ եւ հասարակաց	Մարտ	8
Ամառնամուտ եւ արեւադարձ	Յունիս	9
Աշնանամուտ եւ հասարակած	Սեպտեմբեր	11
Զմեռնամուտ եւ արեւադարձ	Դեկտեմբեր	9


♀ 40795. 68


ՏԱՐԵՄՈՒՏՔ

Քրիստոսական Թուականին 1897	Յունուար	1
Տանկաց ելմտական Թուականին 1313	Մարտ	1
Փոքր Թուոյն Ազարիայի 282	Մարտ	21
Տանկաց հիճրիյէ Թուականին 1315	Մայիս	20
Տոմարական Թուականին հայոց 1346	Օգոստոս	9
Բուն Թուականին հայոց 4390	Օգոստոս	11
Հրէից Թուականին 5658	Սեպտեմբեր	15
Լատինացոց Թուականին 1898	Դեկտեմբեր	20

ՊԱՆԱՐՄՈՒՆՔ

Այս տարւոյն մէջ իսւարի Արեգակն երկու իսկ Լուսինն մի անգամ, բայց այս երեք իսւարմուռք եւս անտեսանելի են ի Կ. Պօլիս:





ՅՈՒՆՈՒԱՐ

ՏՃ. Գեանուրնի սանի

ՕՐ 31

13	1	ԴՇ. ԿԱՂԱՆԴ. Տարեմուտ 1897 Ժուականին Բրիտտոսի. ԳՆ*. Տճն Անուանակոչութեան Տեանն եւ յիշատակ Բարդղի հայրապետին. ԼԴ. Յունուար 13. ՏՃ. Շապաթ 10 եւ Գարդն 68. ՀԲ. Սեբաթ 10.	10	68
14	2	ՅՇ.	11	69
15	3	ՈՒՐ.	12	70
16	4	ՇԲ.	13	71
17	5	* ԿՐ. ԳՆ. ձրագայոց Գայանութեան. ԼԴ. Անտոնի Աբբային.	14	72
18	6	* ԲՇ. ՏՈՒ ՄՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒՔԵԱՆ ՏԵԱՌՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ. ԳՆ*. Մկրտութիւն Տեանն. ՀԲ. Տարեգլուխ անկոց. ՏՃ. Պերաթ կիճեսի.	15	73
19	7	* ԴՇ. Բ. օր Մնդեան. ԳՆ*. Յովհաննու Կարապետին.	16	74
		Տար. Ծննդեան Օգոս. Սուրբան Համիս Բ. Կայսեր Թուրքիոյ		

		ՅՈՒՆՈՒԱՐ	
Լ	Օ	Տ	Գ
20	8	17	75
21	9	18	76
22	10	19	77
23	11	20	78
24	12	21	79
25	13	22	80
26	14	23	81
27	15	24	82
28	16	25	83
29	17	26	84
30	18	27	85
31	19	28	86
1	20	29	87

		ԲԱՄԱԶԱՆ	
Լ	Օ	Տ	Գ
2	21	30	88
3	22	1	89
4	23	2	90
5	24	3	91
6	25	4	92
7	26	5	93
8	27	6	94
9	28	7	95
10	29	8	96
11	30	9	97
12	31	10	98



Լ 0

Տ Թ



Փ Ե Տ Ր Ո Ւ Ա Ր

ՕՐ 28

ՏՃ. Շուշար

13	1	ՇԲ.	11	99
14	2	ՔԱՌԲ. Յ՝. Տեառնընդառաջ, ԼԳ. Եօ- Յանաններորդ կիւրակէ:	12	100
15	3	ԲՇ.	13	101
16	4	ԳՇ. Հբ. Փոխր Շեֆեր պայրաւը:	14	102
17	5	ԳՇ.	15	103
		⊕ Պր. Լու. ժ. 18, ր. 31.		
18	6	ԵՇ. Ի Զուկն ժ. 16, ր. 34. ՏՃ. Պուրճի Հուր	16	104
19	7	ՈՒՐ. ՏՃ. ձկնրէի կզվեղ պե հալա. օր իջանեղոյ ջերմութեան արեւոյ յօդս:	17	105
20	8	ՇԲ. Սուրբ Սարգիս, Յ՝. Երկուց Թէո- դորոսաց վկայից:	18	106
21	9	ՔԱՌԲ.	19	107
22	10	ԲՇ. Յ՝. Ղարալանգոսի քահանային:	20	108
23	11	ԳՇ.	21	109
24	12	ԳՇ. ԼԳ. Մատաթիայ առաքելոյն: ՇՎ. ր. Բն. ժ. 14, ր. 20.	22	110

Լ 0

ՇԷՎՎԱԼ

Տ Գ

25	13	ԵՇ.	23	111
26	14	ՔԱՌԲ. Տեառնընդառաջ, ՏՃ. ձկնրէի ասկի. օր իջանեղոյ ջերմութեան ա- րեւոյ ի ջուրս:	24	112
27	15	ՇԲ. Յ՝. Յիշատակ մեռելոց:	25	113
28	16	ՔԱՌԲ. ԼԳ. Բոնն բարեկենդան:	26	114
	17	ԲՇ. ԼԳ. Մարտ, ՏՃ. Գասըր կիճկսի:	27	115
	18	ԳՇ.	28	116
	3	19. ԳՇ. ԼԳ. Օր մոխրոց: ⊙ Մն. Լու. ժ. 19, ր. 50.	29	117
4	20	ՔԵՇ. Յիշատակ մեռելոց, ՏՃ. Շեվկալ (օր 30). Բաւազան Պայրաւը 3 օր:	1	118
5	21	ՈՒՐ. Յ՝. Տիմոթէոսի, Եւստամէոսի ճըզ- նաւորացն, ՏՃ. ձկնրէի սալիս վիւղ քիւրապ. օր իջանեղոյ ջերմութեան արեւոյ ի հողն: Հբ. Վե Աղար:	2	119
6	22	ՇԲ. Յ՞ Տար. Գան. Աղեփանդ Թագ. Սեպիոյ:	3	120
7	23	ՔԱՌԲ. Բոնն Բարեկենդան, Եւ Յո- նաց, ԼԳ. Թովմայի Ազովնացոյն:	4	121
8	24	ԲՇ. Յ՝. Գիւս զկայ Յովնաննու Կա- րապետին:	5	122
9	25	ԳՇ. ՏՃ. Էվվիկի պէրս-իւլ-անուզ, սկիզ- բըն ցրոնյն պսոռաւանց, որ սեւեհ կօրն իւր եւ ուր զիւր:	6	123
	10	26. ԳՇ.	7	124
	11	27. ԵՇ.	8	125
	12	28. Յ Ան. Բն. ժ. 19, ր. 52.	9	126
		ՈՒՐ.		



Մ Ա Ր Տ

ՕՐ 31

Տճ. Մարթ


Ն	Օ	Տ	Գ
13	1	10	127
14	2	11	128
15	3	12	129
16	4	13	130
17	5	14	131
18	6	15	132
19	7	16	133
20	8	17	134

ՏՐ.
 ՃԿԵՐ. 53⁰ Տար. Եննդ. Ումպերթ Թագ. Իսպիոյ.
 ԲԵ. ՏՏ. Ախրըր պիտհիւղ-անուգ. Վերջ գրոյն պառաւանց.
 ԳԵ.
 ԴԵ.
 ԵՇ. Հր. Փուրխ, (Եհիեր Պայրաւը), or 2.
 ՈՒՐ. Յ. Գիւտ նշխարաց Յովհաննու կարապետին. Լ. Յովսէփայ Ասուածաճօրն. ՏՏ. Ախրըր խանսիչև, վերջ յիսուն աւուրց երկրորդի մա. սին ձևերան.
 ՅԵՏԻՆ Լ. Ր. Վ. յ. 5, ր. 18.
 ՏՐ. Գարնանամուտ եւ հասարակած. տիւ եւ զիշեր հաւասարին. ՏՏ. Իրի-սաղը ռեպիի. Պր. Նեկիրուգ, որ է

ԶԻԼԳԱՏԷ

Ն	Օ	Տ	Գ
21	9	18	135
22	10	19	136
23	11	20	137
24	12	21	138
25	13	22	139
26	14	23	140
27	15	24	141
28	16	25	142
29	17	26	143
30	18	27	144
31	19	28	145
	120	29	146
	221	30	147
32	22	1	148
4	23	2	149
5	24	3	150
6	25	4	151
7	26	5	152
8	27	6	153

նոր օր արխայական եւ է Պայրաւ.
 Ի Խոյն ժ. 15, ր. 47.
 ՏՏ, Պուրհի Համէլ
 ՃԿԵՐ. Յ. Բաւասուն մանկանց. Լ. Բէնեդիկտոսի արքային.
 ԲԵ.
 ԴԵ.
 ԴԵ.
 ԵՇ. Լ. Աւետունն.
 ՈՒՐ.
 Յ. Վ. Բ. յ. 1, ր. 33.
 ՏՐ. Հր. Ապիպ, որ է զարնանանու յ յ. 00, ր. 51.
 ՃԿԵՐ.
 ԲԵ.
 ԴԵ. Յ. Կիւրդի Երուսաղիմայ հայրապետին.
 ԴԵ.
 ԵՇ. Լ. Ապրիլ.
 ՈՒՐ.
 Յ. Չն. Չասկական Լ. յ. 11, ր. 58.
 ՏՐ. ՏՏ. Զիլգասկ (or 30). Հր. Նիսան (or 30).
 ՃԿԵՐ.
 ԲԵ. Լ. Վիլհելմիոսի Ֆերերան.
 ԴԵ. Յ. Աւետունն.
 ԴԵ. Յ. Տն ամենայն երկնային զօրաց.
 ԵՇ.

Լ	Օ	ԱՊՐԻԼ	Տ	Գ
9	28	ՈՒՐ. 62 ⁰ Տար. Ծննդ. Լեօբոյճ Բ. Թագ. Պէլիքայի.	7	154
10	29	✠ԵՐ. Յ Առ. Բռ. ժ. 11, ր. 10.	8	155
11	30	✠ԿԵՐ. ԲԵ.	9	156
12	31		10	157
				
ԱՊՐԻԼ				
ՕՐ 30				
ՏՃ. Նիսան				
13	1	ԴԵ.	11	158
14	2	ԴԵ.	12	159
15	3	ԵՇ.	13	160
16	4	ՈՒՐ.	14	161
17	5	ԵՐ. Հր. Պսակ (Խաճախուղ Պայրս- մը), 8 օր. ⊕ Աւագ Լր. Լու. ժ. 13, ր. 47.	15	162
18	6	✠ԿԵՐ. Լր. Զատիկ.	16	163
19	7	✠ՍԻԱԳ ԲԵ. Աւետուհի Ս. Աստուա- ձածիկ.	17	164

Լ	Օ	ՉԻԼԸԻՃՃԷ	Տ	Թ
20	8	ԱՒԱԳ ԴԵ. 58 ⁰ Տար. Ծննդ. Կարոյ Թագ. Ռումանիոյ. Ի Զուլն ժ. 1, ր. 38. ՏՃ. Պարճի Սէլէր	18	165
21	9	ԱՒԱԳ ԴԵ.	19	166
22	10	✠ՍԻԱԳ ԵՇ. Տօն Ս. Հաղորդութեան. 31 ⁰ Տար. Գահ. Կարոյ Թագ. Ռումանիոյ.	20	167
23	11	ԱՒԱԳ ՈՒՐ.	21	168
24	12	ԱՒԱԳ. ԵՐ. Ճրագալոյց Զատիկ. ⊕ Վր. Բռ. ժ. 10, ր. 18.	22	169
25	13	✠ԿԵՐ. ՉՍԻԿ. Եւս Յ՛. Լր. Մարկոսի Աւետարանիչին.	23	170
26	14	✠ԲԵ. Բ. օր Զատիկ. ՏՃ. Զայր Քուր- բունասը.	24	171
27	15	✠ԴԵ. Գ. օր Զատիկ.	25	172
28	16	ԴԵ.	26	173
29	17	ԵՇ.	27	174
30	18	ՈՒՐ. Յ՛. Տօն Պաղլլը Սյազմային.	28	175
	19	ԵՐ. Լր. Մայիս եւ տօն Առաքելոցն Փի- լիպոսի եւ Յակոբայ.	29	176
	20	✠ԿԵՐ. ⊕ Ծն. Լու. ժ. 3, ր. 54.	30	177
	21	ԲԵ. Լր. Գիւտ Խաչ. ՏՃ. ՋիլնկճճԿ (օր 29). Հր. Եսռ (օր 29).	1	178
	22	ԴԵ.	2	179
	23	ԴԵ. Յ՛. Ս. Գէորգ. ՏՃ. Խրօրկեղ.	3	1

ՄԱՅԻՍ		Տ	Գ
6	24 ԵՇ.	4	2
7	25 ՈՒՐ.	5	3
8	26 ՇՐ.	6	4
9	27 ✠ԿԻՐ. ՅՆ. Շմառնի ազգականին Գրիտոսի.	7	5
Ⓢ Առ. Բռ. ժ. 23, ր. 23			
10	28 ԲՇ.	8	6
11	29 ԳՇ.	9	7
12	30 ԴՇ. ՅՆ. Յակոբայ Առաքելոյն եւ եղբորն Յովհաննու Աւետարանչին, ՏՃ. Գուրպան Պայրաւր, 4 օր.	10	8

Մ Ա Յ Ի Ս		Տ	Գ
ՕՐ 31			
Տճ. Մայրս			
13	1 ԵՇ.	11	9
14	2 ՈՒՐ. ՅՆ. Գիւտ նշխարաց Սրբոյն ԱՅճանասի Հայրապետին.	12	10
15	3 ՇՐ.	13	11
16	4 ✠ԿԻՐ. Հր. Երկրորդ Խառնուսոց.	14	12
Ⓢ Ար. Աս. ժ. 20, ր. 51.			
17	5 ԲՇ.	15	13

ՄՈՒՀԱՐՐԷՍ		Տ	Խ
11 ⁰ Տար. Ծննդ. եւ Գահ. Ալժօնս Ժ.Գ. Թագ. Սպայնիոյ.			
18	6 ԳՇ. 29 ⁰ Տար. Ծննդ. Նիզովա Բ. Կայսեր Ռուսիոյ.	16	14
19	7 ԴՇ. ՅՆ. Կիսապէնտէկոսէ.	17	15
20	8 ԵՇ. ՅՆ. Յովհաննու Աւետարանչին, Հր. Լաղղաւներ.	18	16
21	9 ՈՒՐ. ՅՆ. Եսայեայ Տարգարէին. յերկաւորն ժ. 2, ր. 49. Տճ. Պուրնի ձեղգա	19	17
22	10 ՇՐ.	20	18
23	11 ✠ԿԻՐ. Տօն Երեւման Սրբոյ Խաչի. Ⓢ Ար. Բռ. ժ. 21, ր. 22.	21	19
24	12 ԲՇ. 78 ⁰ Տար. Ծննդ. Վիգորիա Թագուհւոյն Անգլիոյ.	22	20
25	13 ԳՇ.	23	21
26	14 ԴՇ.	24	22
27	15 ԵՇ. Ար. Համբարձումն.	25	23
28	16 ՈՒՐ.	26	24
29	17 ՇՐ.	27	25
30	18 ✠ԿԻՐ.	28	26
31	19 ԲՇ. Ⓢ Ծն. Աս. ժ. 19, ր. 3.	29	27
1	20 ԳՇ. Ար. Յունիս. ՏՃ. Մուհարրիւ (օր 30) եւ սարեմուս 1315 բուսկանի նոցա. Հր. Սիվան (օր 30).	1	28
2	21 ԴՇ. ՅՆ. Կոստանդիանոսի եւ Հեղինեայ.	2	29

ՄԱՅԻՍ

Լ	Օ	Տ	Խ
3	22	3	30
4	23	4	31
5	24	5	32
<p>✠ՆՇ. Համբարձունն Գրիստոսի, Եւս Յն, ՈՒՐ. ՇԲ. Ելատեղ, 34⁰ Տար. Գան. Ժորժ. Ա. Թագ. Յունասանի.</p>			
6	25	6	33
<p>✠ՆՈՐ. Բ. Ծաղկագարդ, ԼԴ. Հոգեգալուստ, Հր. Սալվօթ կամ Պենեկոստե, (Կիւլ Պայրատը), 2 օր:</p>			
7	26	7	34
8	27	8	35
<p>ՐՇ. ԳՇ. ☉ Առ. Գռ. ժ. 8, ր. 55.</p>			
9	28	9	36
10	29	10	37
<p>ԴՇ. Երկնային Վիճակ, ՏՃ. Աշուրե կիւնիւ:</p>			
11	30	11	38
12	31	12	39
<p>ՈՒՐ. ԼԴ. Բառնարայ Առաքելոյն, ՇԲ.</p>			




ՅՈՒՆԻՍ

ՕՐ 30

ՏՃ. Հագիրան

Լ	Օ	Տ	Խ
13	1	13	40
<p>✠ՆՈՐ. Հոգեգալուստ, Պենեկոստէ, Եւս Յն, Կիւլ բանայրոյր, ԼԴ. Տօն Ամենասուրբ Երրորդութեան Եւ Անտօնի Պատուացելոյն:</p>			
14	2	14	41
<p>ՐՇ. 9⁰. Տարեդարձ Գան. Թօնն Թագ. Պալիէրայի:</p>			
15	3	15	42
<p>ԳՇ. 9⁰. Տար. Գան. Կիլեօժ Գ. Կայսեր Գերմանիոյ. ☉ Լր. Լս. ժ. 3, ր. 34.</p>			
16	4	16	43
17	5	17	44
<p>ՆՇ. ԼԴ. Տօն Խորհրդոյ Ս. Հաղորդութեան, Կիւլ բանայրոյր:</p>			
18	6	18	45
19	7	19	46
20	8	20	47
<p>✠ՆՈՐ. ՅՆ. Բարեկենդան Առաքելոյ:</p>			

Լ	Օ	ՅՈՒԼԻՍ	Տ	Խ
		60 ⁰ . Տար. Գահ. Վիգորիա Թագուհւոյն Անգլիոյ :		
21	9	ԲՇ. Յ՛. Պահք Առաքելոց (օր 20): Ա- մանամուտ եւ արեւադարձ խնցզե- տ-նի, ցերեկն սկսանի կարճանալ եւ գի- շերն երկարիլ: Տճ Ինգլայք սայֆի, սկիզբն առասուրբանն ջուրցն Նեղո- սի (Նիլ միւլպարկի): Ի Խնցզեհիմն, ժ. 10, ր. 55 :	21	48
22	10	ԳՇ. Տճ. Պուրհի Սեւեբան: Շ Վր. Բռ. ժ. 9, ր. 48 :	22	49
23	11	ԳՇ. Յ՛. Բարդուղիմէոսի Առաքելոյն:	23	50
24	12	ԵՇ. Յ՛. Ծնունդ Յովհաննու Մկրտչին:	24	51
25	13	ՈՒՐ. ԼԴ. Տճն սրտին Յիսուսի:	25	52
26	14	ՃՇԲ.	26	53
27	15	ՃԿԲ.	27	54
28	16	ԲՇ. 60 ⁰ . Տար. Թագադր. Վիգորիա Թագուհւոյն Անգլիոյ :	28	55
29	17	ԳՇ. ԼԴ. Առաքելոցն Պետրոսի եւ Պո- ղոսի:	29	56
30	18	ԳՇ. Շ Ծն. Լւ. ժ. 9, ր. 15 :	30	57
1	19	ԵՇ ԼԴ. Յուլիս (օր 31): Տճ. Սկֆկր (Օր 29), Հբ. Թամուզ (Օր 29):	1	58
2	20	ՈՒՐ. ԼԴ. ԱյցելուԹ. Ս. Աստուածածնի:	2	59
3	21	ՇԲ.	3	60

Լ	Օ	ՍԷՅԷՐ	Տ	Խ
4	22	ՃԿԲ. 120 ⁰ . Տար. Միացեալ Նահանգաց Ամերիկայի :	4	61
5	23	ԲՇ. Յ՛. Արեշ կիճեւի:	5	62
6	24	ԳՇ. Յ՛. Ծնունդ Յովհանն. Կարապետին:	6	63
7	25	ԳՇ. Շ Առ. Բռ. ժ. 16, ր. 47 :	7	64
8	26	ԵՇ.	8	65
9	27	ՈՒՐ.	9	66
10	28	ՃՇԲ.	10	67
11	29	ՃԿԲ. Յ՛. Առաքելոցն Պետրոսի եւ Պղոսի:	11	68
12	30	ԲՇ. Յ՛. Երկոտասան Առաքելոց:	12	69
				
ՅՈՒԼԻՍ ՕՐ 31 Տճ. Թեմուզ				
13	1	ԳՇ.	13	70
14	2	ԳՇ. Յ՛. Գիւտ տփոյ Ս. Աստուածածնի: Շ Լր. Լւ. ժ. 11, ր. 21 :	14	71
15	3	ՃԵՇ.	15	72

Լ Օ		ՅՈՒԼԻՍ	Տ Խ	
16	4	ՈՒՐ. ԼԴ. Տճն հանդերձից Ս. Աստուածածնի:	16	73
17	5	ՇՐ.	17	74
18	6	ՃԿԻՐ.	18	75
19	7	ԲՇ. ՅՆ. Սրբուհոյն Կիրակեայ:	19	76
20	8	ԳՇ. ԼԴ. Մարգարիտայ կուսին:	20	77
21	9	ԳՇ.	21	78
	10	⊕ Վր. ԳՈ. ժ. 23, ր. 52:		
22		ԵՇ. ԼԴ. Մարիամու Մագդաղինացոյն, յԱռիժն ժ. 22, ր. 3: ՏՏ. ՊՈՐՏԻ ԷՍԷՍ:	22	79
23	11	ՈՒՐ. ՅՆ. Եւփիսեայ կուսին:	23	80
24	12	ՇՐ.	24	81
25	13	ՃԿԻՐ. ԼԴ. Յակոբայ Առաքելոյն:	25	82
26	14	ԲՇ. ԼԴ. Աննայի մօր Ս. Աստուածածնի:	26	83
27	15	ԳՇ.	27	84
28	16	ԳՇ.	28	85
29	17	ԵՇ. ՅՆ. Մարիանեայ կուսին: ԼԴ. Մար- Սայի բեռն Ղազարու: ՏՏ. Էվլիկի էյեաւ իւլ պահուր. սաւ Էեղի: ⊕ ԵՆ. ԼԱ. ժ. 22, ր. 27:	29	86
30	18	ՈՒՐ. ՏՏ. Բեյիւլ էվլիկ (Օր 30), ՀԵ. ԱՔ (Օր 30):	1	87
31	19	ՇՐ.	2	88
1	20	ՃԿԻՐ. ՅՆ. Եղիայ մարգարէին: ԼԴ. Օգոստոս:	3	89
2	21	ԲՇ.	4	90
		39 ⁰ . ՏԱՐ. ԵՆՆՂ. Էմմա Թագուհոյն Հոլանսայի:		

Լ Օ		ՐԷՊԻԻԼ ԷՎՎԷԼ	Տ Խ	
3	22	ԳՇ. ՅՆ. Մարիամու մագդաղինացոյն եւ գիւտ նշխարաց Փոկասու հայրպետին:	5	91
4	23	ԳՇ. ԼԴ. Սրբոյն Դոմինիկոսի:	6	92
5	24	ԵՇ. ՏՏ. Ախրոր էյեաւ իւլ պահուր, վերջ աւուրց շնիկ սասեղն:	7	93
6	25	ՈՒՐ. ՅՆ. Աննայի մօր Ս. Աստուածածնի: ԼԴ. Վարդավառ: ⊕ ԱՌ. ԳՈ. ժ. 00, ր. 11:	8	94
7	26	ՇՐ. ՅՆ. Սրբուհոյն Պարսագեւեայ:	9	95
8	27	ՃԿԻՐ. ՅՆ. Պանդալիոնի բժշկին:	10	96
9	28	ԲՇ.	11	97
10	29	ԳՇ. ԼԴ. Լաւրէնտիոսի վկային: ՏՏ. Միկլուսը շերիֆ:	12	98
11	30	ԳՇ. ՅՆ. Շիղայի առաքելոյն: ԼԴ. Ֆի- լոմէնայ կուսին:	13	99
12	31	ԵՇ. ՅՆ. Բարեկենդան Ս. Աստուածածնի ⊕ ԼՐ. ԼԱ. ժ. 21, ր. 28	14	100





ՕԳՈՍՏՈՍ

ՕՐ 31

ՏՃ. Ավուսուս

Լ	Օ		Տ	Գ
13	1	ՈՒՐ.	15	101
14	2	ՇԲ.	16	102
21 ⁰ Տար. Ծննդ. Աղեհամեր Թագ. Սեպիոյ .				
15	3	ՃԿԻՐ. ԼԴ. Աստուածածին.	17	103
16	4	ԲՇ.	18	104
17	5	ԳՇ.	19	105
18	6	ԴՇ. ԳՆ. Վարդավառ.	20	106
67 ⁰ Տար. Ծննդ. Ֆրանս Եղեմ Ա. Կայսեր Աւսրիոյ .				
19	7	ԵՇ.	21	107
20	8	ՈՒՐ.	22	108
Ը Վ. ր. ր. ձ. 15, ր. 39 .				
21	9	ՇԲ.	23	109
22	10	ՃԿԻՐ.	24	110
23	11	ԲՇ.	25	111
Ի Կոյսն ձ. 5, ր. 29 . ՏՃ. պուրեի Սրւմպիւէ				

ՐԷՊԻԻԼ ԱԽԸՐ

Լ	Օ		Տ	Թ
24	12	ԳՇ. ԼԴ. Բարժուղիմէոսի առաքելոյն.	26	112
25	13	ԳՇ.	27	113
26	14	ԵՇ.	28	114
27	15	ՈՒՐ. ԳՆ*. Աստուածածին.	29	115
28	16	ՇԲ. ԼԴ. Սրբոյն Օգոստինոսի. ⊕ Ծն. Լ. u. ձ. 10, ր. 50 .	30	116
29	17	ՃԿԻՐ. Վերափոխումն Ս. Աստուածածինի. ԼԴ. Գլխատունն Յովհաննու Սրկըրոսին. ՏՃ. Բեպիւղ ախլըր (Օր 29). Հր. Իլուլ (Օր 29).	1	117
30	18	ՃԲՇ. Բ. օր Վերափոխման. ԼԴ. Սըրբուհւոյն Տոզաւ.	2	118
31	19	ԳՇ. Տար. Գահ. Վեհ. Սուրբան Համիս Բ. Կայսեր Թուրքիոյ .	3	119
1	20	ԳՇ. ԼԴ. Սեպտեմբեր .	4	120
2	21	ԵՇ. ԳՆ. Թաղէոսի առաքելոյն.	5	121
3	22	ՈՒՐ.	6	122
4	23	ՇԲ. ԳՆ*. Է. օր Վերափոխման. ⊕ Ա. ռ. ր. ձ. 8, ր. 7 .	7	123
5	24	ԿԻՐ.	8	124
6	25	ԲՇ.	9	125
7	26	ԳՇ.	10	126
8	27	ԳՇ. ԼԴ. Ծնունդ Ս. Աստուածածնի.	11	127
9	28	ԵՇ.	12	128
10	29	ՈՒՐ. ԳՆ*. Գլխատունն Յովհաննու Կարապետին.	13	129
11	30	ՇԲ.	14	130
⊕ Լ. ր. Լ. u. ձ. 9, ր. 58 .				
12	31	ՃԿԻՐ.	15	131



ԱՆՊՏԵՄԲԵՐ

ՕՐ 30

ՏՃ Իյուլ

Լ	Օ	Տ	Խ
13	1	16	132
14	2	17	133
15	3	18	134
16	4	19	135
17	5	20	136
18	6	21	137
19	7	22	138
20	8	23	139
21	9	24	140
22	10	25	141
23	11	26	142

1 **ԲՇ. Յ՝.** Սիմէոնի Սիւնակեցի.

2 **ԳՇ. Լ՝.** Խաչվերաց.

3 **ԴՇ.**

4 **ԵՇ.**

5 **ՈՒՐ.**

6 **ՇՐ. Յ՝.** Միքայէլի-Հրեշտակապետին.
38⁰ Տար. Գան. Օսկար Բ. Թագ.
Շուէտ Լորվէկիոյ.

7 **ՃԱՐ.**
Շ Վր. Բն. ժ. 8, ր. 38.

8 **ՃԱՇ. Ծնունդ Ս. Աստուածածնի յԱն-
նայէ. Եւս. Յ՝.**

9 **ԳՇ. Լ՝.** Մատթէոսի Աւետարանչին.

10 **ԴՇ.**

11 **ԵՇ.** Աշնանամուտ եւ հասարակած. տիւ
եւ զիշեր հաւասարին. ՏՃ. Իրիսալը
հատիճի, սկիզբն նուազուժեան շուրջն
Նեղոսի.

Լ	Օ	Տ	Խ
ՃԷՄԱԶԻԼ ԷՎՎԷԼ			
Ի ԿԵՒՈՆՃ. ժ. 3, ր. 11.			
ՏՃ. Պուրճի Միգամ			
24	12	27	143
25	13	28	144
26	14	29	145
● ԾՆ. Լս. ժ. 22, ր. 13.			
27	15	1	146
● ՃԱՇ. Տօն Խաչի. ՏՃ. ձեւագիլ կվկիլ (Օր 30). Հր. Թըրի (Օր 30) եւ արեւ- մուտ 5658 քուակակի ևնցա.			
28	16	2	147
ԳՇ. 34 ⁰ Տար. Ծննդ. Բարլոս Ա. Թագ. Փոքրուգայի.			
29	17	3	148
30	18	4	149
1	19	5	150
2	20	6	151
3	21	7	152
● Ան. Բն. ժ. 17, ր. 7.			
4	22	8	153
5	23	9	154
6	24	10	155
7	25	11	156
8	26	12	157
9	27	13	158
10	28	14	159

1 **ԲՇ. Յ՝.** Սիմէոնի Սիւնակեցի.

2 **ԳՇ. Լ՝.** Խաչվերաց.

3 **ԴՇ.**

4 **ԵՇ.**

5 **ՈՒՐ.**

6 **ՇՐ. Յ՝.** Միքայէլի-Հրեշտակապետին.
38⁰ Տար. Գան. Օսկար Բ. Թագ.
Շուէտ Լորվէկիոյ.


7 **ՃԱՐ.**
Շ Վր. Բն. ժ. 8, ր. 38.

8 **ՃԱՇ. Ծնունդ Ս. Աստուածածնի յԱն-
նայէ. Եւս. Յ՝.**


9 **ԳՇ. Լ՝.** Մատթէոսի Աւետարանչին.

10 **ԴՇ.**


11 **ԵՇ.** Աշնանամուտ եւ հասարակած. տիւ
եւ զիշեր հաւասարին. ՏՃ. Իրիսալը
հատիճի, սկիզբն նուազուժեան շուրջն
Նեղոսի.

ՀՈԿՏԵՄԲԵՐ		Տ	Թ
11	29	15	160
<p>ԲԵ. Հր. Սաֆֆօր, Գաւրջ Պայրաւը . Թ Լր. Լս. ծ. 1, ր. 24.</p>			
12	30	16	161
<p>ԳԵ. Հր. Ծով վասն ապակեան Գորոշ- կայ ուղւոյ Ափիկանայ .</p>			
			
ՀՈԿՏԵՄԲԵՐ			
ՕՐ 31			
ՏՃ, Թըշրիճի եկվեղ			
13	1	17	162
14	2	18	163
15	3	19	164
16	4	20	165
17	5	21	166
18	6	22	167
19	7	23	168
<p>ԳԵ. ՅՆ. Անանեայ առաքելոյն . ԵՇ. ԵՆ. Թերեզայ կուսին . ՈՒՐ. Լր. Թերեզայ կուսին . ՇՐ. ԵՆ. Թովմայի առաքելոյն, Լր. Ղու- կասու Աւետարանչին . ԳԵ. 9⁰ Տար. Գան. Քարթուս Ա. Թագ. Փորթուգալի . Ե Վր. Քն. ծ 1, ր. 51 :</p>			

ՃԷՄԱԶԻԼ ԱԽԸՐ		Տ	Գ
20	8	24	169
21	9	25	170
22	10	26	171
23	11	27	172
<p>ԳԵ. ԵՆ. Սրբոյն Տեառնեղբօր . ՈՒՐ. ՇՐ. Լր. Ռափայէլի հրեշտակապետին . Ի կարիճն ծ. 12, ր. 54 . ՏՃ. Պուրճի Ագրէպ</p>			
24	12	28	173
25	13	29	174
26	14	30	175
<p>ՔԿԻՐ. ԹՃ. Լս. ծ. 8, ր. 55 . ԳԵ. ՏՃ. ձեւագիյ ախր (օր 29) . Հր. Խհսուան (օր 30) .</p>			
27	15	1	176
28	16	2	177
29	17	3	178
30	18	4	179
31	19	5	180
1	20	6	181
2	21	7	182
<p>ԳԵ. Լր. Յիշատակ համօրէն ննչեցելոց . 3⁰ Տար. Գան. Նիգօլա Բ. կայսեր Ռուսիայ . Ծ Առ. Քն. ծ. 4, ր. 36</p>			
3	22	8	183
4	23	9	184
5	24	10	185
6	25	11	186
7	26	12	1
<p>ՔԿԻՐ. Գիւտ Խաչ. ՅՆ. Դեմետրեայ վը- կային. ՏՃ. Գաւրջ. Գաւրջ Փուր- բունաւը .</p>			
8	27	13	2

L O		ՆՈՅՆՄԲԵՐ	S	Գ
9	28	ԳՇ.	14	3
		⊕ Լր. Լս. ձ. 19, ր. 16.		
10	29	ԳՇ.	15	4
11	30	ԵՇ.	16	5
12	31	ՈՒՐ.	17	6
				
ՆՈՅՆՄԲԵՐ ՕՐ 30 Տճ Թըշրիևի սանի				
13	1	ՇՐ.	18	7
14	2	✠ՎԵՐ.	19	8
15	3	ԲՇ.	20	9
		34 ^o Տար. Գահ. Բրիսթիան Թագ. Տանիմարգայի.		
16	4	ԳՇ.	21	10
17	5	ԳՇ.	22	11
		⊕ Վր. Գն. ձ. 18, ր. 13.		
18	6	ԵՇ.	23	12
19	7	ՈՒՐ.	24	13
20	8	ՇՐ. ԳՆ*. Միբայէի հրեշտակապետին.	25	14
21	9	✠ՎԵՐ. Լր. Ընծայունն Ս. Աստուածանի.	26	15

L O		ՐԷՃԷՊ	S	Գ
22	10	ԲՇ. Լր. Չիչիլեայ կուսին. յԱղեղնաւորն ձ. 10, ր. 2. Տճ. Պուրնի Գավիս	27	16
23	11	ԳՇ.	28	17
24	12	ԳՇ. ԳՆ. Յովհաննու ողորմածին. ⊕ Ծն. Լս. ձ. 19, ր. 11.	29	18
25	13	ԵՇ. ԳՆ. Յովհաննու Ոսկերբանին եւ Քարեկենդան Ծննդեանն. Լր. Կատարինեայ կուսին. Տճ. Բեճեայ (or 30); Իւջ այլար.	1	19
26	14	ՈՒՐ. Տճ. Գանիշ կիճեւի. Հր. Քաշեւ (or 30).	2	20
27	15	ՇՐ.	3	21
28	16	✠ՎԵՐ. Լր. Ա. Կիւրակէ Գալստեան. ԳՆ. Մատթէոսի Աւետարանչին.	4	22
29	17	ԲՇ.	5	23
30	18	ԳՇ. Լր. Անդրէի Առաքելոյն.	6	24
1	19	ԳՇ. Լր. Դեկտեմբեր. ⊕ Առ. Գն. ձ. 18, ր. 2.	7	25
2	20	ԵՇ. 51 ^o Տար. Գահ. Ֆրանց Եօզեփ Կայսեր Աւսրոյ-Հունգարիոյ.	8	26
3	21	✠ՈՒՐ. Ընծայունն Սր. Աստուածանի. եւս ԳՆ*.	9	27
4	22	ՇՐ.	10	28
5	23	✠ՎԵՐ. Տճ. Եսթրաք skoffուի ֆուր- քունար.	11	29
6	24	ԲՇ. Լր. Նիկողայոսի Հայրապետին.	12	30
7	25	ԳՇ. ԳՆ. Նեքտարինեայ կուսին. Լր.	13	31

ԴԵԿՏԵՄԲԵՐ		Տ Գ	
1	0		
Սրբոյն Ամբրոսիոսի.			
8	26	14	32
9	27	15	33
Թ Լ. Լ. u. ժ. 14, ր. 27.			
10	28	16	34
ՈՒՐ.			
32 ⁰ Տար. Գահ. Լեօփօլս Բ. Թագ.			
Պէլնիգայի.			
11	29	17	35
12	30	18	36
✠ՇԲ.			
✠ԿԻՐ. Լ. Է. Անդրէի Առաքելոյն.			
			
ԴԵԿՏԵՄԲԵՐ			
ՕՐ 31			
ՏՃ Քեսանուռնի կվվել			
13	1	19	37
14	2	20	38
15	3	21	39
16	4	22	40
17	5	23	41
Ը վ. ր. Քն. ժ. 8, ր. 41.			

ՇԱՊՈՆ		Տ Գ	
1	0		
18	6	24	42
ՇԲ. ՅՆ. Նիկողայոսի հայրապետին.			
Տօն անուան Նիգօլա Բ Կայոնք			
Ռուսիոյ.			
19	7	25	43
20	8	26	44
21	9	27	45
✠ԿԻՐ.			
ԲՇ. Հ. Է. Գանսիլ Գայրաւր.			
✠ԳՇ. Յղուծիւն Սր. Աստուածածնի.			
Լ. Թովմայի Առաքելոյն. Չմեռնա-			
մուտ եւ արեւադարձ Այծեղջեր. ցե-			
րեկն սկանի երկարի եւ գիշերն			
կարճանալ. ՏՃ. Միրան կիճեւի, ին-			
գլուսալը շիբեվի կաւ կվվելի ար-			
պաիւն, որ է սկիզբն քառասուն ա-			
ւուրց առաջնոյ մասին ձմեռան. Գա-			
րագրը. Կիւն Տեօնիւմիւ Քուրքու-			
նաւը.			
յԱյծեղջուրն ժ. 22, ր. 48.			
ՏՃ. Պուրճի ձեօք			
22	10	28	46
23	11	29	47
24	12	30	48
ԳՇ.			
ԵՇ.			
ՈՒՐ. ՅՆ. Սպիրիտոնի Եպիսկոպոսին.			
ԹՆ. Լ. u. ժ. 6, ր. 24.			
25	13	1	49
ՇԲ. Լ. Է. Ծնունդ Տեառն Յիսուսի. ՏՃ.			
Շապակ (or 29).			
52 ⁰ Տար. Ծննդ. Ժօրձ Ա. Թագ.			
Յունաստանի.			
26	14	2	50
✠ԿԻՐ. Լ. Է. Ստեփաննոսի Նախավկային			
Հ. Թեքեք (or 29).			
27	15	3	51
28	16	4	52
ԲՇ. Լ. Է. Յովնաննու Աւետարանչին.			
ԳՇ. Լ. Է. Մանկանցն Բեռնեմի.			

Լ Օ		ԴԵԿՏԵՄԲԵՐ	Տ Գ	
29	17	ԳՇ.	5	53
30	18	ԵՇ.	6	54
31	19	ՈՒՐ. ԼԴ. Սեղբեստրոսի Հռովմայ Հայրապետին.	7	55
Ⓞ Առ. ֆռ. ժ. 9, ր. 26.				
1	20	ՇԲ ԼԴ. Յռնուար եւ տարեմուտ 1898 թուականին եւ Տօն տնօրէնութեան Տեառն.	8	56
2	21	✠ԿԻՐ.	9	57
3	22	ԲՇ.	10	58
4	23	ԳՇ.	11	59
5	24	ԳՇ. Յ. ձրագալոյց Ծննդեան.	12	60
6	25	ԵՇ. Յ. Ծնունդ Տեառն Յիսուսի. ԼԴ. Յայտնութիւն Տեառն.	13	61
7	26	ՈՒՐ.	14	62
8	27	ՇԲ. Յ. Ստեփաննոսի նախազկային. Տճ. Պերսք կիճկսի.	15	63
Ⓞ Լր. Լս. ժ. 9, ր. 28.				
9	28	✠ԿԻՐ. Տար. Ծննդ. Օգոս. Սուրբան Համիս Բ. Կայսեր Թուրքիոյ. 19 ⁰ Տար. Գան. Ումպէրթօ Ա Թագ. Իսպիոյ.	16	64
10	29	ԲՇ.	17	65
11	30	ԳՇ.	18	66
12	31	ԳՇ.	19	67



ՅԱՌԻԵԼՈՒԱԾ

ՕՐԱՅՈՅՅԻ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԻՆ

1897



ՆՈՐ ՏԱՐԻ



Աւարտեցաւ 1896րդ տարին եւ ահա կը յաջորդէ անոր 1897 թուականը, որ մեր ժամանակաւոր կենաց վրայ կը յաւելու եղանակ մը՝ զոր նոր տարի կանուանեմք : Այս Նոր Տարին բարեբաստիկ, ուրախառիթ եւ երջանկաւէտ լինել կը բարեմաղթեմք համօրէն աշխարհի համար :

Սակայն ունիմք միտք որով կրնամք հայիլ ետ՝ եւ կրնամք հայիլ յառաջ, ուրեմն մինչ կը կանգնիմք նոր տարւոյ մը սեմոց վերայ՝ վայելուչ է հայեացք մը ձգել անցեալին, թե՛րեւս անոր մէջ պիտի տեսնենք ամեն մեկս մեր վարուց ու ընթացից մէջ այնպիսի բաներ որոց համար ցաւելով, պիտի ուզենք ներկային մէջ զգուշանալ : Խորատ առնելով անցեալէն ներկային համար :

Օրերն ու տարիները ո՛րքան արագութեամբ կանցնին, եւ մենք կը մերձենանք մեր ընթացից եւ գործոց հաշիւը տալու Ամենագէտ Արարչին: « Օրերս ոստայնանկին կկոցէն արագ կանցնին » ըսաւ Յօբ երանելին. կարծելու չենք որ մեր օրերը անոր օրերէն յամբ կանցնին. եւ յիշելու ենք թէ ոստայնանկին կկոցը ամեն մէկ անցնելուն գործուածքին վրայ թել մը կաւելցնէ, թէեւ մէկ թել մը ըստ երեւոյթին բան մը չէ, բայց գործուած կերպսին որպիսութիւնը թելերուն ձգուածքէն կախում ունի: Այսպէս մեր իւրաքանչիւր ժամուց, աւուրց եւ տարեաց անցքերուն պարտիմք զգուշութիւն ունենալ նայելով թէ անոնք ինչպէս կանցնին, բարի՞ թէ յոռի, Աստուածահաճո՞յ թէ մարդահաճոյ, ինչու որ « Ամեն մեկուն գործը յայտնի պիտի ըլլայ, քանզի օրը պիտի յայտնէ »: Ուրեմն ըսե՛մք Մովսիսի հետ, « Անանկ սորվեցուր մեզի մեր օրերը համբել, որ սրտի իմաստութիւն ստանանք »: Սաղմ. Դ. 12:

Բիւրակն

ՖԱՐԱՏԵՅՅԻ ԿՈՐՈՒՍԵԱԼ ԲԱԺԱԿԸ

Աւետարանի պաշտօնեայ մը հետեւեալ գեղեցիկ պատմութիւնն ըրած է ի պատասխանի այն ամբաստանութեան զոր մարդ մը կ'ընէր ընդդէմ քրիստոնէից՝ կոչելով զնոսա դիւրահաւատ անձինք որք կը հաւատան թէ Աստուած մեռելոց յարութիւն առնուլ պիտի տայ:

Հռչակաւոր քրիմիաբան Ֆարատէյի մէկ գործաւորն օր մը ղիպուածաւ արծաթեայ գեղեցիկ բաժակ մը ձգեց կուժի մը մէջ որ քրիմիական զօրաւոր թթու (acid) կը պարունակէր: Քիչ ժամանակի մէջ արծաթեայ բաժակն աներեւութացաւ՝ թթուին մէջ լուծուելով, ինչպէս շաքարը կը լուծուի ջրոյ մէջ, եւ այսպէս բոլորովին կորսուած կը թուէր: Արդ՝ խնդիր եղաւ թէ բաժակը կրնա՞ր վերստին գտնուիլ: Ո՞նն ըսաւ թէ կրնար զըտնուիլ, բայց ուրիշ մը պատասխանեց թէ քանի որ բաժակը լուծուած էր թթուին մէջ, կարելի չէր վերստին ձեռք բերել զայն: Սակայն մեծ քրիմիաբանը, որ անդ կեցած էր,

քիմիական բաղադրութիւն մը լեցուց թթուի ամանին մէջ, եւ քիչ յետոյ արծաթին իւրաքանչիւր մասնիկն ամանին յատակն իջաւ : Յարատէյ առաւ արծաթը որ անձեւ կոյտ մը եղած էր, եւ զայն զրկեց ոսկերչի մը որ նախկին բաժակին մեծութեամբ եւ ձեւով բաժակ մը շինեց այդ արծաթով :

Եթէ Յարատէյ կրնար այսչափ դիւրաւ ամանին յատակը հաւաքել արծաթը, եւ անոր ցրուեալ ու անտեսանելի մասնիկները ժողովելով շինել այն բաժակը զոր կը կազմէին այդ մասնիկները, ո՛րչափ աւելի դիւրաւ կըրնայ Աստուած մեր անկենդան եւ փճացեալ մարմինները փոխակերպել եւ Քրիստոսի փառաւոր մարմնոյն նմանցունել :

« ԵԹԷ ՀԱՅՐՍ ԲՈՒՆԷ ԶՆՈՒՔՍ »

Տասներեք տարեկան պատանի մը հանքի մը մէջ աշխատած ժամանակ ծանրապէս վիրաւորուեցաւ : Բժիշկը ծանոյց թէ նորա կեանքն ազատելու համար հարկ էր կատարել

վիրաբուժական դժուարին գործողութիւն մը : «Ուելի, կրնա՞ս դիմանալ ցաւին», հարցուց գլխասիրտ բժիշկը, երբ դիտեց թէ ի տես վիրաբուժական գործեաց՝ տղայն առժամապէս այլազունեցաւ : «Կրնամ դիմանալ, եթէ հայրս բռնէ ձեռքս», պատասխանեց տղան, եւ նոյնհետայն ճակատին դեղնութիւնն անհետացաւ : Հայրը զգալով թէ կարող պիտի չըլլար ակա՛նատես լինել իւր որդւոյն կրելիք ցաւոց, կը պատրաստուէր սենեակէն դուրս ելնել : սակայն երբ լսեց այս վերջնոյն խնդիրքը, մնաց նորա անկողնոյն մօտ, եւ բռնեց իրեն կարկառեալ ձեռքը մինչեւ որ վիրաբուժական դժնդակ գործողութիւնն աւարտեցաւ : Գործողութեան ժամանակ պատանւոյն բովանդակ կազմութիւնը մի քանի անգամ սարսռեցաւ, եւ այսպէս կ'երեւէր իբր թէ նա այլ եւս պիտի չկարենար տոկալ բուռն տաղնապնեւրուն : սակայն երբ ակնարկ մը կը նետէր իւր վրայ հակեալ գորովալիր դէմքին վրայ, եւ երբ կը զգար թէ իւր հօր ձեռք պնդիւ սեղմած էր իւր դողահար մատերը, նոր ոյժ կը ստանար, եւ կարող կը լինէր սերտիւ փակել

իւր շուրթներ եւ չթողուլ որ ցաւազին աղա-
 դակ մը ելնէր իւր բերանէն : « Եթէ կ'ուզես
 բոլոր զօրութեամբդ ճչէ », ըսաւ վիրաբոյժը .
 « Լացը կը հանգստացունէ զքեզ » : « Պէտք չէ
 լամ », պատասխանեց տղան , « մայրս հիւանդ
 պառկած է վերի սենեակին մէջ , եւ իմ լացի
 ձայնս անհանգիստ պիտի ընէ զնա » : « Քա՛ջ
 տղայ , դու հէք հանքագործաց ճակատագրէն
 աւելի լաւ բաղդի մը արժանի ես », գոչեց
 վիրաբոյժը՝ վէրքը փաթթելէն յետոյ : « Տա-
 ւին դիմանալու կարող պիտի չըլլայի , եթէ
 հայրս այնքան ամուր բռնած չըլլար իմ ձեռքս
 Եթէ ցաւին չզիմանալով աղաղակէի , պիտի
 տառապեցունէի հայրս՝ առանց կարենալու
 երբեք մեղմել իմ ցաւերը », ըսաւ Ուրիւ : « Ար-
 դարեւ , պէտք է խոստովանիմ թէ քեզմէ ա-
 ւելի կարիճ տղայ չեմ տեսած », ըսաւ ծերու-
 նի բժիշկը , սրբելով իւր աչքին մէջ շողացող
 արտասոււաց կաթիլ մը :

Ո՛րքան տագնապններէ զերծ պիտի լինէինք,
 եթէ կարենայինք պահել մեր ձեռքը մեր
 երկնաւոր Հօր ափին մէջ : Եթէ , փոխանակ
 խորհելու թէ Յիսուս աստղերէն անդին հե-

ռաւոր երկնից մէջ բազմած է , կարող լի-
 նէինք իրապէս զգալ թէ Նա մեր քովէն կը
 քալէ , այնչափ յաճախ պիտի չզեղեւէինք եւ
 տկարանայինք մեր կենաց ուղեւորութեան
 մէջ : Ինչպէս որ Քրիստոս Գալիլեայի ծովուն
 եզերքը կանգնած կը դիտէր փոթորկէն տա-
 բուբերեալ նաւը , եւ կը խորհէր իւր սարսա-
 փահար աշակերտաց վրայ որք խաւարին մէջ
 չէին ձանչեր զՆա , նոյնպէս ալ հիմա մեր
 քովն է , եւ նոյնքան յօժար է կարկառել իւր
 ձեռք :

ՄԱՏԱՂԱՀԱՍԱԿ ԱՆՁԻՆՔ ՇԱՏ ՔՆԱՆԱԼՈՒ
 ՊԵՏՔ ՈՒՆԻՆ

Գերման մասնագէտ Տր. Քոլտ մօտերս պատ-
 ճառաբանած է թէ մատաղահասակ անձինք
 պարտին աւելի քնանալ : Քաջառօղջ նորածին
 մանուկ մը ժամանակին մեծ մասը քնով կ'ան-
 ցունէ առաջին շաբաթուց մէջ . եւ մարդիկ
 մանկանց կանխադոյն տարեաց մէջ հակամէտ
 են թոյլ տալ նոցա քնանալ որչափ եւ կամին :

Բայց նոցա վեցերորդ տարիէն եօթներորդ տարին, երբ դպրոց երթալ կը սկսին, իրք բոլորովին կը փոխուին : Մասնուկը տասն տասնեւեկ տարեկան եղած ժամանակ կը քնանայ օրն ութ կամ ինն ժամ միայն, մինչ պէտք ունի գէթ տասն կամ տասնեւեկ ժամու քնոյ. եւ քանի որ աւելի մեծնայ, քնոյ ժամք կը կարճին : Տր. Քոլտ կը կարծէ թէ պատանի մը մինչեւ իւր քսաներորդ տարին պէտք ունի ինն ժամու քնոյ եւ չափահաս մը՝ ութ կամ ինն ժամու : Անբաւական քնոյ պատճառաւ Նղային դրութիւնը, եւ մանաւանդ ուղեղը, բաւական չհանգստանալով եւ դադարելով իւր բնական գործողութենէն, կը տեսնենք որ տեղի կ'ունենան տակաւ պարտասում, դիւրագրգռութիւն եւ մտաւորական անկարգութիւնք, փոխանակ գործասիրութեան, ընդհանուր բարելաւութեան եւ ձեռնարկու ոգւոյ :

ԵԼԻՑ ԳԻՐՔԻՆ ԶԱՓ ՀԻՆ ՅՈՐԵՆ

Ամերիկայի Մասաչուսէց նահանգին Փլիմըթ քաղաքը ներկայացուեցաւ տեսակ մը ցորեն որ Ելից Գիրքին չափ հին ցորենի սերմեր ցանկէ յառաջ եկած էր : Տավիտ Տրիւ անուն անձ մը Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը բնակող իւր մէկ բարեկամէն անցեալ տարի ընդունած ըլլալով ցորենի քանի մը հատիկներ որ Մեմփիսի աւերակաց մօտէն հանուած մումիայէ մը առնուած էր, եւ կը կարծուի թէ կը վերաբերի Եգիպտական Խններորդ Հարստութեան, եւ ուստի Քրիստոսէ իբր 3,000 տարի առաջ բուսած կամ իբր 5,000 տարուան ցորեն էր, այս սերմերը ցանեց անցեալ գարնան սկիզբները եւ խնամով պահպանեց զանոնք : Շուտով բուսաւ ցորենը, եւ հնձելու ժամանակ վեց ու կէսէն մինչեւ եօթը ոտք բարձրացած էր : Տերեւները ցողունին վրայ փոխադարձ կարգաւ շարուած էին հասարակ ցորենի նման, բայց բոյսին արդիւնքն էր ամենէն զարմանալի պարա-

դան . վասն զի փոխանակ մեր ժամանակի ցորենին , ցողնոյն վերի ծայրը կայ ծանր փունջ մը մանր ցողուններու փոխանակ մէկի , որ իւր ծանրութենէն ծռելով կը կախուի վար , եւ իւրաքանչիւրին վրայ խիտ առ խիտ լեցուն է հատիկներով որոց իւրաքանչիւրը ուրոյն կեղեւ ունի : Այս հնձուածէն աւելի շատ հունձ պիտի քաղուի յառաջիկայ տարի թէ՛ քանակութեամբ եւ թէ՛ ազնիւ յատկութեամբ , ինչպէս կը ցուցնէ այս փորձը :

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՔ

Աշխարհիս մէջ կան իբր 160 աւետարանական միսիոնարական ընկերութիւնք , որոց 40ը կանանց ընկերութիւնք են : Ամերիկայ ունի 60 այսպիսի ընկերութիւններ , Մեծն Բրիտանիա՝ 55 , Գերմանիա՝ 16 , Հոլանտա՝ 14 , Աւստրալիա՝ 4 , Տանիմարքա՝ 2 , Շուէտ՝ 2 , Ֆինլանտիա՝ 2 , Հարաւային Ափրիկէ՝ 2 , Զուլցեբրա՝ 1 , Գաղիա՝ 1 : Կան 2,800 ձեռնադրեալ եւ բժիշկ միսիոնարք .

գործաւոր եւ արհեստաւոր միսիոնարներն ի միասին հաշուելով 4,000ի կը հասնի այդ թիւը : Ամուրի միսիոնարուհիք եւ վարժուհիք 1,150 են : 1889ին աւետարանական քրիստոնեայք 228,000,000 դահ . ծախք ըրին առաքելութեանց համար : Միջին հաշուով այս գումարին 5 դահ .ը՝ իւրաքանչիւր աւետարանական Անգղիացին է վճարած , 2½ դահ .ը Գաղիացին , 2 դահ .ը՝ Ամերիկացին , 1 դահ .ը՝ Հոլանտացին , 35 փարան՝ Նորվեկիացին , 20 փարան՝ Գերմանացին եւ 5 փարան՝ Ռուսիացին : Ութեւտամերորդ դարուն մէջ եղած մի քանի փոքր սկզբնաւորութիւններն ի բաց թողլով դեռ 100 տարի չէ անցած սոյն ընկերութեանց ծագումէն ի վեր , եւ ի՛նչ է եղած արդիւնքը . 2,722,000 հեթանոսք դարձի են եկած , տղայքն ի միասին հաշուելով : Եթէ Ամերիկայի քրիստոնեայ գերիներն ի միասին առնունք , այս թիւը 4-5 միլիոնի կը հասնի : Առաքելութեանց միջոցաւ դարձի եկողներն յԱմերիկա եղած են 769,000 յԱսիա՝ 947,000 , յԱփրիկէ՝ 744,000 , յՈվկիանիա՝ 262,000 : Կան 30,000 բնիկ քարոզիչք :

ուսուցիչք եւ օգնականք : Դեռ կան մէկ երկիրիոն կռապաշտք յաշխարհի, ուստի 1,000 ոչ-քրիստոնէից միայն իբր Յը քրիստոնէութիւնն ընդունած են :

ՀԻՒԱՆԴԻ ՍԵՆԵԿԱՅ ՀԱՄԱՐ

Երբեք մի կանգնիր կամ նստիր հիւանդին անկողնոյն գլուխը կամ ուր նա պիտի ստիպուի դարձունել իւր աչքը զքեզ տեսնելու համար : Այնպիսի տեղ մը կեցիր ուր նա կըրնայ նայիլ երեսդ : Տեսած եմ զայնպիսիս որք կը մտնեն հիւանդին սենեակը սա սխալ մտածութեամբ թէ պիտի չգրաւեն ուշադրութիւն. բայց հիւանդք մասնաւոր զգայնութիւն մը ունին եւ կիմանան. թէ սենեակը մարդ մտած է թէպէտ չտեսնեն զնա . եւ ուստի կը դարձունեն իրենց գլուխը, կամ մինչեւ անգամ կը բարձրանան բարձին վրայ՝ ջանալով ստուգել թէ ո՛վ էր սենեակը մտնողը :

Փոքրիկ սեղանի մը վրայ փռէ ճերմակ լաթ մը եւ անոր վրայ դիր բաժակներ, դգալներ

եւ շիշեր : Այս պարտի լինել, եթէ հնար է, կից սենեկի մը մէջ, կամ եթէ յարմարութիւն չկայ, անկողնէն այնչափ հեռի՝ որչափ կարելի է : Միշտ մի եւ նոյն սպասները (սօֆրա քաղընը) գործածէ, ըստ կարի շուտ լուալով զայնս՝ գործածելէ ետքը, վասն զի եթէ այսպէս չընես, տասնէն ինը անգամուն սպասք, որոց պէտք կ'ունենաս, պիտի չկրնաս գտնել առձեռն . եւ այսպիսի ժամանակներու մէջ սպասելը տանջանք է : Աղէկ է միշտ առձեռն պատրաստ ունենալ անձեռոց մը կամ կակուղ թաշկինակ մը :

Խնդրէ բժշկէդ որ գրե իւր հրահանգները . մի՛ վստահիր յիշողութեանդ : Մեծ օգնութիւն պիտի գտնես առօրեայ արձանագրութիւն պահելով, թէ՛ քու անձնական օգտիդ համար եւ թէ՛ տղթորին տեղեկութիւն տալու համար : Օրինակի համար . կէս օրէն ետքը ժամ մէկ, սոչփարոյ . կէս օրէն ետքը ժամ երկու, եւ զին միս, թէյ :

Եթէ հիւանդը հանդարտ կը քնանայ, երբ դեղ կամ կերակուր տալու ժամը կու գայ, բաց ի յոյժ ծանրագոյն պարագաներէ, լաւա-

գոյն է չարթնցունել զնա , վասն զի քիչ դար-
մաններ քնոյ չափ օգուտ կը մատակարարեն :
Սակայն սա է կէտ մը զոր քու բժշկիդ անկ է
որոշել :

Ճշգրիտ հետեւէ բժշկին հրահանգաց :

ՅԿ ԱՅԼ ԱԿԻ

— Փորձառութիւնը կենաց վարժարանի ա-
ռաջնակարգ դասատուն է :

— Ագահը չքաւոր է առաւել քան զաղքատ :

— Հոգւոյն արժէքը Փրկչին արեան մէջ
որոնուելու է :

— Երջանկութեան հոգին կրօնն է :

— Քրիստոնեայն որքան մերձենայ մահուան
այնքան աւելի պայծառ կը տեսնէ աստուա-
ծային սիրոյ արեգակն . կը թուի նմա թէ յա-
ռաջ կ'ընթանայ հաճոյից գետէն առ ակն
բերկրանաց :

— Բարեկարգ ներկայն կը ծնի բարւոք ա-
պագայ :

— Հպարտութիւն ոտից տակ , խոնարհու-

թիւն ի սրտի եւ արդարութիւն ի ձեռին ու-
նենալով կարեմք հասնիլ յերկինս :

— Լեզուդ գործածելէ աւելի գրիչդ գործա-
ծելու զգոյշ լեր . զի լեզուի խօսածն կը մոռ-
ցուի իսկ գրչի գրածն անեղծանելի է :

— Դատարկապորտ անձինք խօսուն ար-
ձաններ են :

— Անձնասէրն մի բառ ունի յոյժ սիրելի եւ
այն է ես :

Ա. Ս. ԼԵՆԻՆԵԱՆ

ԴԱՏԱՍՏԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

Սպանիոյ Ֆիկուէրառ քաղաքին մօտ կը
բնակէր մի երկրագործ ընտանիք բրեք անդա-
մօք , հայր , եղբայր եւ քոյր : Զինուորա-
գրութեան վիճակը որդւոյն ելած ըլլալով ,
հայրը որոշեց 1,500 Քրանք վճարել եւ անոր
տեղ մի փոխանորդ գտնել : Առ այս ծախեց
նա մի քանի արջառ եւ զրամը տանը արկղը
դնելով որդւոյն հետ ճամբայ ելաւ ժէրոնա
քաղաքը երթալ փոխանորդը գտնելու համար ,

իւր դուստրը , Տոլորէզ , միայնակ տունը ձգելով : Բոլոր այս եղելութիւններն ուշի ուշով կը զննէր Թուլանու անուամբ մի դրացի , եւ հաղիւ թէ հայր ու որդի մեկնած էին քաղաքէն , ահա նա ծպտեալ եւ երեսը դիմակ մը դրած տունէն ներս կը մտնէ եւ դուռը կը պելլով խոհանոցը կը մտնէ , ուր Տոլորէզ կը գտնուէր : Սա ահաբեկեալ իւր տեղէն վեր կը ցատկէ եւ կուզէ օգնութեան աղաղակ բռնալ . սակայն դեռ բերանը չբացած՝ աւաղակը զնա կը բռնէ եւ սեան մը կը կապէ : Դաշոյնն Տոլորէզի գլխուն վրայ շողացնելով կատիպէ զնա ցոյց տալ այն տեղը ուր պահուած էր 1,500 Քրանքը : Տոլորէզ կը յայանէ տեղը , եւ աւաղակը կ'առնու դրամը եւ գրպանը կը լեցնէ : Օրիորդը հակառակ ծպտման կը ճանաչէ զիմակաւոր աւաղակը եւ կըսէ « Շատ մեծ անիրաւութիւն մ'է որ մեզի կընես . մինչ ցարդ իբր բարի դրացիներ միմեանց հետ կ'ապրէինք , եւ դու այժմ կու գաս կողոպտել զմեզ : »

« Դու կը ճանաչես զիս , » կը գոչէ աւաղակը :

« Անշուշտ , դու Թուլանոն ես : »

« Ահ , թշուառ աղջիկ , դու քու մահուան վճիռդ տուիր . որովհետեւ զիս ճանչցար , պէտք է որ մեռնիս , զի չեմ ուզեր որ կառավարութիւնն իմանայ եւ ես ի բանտ ձգուիմ : »

Տոլորէզ կ'ողբայ եւ կը խնդրէ խնայել իւր կենաց , եւ կը խոստանայ կառավարութեան իմաց չտալ :

« Ինչ որ քեզ համար կընամ ընել , » կըսէ աւաղակը , « այս է միայն . մահուանդ եղանակը դու ընտրէ . Ո՞րը կ'ընտրես , մորթուի՞լ , կախուի՞լ , թէ խեղդուիլ : »

Տոլորէզ կ'աղերսէ դառն արտասուօք խնայել իւր կենաց : Թուլանու անխախտ կը կենայ յիւր որոշման : Ուստի օրիորդը կը խնդրէ որ կախուելով մեռցուի , յուսալով որ նախապատրաստութեանց միջոցին թերեւս օգնութիւն ժամանէ : Թուլանու կը հրամայէ աղջրկան իւր աղօթքը կատարել եւ պատրաստուիլ մեռնելու . իսկ ինքը փոքրիկ աթոռ մը առնելով սենեակին մէջտեղը կը դնէ եւ վրան կանգնելով եւ չուանը գերանէ մը անցունելով կը պատրաստէ կախաղանը : Չուանը լաւ մը

կապելէն եւ գլուխը անցունելու համար օղակ մը շինելէն ետեւ կ'ուզէ կատարելապէս վրաստան ըլլալ թէ արդեօք սա իւր պաշտօն պիտի կատարէ՞ ճշդիւ . ուստի գլուխը օղակին մէջ կ'անցունէ : Յանկարծ ռախից տակի աթոռը կը գլորի եւ թուլանու գետնին եւ առաստաղին մէջ կախուած կը մնայ : Ի զուր կ'աշխատի ձեռքերով չուանը բռնել եւ գլուխը օղակէն ազատել . կ'աղաչէ որ Տոլորէզ իրեն օգնութեան հասնի , սակայն սա գետնին կապուած ըլլալով չկրնար տեղէն շարժիլ : Աւագակը կը ջանայ ակռաներով չուանը փրցունել , սակայն իւր ձեռքերը խածնելով զայնս արիւնչուայ կ'ընէ եւ երեսը կը ծածկուի ձեռքերէն վազած արեամբ :

Սոյն վայրկեանին տան բարեկամներէն մին հոն կը հասնի , եւ կը զարմանայ որ զուռը գոց է , կը բաղխէ բայց բացող չկայ : Մի քանի դրացիներ կը հասնին , որոց մէջ է նաեւ թուլանուի կինն . զուռը կը կոտրեն , եւ ինչ տեսարան կը բացուի սոցա աչաց . Տոլորէզ խոհատան սեան կնպեալ եւ նուաղեալ , եւ թուլանու կախեալ : Շուտով կը կտրեն չուանը

եւ անկենդան մարմինն յերկիր կը տապալի , որոյ գրպանէն ոսկիները գետինը կը թափին : Տոլորէզ սթափելով կը պատմէ զամենայն , որ տեղի էր ունեցած :

Այս յոյժ ազդու եւ հետաքրքրական պատմութիւնը վիպասանութիւն չէ , այլ նոր տեղի ունեցած իրական դէպք մը , որոյ վրայ բառ մը աւելցնել հարկ չէ զի անդ կը տեսնուի թէ « Տէրը գիտէ բարեպաշտները փորձութենէ ազատել » :

Հ Ե Ռ Ո՛Ւ Ի Բ Ա Ժ Ա Կ

1. Ե՛կ յըմպելեաց կենանք հեռի ,
Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ .
Չը գործածենք զինի , օղի ,
Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ .
Մեզ չէ պիտոյ , օգուտ չունի ,
Վնասը շատ է , վըտանդ ունի ,
Հեռո՛ւ բաժակ , հեռո՛ւ բաժակ ,
Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ :
2. Տե՛ս սա արբչիոն ո՛րչափ տժգոյն՝
Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ .

Ինկած գետին , դէմքը դալկուն ,
 Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ .
 Հանդերձները պատա՛ռ պատա՛ռ ,
 Դէմքը տխուր եւ խելազար ,
 Հեռո՛ւ բաժակ , հեռո՛ւ բաժակ ,
 Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ :

3. Խեղճ զաւակունք հաց կը մուրան .
 Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ .
 Եւ ամուսինն թափառական ,
 Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ .
 Տունն աւերակ , դրրամ չունի ,
 Ինք միայնակ , պարտք չատ ունի ,
 Հեռո՛ւ բաժակ , հեռո՛ւ բաժակ ,
 Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ :

4. Ո՛վ բարեկամք , ալ չլիմենք ,
 Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ .
 Եւ ո՛չ զընենք , ո՛չ վաճառենք ,
 Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ .
 Ժուժկալուժիւնը թէ ընդունինք ,
 Փորձութենէն իսկ կ'ազատինք ,
 Հեռո՛ւ բաժակ , հեռո՛ւ բաժակ ,
 Հեռո՛ւ , հեռո՛ւ բաժակ :

Թարգմ. Գ. Գ. Լեւոնեան

ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆՑ

«Քանի մը օր առաջ,» կը գրէ ուշադիր ան-
 ցորդ ոմն Բարիզէն առ Վսխրն Չայրունկ ,
 «մարդկային փառաց ունայն եւ վաղանցիկ
 լինելուն իբր մի նորոգ ապացոյց՝ սրտազրաւ
 կենդանի պատկեր մը կը ներկայանար մարդուս
 աչքին ի Նոթռ Տամ տը Բառի , հոչակաւոր
 Մայր-եկեղեցին Գաղիոյ : Հոն ի մէջ այլոց կը
 նշմարուէր սեւազգեստ , ալեւոր , վշտահար
 տիկին մը , պարզ աթոռի մը վրայ նստած :
 Սեւ քօղ մը կը ծածկէր նորա դէմքը , որոյ
 տակէն կ'երեւէին խորչամեալ սպիտակամորթ
 ճակատն , վշտալի նայուածքով դալկահար ա-
 չեր , եւ ճերմակ մազերու խոպոպիկներ : Գա-
 ցած ատեն նա կը յենուր փղոսկրեայ գլուխով
 մի սեւ եքենոս գաւազանի վրայ : Ոչ ոք կը
 նկատէր զնա , ոչ ոք կը ճանաչէր հէք կիներ
 որ ուրիշ մէկը չէր բայց եթէ նոյն ինքն էօ-
 ժէնի , նախորդ կայսրուհին Գաղիոյ : Որքա՛ն
 յաճախ տեսած էի — կը շարունակէ թղթա-
 կիցը — հրաշալի գեղեցկութեամբ օժտեալ այս

բարձրաստիճան կինը , որ ամենաչքեղ կերպով պճնեալ եւ զարդարեալ , — միթէ նա չէ՛ր երկարատեւ տարիներ նորաձեւութեան դիցուհին եւ պատգամատու քրմապետուհին . . .

— Նարոյէան կայսեր ձախ կողմն կամ գահաժառանգ իշխանիկին աջ դին բազմած աշխարհի հպարտ մայրաքաղաքին հպատակներուն վրայ ժպիտ ի գէմս եւ խինդ ի սիրտ յաղթապանծ ման կու գար՝ շնորհալի եւ զբաւիչ նայուածքով մը ողջունելով բազմութիւնը : Երեսուն եւ հինգ տարիներ առաջ էր որ նա այս մի եւ նոյն հոյակապ տաճարում կայսեր հետ ամուսնացաւ : Սպիտակ արծաթափայլ ձօխ հարսանեկան զգեստներու մէջ թաղուած , մրտենի պսակն զանգրահեր սիրուն գլխուն վրայ , իրապէս իբր դիցուհի մը կամ յաւերժանարս կը բազմէր նա յայնժամ մի կայսրուհւոյ վայել շքեղ գահի վրայ : Բարիզի Արքեպիսկոպոսը շրջապատեալ 14 եպիսկոպոսներէ , Ֆրանսայի բոլոր բարձրաստիճան պաշտօնատարներէն եւ ստուարաթիւ դեսպաններէ , ոսկեճամուկ հանդերձներ հագած պսակի արարողութիւնը կը կատարէր : Իսկ դուրսը կը գոռային թնթա-

նութք , կը շողային սուրեր եւ սուրիններ Գաղիական մեծ բանակին որ ամեն տեղ ընդարձակ փողոցներում նորապսակ կայսրուհւոյն եւ կայսեր բարեւի կեցած էր . կը փայլէին փառաւոր համազգեստք զօրականաց , եւ ժողովրդեան ամբոխը ցնծազին եւ ջերմեռանդաբար կը ծափահարէր գեղեցկութեան տիպար համարուող կայսրուհին եւ « կեցցէ » ներով օղբ կը դրդացնէր : Երեք տարի յետոյ դարձեալ այս գեղեցիկ շէնքին յարկին տակ կը մկրտուէր գահաժառանգ իշխանն Գաղիոյ՝ անպատում փառօք եւ յոյժ հանդիսաւոր սօնախմբութիւններով : Եւ այժմ ժամանակը ի՞նչ ըրաւ Եւրոպայի ամենադեղեցիկ կինը — , ալեւոր եւ հէք այրի մը :

Տ Ո Ւ Ր Ի Ն Ձ

Տուր ինձ կեանք , Հայր իմ , արեւ ու օրեր , Միշտ ու միայն Քեզ կու տամ զայն նըւէր :
Տուր ինձ քաջառողջ մարմին եւ տոկուն ,
Գործիք մ'ըլլամ ձեռքդ , տաճար Սուրբ Հոգւոյն :

Տուր ինձ ձեռք հուժկու , որք մինչեւ մաշին ,
Սիրոյդ կրքակով գործեն ու շարժին :

Տուր ինձի ոտքեր թեթեւ , ընթացիկ ,
Եւ թող անոնք , ո՛հ , կոչուին «գեղեցիկ» :

Տուր ինձ ձայն անոյշ , Տէր իմ Թագաւոր ,
Որ ըզ՛իեզ օրհնեմ երգով հոգեւոր :

Տուր ինձ պերճ լեզու , զի սէրդ պատմեմ ,
Տէր ,

Եւ այրեմ մրկեմ ցամքած պաղ սրտեր :

Տուր ինձ գըրիչ , բեղուն եւ արագ ,
Որով մութ տեղեր վառեմ Խօսքիդ ճրագ :

Տուր ինձ մի քընար որ քերթեմ սողեր ,
Ի գովեստ Գանին նըւագեմ տաղեր :

Տուր ինձ միտք , հանձար , ու զայն ի նը-
պաստ

Դատիդ գործածեմ , պաշտպանեմ Քո փաստ :

Տուր ինձ սիրտ լեցուն սիրոյ գանձերով ,
Զայն զնեմ ոտքիդ տակ անհուն իղձերով :

Տուր ինձ կեանք , Հայր իմ , արեւ ու օրեր ,
Ողջոյն էութիւնս կու տամ Քեզ նըւէր :

Ա. Կ. Պետիկեան

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Երեւելի բժիշկ մը , իբրեւ դարման քթի
արիւն դաղրեցունելու , կը յանձնարարէ ոտ-
ուընները եւ ձեռուընները զնել այնչափ սաստիկ
տաք ջրոյ մէջ , որում կրնայ տոկալ մարդ :

—Կ'ըսուի թէ ձիթոյ (զեյթին եաղը) եւ
քափուրի (ֆեափիւրի) խառնուրդ հեղանիւթը
ազդեցիկ դարման է ամառնային ջերմի (hay
fever) : Պէտք է զայս պատրաստելու համար
մեղմով տաքցունել ձէթ եւ փոքրիկ կտոր մը
քափուր քանի մը ժամ : Այս խառնուրդով
պէտք է օծել ռնգանց ներսի կողմերը :

—Մանկունք քան զսովորականն աւելի են-
թակայ են վասնդաց երբ անէն դուրս տեղեր
կը խաղան ամառ ժամանակ : Երբ մարմնոյն
մէկ կողմը կը ճնշուի բանի մը զարնուելով
կամ հարուած ընդունելով , անմիջապէս պէտք
է օծել զայն վասիլիկնով կամ կարագով որ-
պէս զի մարմնոյն գոյնը չփոխուի , եւ հաւան-
մեղիս վիրկիւնիքայի մուգով օծելով կը մեղ-
մանայ ցաւը :

— Հաւկիթին սպիտակուցը քիչ մը ջրով եւ շաքարով խառն՝ լաւ դեղ է մանկանց գրգռեալ ստամոքսին : Շատ ազդու դարման է սա , եւ ինչպէս պարզ խափանիչ է աղեաց անկանոնութեանց՝ նոյնպէս եւ դերազանց դեղ է փորհարութեան :

— Մարդ կրնայ վայելել աղի ջրոյ լողացում առանց ծովեզր երթալու , եւ ահա պարզ կերպ մը . Գաւաթ մը աղ պէտք է լուծել տաք ջրոյ մէջ եւ խառնել զայս հասարակ լողացման համար պատրաստուած ջրոյն մէջ : Քան զայս լաւագոյն զօրացուցիչ չկայ տկարացած մարմնոյն , մանաւանդ երբ լողացումը տեղի կ'ունենայ անկողին մտնելէ ճիշդ առաջ :

— Երբ հարցուեցաւ բժշկի մը թէ ի՞նչպէս հնար է ստանալ քաջ առողջութիւն , պատասխանեց , « Լաւագոյն կերպն է ընտրել մեծ հայր մը եւ մեծ մայր մը լաւ , առողջ սերունդէ : » Այս խօսքէն ելած բարոյականը սա է թէ մեր սերնդեան ֆիզիքական բարօրութիւնը մեծապէս կախեալ է մեր զմեզ լաւ կառավարելէն :

— Պտուղներն ի՞նչպէս հնար է օգտակար

կերպով գործածել , կերէք զայնս կանոնաւոր ատեններ , ճիշդ ճաշէն առաջ եւ ճաշի ժամանակ եւ կամ ճաշէն շուտ ետքը . յայնժամ անոնք կ'ըլլան մասն կանոնաւոր ուտեստից եւ կը մարսուին անոնց հետ : Եւ ստամոքսը , որ յաճախ չարաչար կը գործածուի , ժամանակ կ'ունենայ հանգստանալու , ճաշելու միջոցին :

— Ուսանող . Ի՞նչ բան ամենէն տարօրինակ է քու պաշտօնիդ մէջ , Բժիշկ . Երբ ես օրը տասը մէճիտ կը պահանջեմ դարմանելու համար մարդ մը՝ որ ինքն չարժեք քսան փարա :

— Թէ արեգական լոյսն ո՛րչափ կարեւոր է առողջութեան , կը պարզուի հետագայ տողերուն մէջ : Նիւ Եորքցի վաճառական մը տասն տարեաց մէջ վեց տոմարակալներ կորոյս նոցա մահուամբ : Չէր կարող հասկնալ այս տարօրինակ մահուանց պատճառը : Նոցա իւրաքանչիւրին մէջ խիտանշանք նոյն կը թուէին , եւ ամէնքն ալ մեռած էին հիւժախտէ : Հուսկ ուրեմն համոզուեցաւ թէ յիշեալ երիտասարդաց մահուան պատճառն էր տեղն ուր նոքա ստիպուած էին գործել : Սա էր փոքրիկ սեն-

եակ մը վաճառատան յետակողմը , ուր կարելի էր որ արեգական լոյս մասնէր : Եւ ուստի գրասենեակ մը պատրաստեց շէնքին վերնայարկին մէջ ուր արեգակը կրնար արձակել իւր շառաւիղները լայն պատուհանաց մէջէն օրն ողջոյն : Տոմարակալաց առողջութեան փոփոխութիւնը տեսնուեցաւ գրեթէ անմիջապէս : Նոքա շուտով եղան զօրաւոր եւ սուկուն , եւ յայնմհետէ ցայսօր մահեր չեն պատահած հոն : Այս փոքրիկ պատմութիւնը թող դաս մը սորվեցունէ այնպիսեաց որ կը բնակին եւ կը գործեն արեգական լոյսէ զուրկ տեղեր : Պատիժն է մահ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Անկեղծութիւն եւ ճշմարտութիւն առաքինութեանց հիմնաքարերն են :

— Բարիք ընելու միշտ պատրաստ լեր , եւ մարդկութեան պարտականութենէն խոյս տալու ոչինչ բացառութիւն մը անգամ թող չարատաւորէ քո կեանք :

— Իմաստունը չպահանջեր աւելի բան քան ստանալ արդարութեամբ , գործել զգաստութեամբ , բաշխել ուրախութեամբ եւ ապրիլ գոհունակութեամբ :

— Իմաստունը այլոց սխալմամբ կ'ուղղեն զիւրեանցն :

— Միակ բարիքն զոր կարեմք տեսնել ի շողոքորթութեան՝ է լսելով այն , որ ինչ չեմք , կրնամք հրահանգուիլ թէ ինչ պէտք է լինիմք :

— Ոչ ոք կրնայ ունենալ ճշմարիտ բարեկամ , երբ սուլոր է յաճախ փոխել իւր բարեկամութիւնն :

— Զիք աւելի ներդաշնակ երաժշտութիւն մը ականջին քան բարերարին ձայնն :

Վասպար Ա. Փափանեան

ՊԻՉԸՐԻ ԽՐԱՏՔ ԱՌ ԻԻՐ ՈՐԳԻՆ

Վերջերս ի հրատարակութիւն տրուած է հետագայ նամակը , զոր ամերիկացի համբաւաւոր եւ բազմարդիւն քարոզիչ Մր. Պիչըր

գրած է առ իւր որդիին , երբ սա իւր կենաց մէջ առաջին անգամը լինելով՝ անկախ ձեռնարկութիւն մը պիտի սկսէր : Թերեւս կ'արժէ որ մենք եւս հրատարակենք զայն՝ նոյն իսկ այն պատճառաւ որ մեծ քարոզիչն այն նամակը գրած չէ ընդհանուր երիտասարդութեան համար այլ կ'ուղղէ զայն առ այն երիտասարդն որոյ յաջողութեան նկատմամբ զօրաւոր եւ մասնաւոր նախանձաւորութիւն ունէր : Սոյն նամակ կը պարունակէ խրատներ որք ամէն երիտասարդի ուշադրութեան արժանի են :

Սիրելի Ջաւախ Հերպերք ,

Այժմ առաջին անգամն է որ իրապէս կենաց մէջ կը նետուիս առանձին : Կը մեկնիս հօրդ տունէն եւ կը բաժնուիս բոլոր ազգականներէդ որպէս զի քու գործդ դուն կատարես աշխարհի վրայ : Յարմար ժամանակ է արդ որ նոր կեանք մը սկսիս , մէկզի ձգես այն թրութիւնները որոց վնասակարութեան փորձն առած ես , եւ ստանաս այնպիսի սովորութիւններ զորս չունենալուդ վնասները տեսած ես :

Ա. Պարտք մի ընէր : Պարտքէ այնպէս խորչէ որպէս կը խորշիս Սատանայէն : Հիմնական կանոն մը ըրէ քեզ բանի մը գինը վճարել , ապա թէ ոչ՝ երբեք չգնիլ զայն :

Բ. Շատ խոստումներ մի ընէր : Կրօնական ակնածանօք ամէն խոստումդ կատարէ : Այն մտրղը որ իւր խոստումները կատարելու նպատակ ունի՝ չկրնար շատ խոստումներ ընել :

Գ. Քու ամէն խօսքերուդ ճշմարտութեան շատ խղճահարութեամբ հող տար : Կատարեալ պարզութեամբ եւ ճշգրտութեամբ խօսէ . կարծիքով մի-խօսիր : Կա՛մ բան մը մի ըսեր , կա՛մ ժշգրիտ ճշմարտութիւնն ըսէ :

Դ. Երբ այլոց համար կը գործես , քու անձդ մոռցիր եւ նոցա օգուտը փնտռէ : Ժրութեամբ , հաւատարմութեամբ եւ ամենայն ուղղութեամբ գործէ այնպէս որ անհրաժեշտ համարուիս զքեզ գործածողներուն գործին : Անձնասիրութիւնը կը կործանէ զմարդ :

Ե. Քեզ համար ունեցիր վարուց բարձրագոյն գաղափարական մը քան զոր այլք կ'ակնկալեն : Անձէդ աւելի բան պահանջէ քան զոր այլք կ'ակնկալեն . բարձր բռնէ գաղա-

փարականդ : Երբեք մի ջանար աչացդ առջեւ
արդարացունել անձդ : Երբեք մի խղճար ան-
ձիդ վրայ : Միստ տէր մը եղիր անձիդ , սա-
կայն մեզմ եղիր այլոց :

Զ. Հարստանալու ճանքան է բան մը չվատ-
նել : Այս երկրիս մէջ ամէն քաղաքի եւ աշ-
խատասէր երիտասարդ կրնայ հարստանալ եթէ
գոցէ այն բոլոր ծակտիքները ուրիշ ստակը
դուրս կը հոսէ , եւ եթէ չաճապարէ հարըս-
տանալու : Մի աճապարեր . համբերող եղիր :

Է. Շահագիտութիւն մի ըներ եւ բազդախաղ
մի խաղար : Կ'երթաս այնպիսի երկիր մը ուր
ամէն ոք յուզման մէջ կը գտնուի եւ կը ջա-
նայ մեծ հարստութիւն զիզել քիչ ժամանակի
մէջ եւ առանց աշխատութիւն թափելու անոր
համար : Այդպիսիք աճառի պղպջակ շինող-
ներ են : Յարատեւ եւ համբերատար աշխա-
տութիւնը թէ՛ ամենէն ստոյգ եւ թէ՛ ամենէն
ապահով ճանքան է յաջողութեան : Ազահու-
թիւն եւ աճապարանք երկու դեւեր են որք
ամէն տարի հազարաւորներ կը կործանեն :

Ը. Գալով Մր. Պ—ի՝ հարաւային նահան-
գաց բնակիչներէն է նա եւ զքեզ կ'ընդունի

ին սիրոյս համար : Զըլլայ որ զըջալ տաս նմա
զքեզ ընդունելուն համար :

Թ. Կ'ազաչեմ քեզ որ ուղղեա սա թերու-
թիւնդ . խստիւ քննադատել զայլս : Ինչ որ
ալ ըլլան պարագայք , երբեք չար մի խօսիր
մարդու մը վրայ : Բացակայ անձանց վրայ ա-
ճապարանօք յանցանք գտնելն եւ խիստ քրն-
նադատութիւն ընելն պատուաւոր բաներ չեն ,
կարելի է որ ճիշդ չլինին , չեն վայելեր մար-
դասիրութեան , ուրիշները կը թշնամացունեն
քեզ եւ վերջապէս յոռի սովորութիւններ են :

Ժ. Պարտիս յիշել թէ Մր. Պ—ի չես եր-
թար անոր ագարակին նման ագարակ մը կա-
ռավարել սորվելու համար : Քանի մը հարիւր
եւ ոչ թէ հարիւր վաթսուն հազար արտավար
հող պիտի լինի քու ապագայ կալուածդ : Սա-
կայն կրնաս սորվիլ արջառ ու ոչխար բու-
ծանել եւ ցորեն մշակել . կրնաս ուսումնա-
սիրել կլիմային փոփոխութիւնները , հողը ,
մարդոց շարժումները եւ սովորութիւնները ,
եւ ուրիշ հարիւրաւոր կարեւոր բաներ :

ԺԱ. Եթէ ուղղութեամբ , աշխատասիրու-
թեամբ եւ պատուաւոր յաջողութեամբ ար-

ժանանաս քաղաքակցացդ համակրութեան ,
 թերեւս սոքա ապագայ տարեաց մէջ քեզ
 պատուաւոր պաշտօններ յանձնեն : Այդպիսի
 պաշտօններու հետամուտ մի լինիր , մի ըն-
 դունիր զայնս երբ դեռ փոքր ես . սպասէ :
 Սակայն երբ հաստատուիս բարձր պաշտօնի մը
 մէջ , կրնաս հօրդ անունը պատուով ճանչցու-
 նել Խորհրդարանի որմերուն մէջ : Վերջապէս
 մի մոռնար հօրդ եւ մօրդ Աստուածը : Որով-
 հետեւ այսուհետեւ պիտի զրկուիս եկեղեցա-
 կան շատ առանձնաշնորհութիւններէ , շատ
 դօրութեան պէտք պիտի ունենաս Աստուծոյ
 նուիրեալ պահելու համար սիրտդ : Սակայն մի
 արհամարհեր փոքր եկեղեցիները եւ խոնարհ
 դասու քարոզիչները : « Ամբարտաւանութիւն
 մի ընէք , հապա խոնարհներուն հետ խոնար-
 հեցէք , » կ'ըսէ առաքեալը :

Յաճախ կարգա Առակաց Գիրքը եւ Նոր
 Կտակարանի մէջ պարունակեալ պատուէր-
 ներն ու պարտականութիւնները : Հօրդ Աստ-
 ւածը հետդ ըլլայ եւ պաշտպանէ զքեզ :

ՀԷՆՐԻ ՈՒՌԵՏ ՊԵՅԸ

ՍՏԱՄՈՒՅՍԻ ԹԹՈՒՈՒԹԻՒՆ

Այս վիճակն ընծայելի է մանրաճճեաց
 (միֆրոպ , եւն.) , եւ ապաքինումը կը կայա-
 նայ այս մանրաճճիներէն ազատուելուն մէջ :
 Ստամոքսին մէջ խմորման մանրաճճիք նախ
 յառաջ կը բերեն ալգոնոլ , յետոյ ածխային
 (carbonic acid) եւ յետոյ քացախային թթու
 (acetic acid) : Ստամոքսային այս տեսակ
 տկարութեան ենթակայ անձը պարտի միայն
 այնպիսի բաներ ուտել որք չեն նպաստեր
 մանրաճճեաց զարգանալուն , եւ այսպէս սո-
 վամահ ընել զայնս : Ընելիք երկրորդ բանն է
 ստամոքսը լուալով մաքրել մանրաճճիներէն ,
 կերակուր ուտելէ առաջ առատ տաք ջուր
 խմելով : Եթէ արդէն թթուած ստամոքսին
 մէջ կերակուր երթայ , հարկաւ խմորումը կը
 սկսի անմիջապէս : Ոմանք կ'ըսեն թէ այն ինչ
 կուտեն , իրենց ստամոքսը կը թթուի : Ընե-
 լիք երրորդ կարեւոր բանն է զրգուել ստա-
 մոքսը եւ այսպէս յարուցանել աւելի մարսու-
 ղական հիւթ որ է ի բնէ հակափտական դեղ

եւ կ'արգելու խմորումը, նաեւ կը փութացնէ ծծումը (absorption) : Գեղձերը կըրնան գրգռուիլ տաք ջրոյ մէջ թաթխուած սպունդ կամ լաթի կտոր ստամոքսին վրայ կէս ժամ դնելով կերակուրէն անմիջապէս ետքը, կամ, որ աւելի դիւրին է, տաք ջրով լի առաձգական խիժէ (շասիկ) սոպրակ մը դրնելով ուղղակի ստամոքսին վրայ կէս ժամ կամ մէկ ժամ : Զերմութիւնն է բնական գրգռիչ դարման եւ եթէ այս կերպով գործածուի, կարելի չէ որ գէշ արդիւնք յառաջ գայ :

ՀՐԷԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

Հրէից Ռաբրիններն կը պատմեն թէ, երբ Նոյ այգի տնկեց, անդ ներկայ էր սատանան եւ զոհեց չորս կենդանի. առաջինն էր ոչխար, երկրորդն առիւծ, երրորդն կապիկ եւ չորրորդն խոզ : Այս կենդանիք նշանակ են արբեցութեան եւ անոր աստիճանները ցոյց կուտան : Երբ մէկը գառաջինն արբեցութեան կ'ըսկըսի, ոչխարի պէս հեզ եւ տգէտ է, ապա

կսկսի առիւծի նման քաջարտութիւն մ'ստանալ որ շուտ ընդ փոյթ կը փոխուի կապիկան ձեւերու եւ յուսկ յետոյ խոզի պէս մեղաց տղմին մէջ շարունակ տապալել ու թաւալել :

* * *

Արբանամ ըստ սովորութեան իր վրանին դուռը կը կենար օտարականներ ընդունելու եւ զանոնք սփոփելու համար : Անգամ մը ալեւոր մարդ մը նշմարեց որոյ մէջքը ծռած ըլլալով դժուարաւ կը քայլէր գաւազանի օդնութեամբ : Նորա տարեթիւք դար մը կը կազմէին : Արբանամ սիրալիբ ընդունելութիւն մ'ըրաւ սոյն ծերունւոյ . լուաց նորա ոտներն եւ կերակուր պատրաստեց ու դրաւ նորա առջեւ : Ծերուկն երբ սկսեց ճաշել առանց գոհանալու յԱստուծոյ, Արբանամ յոյժ զարմացած հարցուց նմա, « Ո՛վ դու օտարականդ, է՛ր գոհութիւն չես մատուցաներ ճաշելէ առաջ » : Օտարականն կարի անվեհեր խորխտանօք պատասխանեց « Ես միայն ճանաչեմ զիմ Աստուած, այն է հոռւ եւ ոչ այլ Աստուած » : Արբանամ իբր շանդահարեալ ծե-

րունւոյն սոյն լիբը պատասխանէն՝ դողաց եւ անմիջապէս վանեց զայն իւր վրանէն հեռի , եւ թողուց որ ամենայն աղետից եւ փորձանաց ենթակայ լինի : Մինչ ծերունին կը քայլէր կորագլուխ , Աստուած կանչեց զԱբրահամ եւ հարցուց նմա , « Ո՞ւր է օտարականն որ մտեր էր քու վրանիդ ներքեւ » . նա պատասխանեց , « Տէր իմ , արտաքսեցի զինք որովհետեւ ո՛չ ճանաչէ զԱստուածդ իմ » : Յայնժամ պատասխանեց Աստուած , « Ո՛վ Աբրահամ , հարիւր ամք են յորմէ հետէ համբերութեամբ կը տանիմ հակառակ իւր ամբարիշտ վարմանց , եւ դու օր մը միայն չ՛կարացիր համբերել նմա : » Աբրահամ ի լուր այս Աստուածային յանդիմանութեան , գնաց վերադարձուց արտաքսեալն յիւր վրան եւ փոխանակ իւր բարկութեան սկսաւ մեղմիւ խրատել զայն :

* * *

Աբրահամ անգամ մը մինչ կը ճամբորդէր յԵգիպտոսէ , արկղ մը կառնու իւր հետ եւ մաքսատունէն անցած ատենը մաքսաւորներն մաքս կը պահանջեն եւ Աբրահամ կը հաւանի

տալ պայմանաւ որ չ՛բանան արկղը : Մաքսաւորք կարծելով թէ արկղին մէջ լաթեղէն կայ , լաթեղէնի մաքս կը պահանջեն . երբ Աբրահամ յօժարութեամբ կընդունի զայն առաջարկ , մաքսաւորք կը կասկածին թէ ծանրագին կերպասեղէններ ըլլալու են արկղին մէջ . Աբրահամ այդ ծանր առաջարկն եւս ընդունելով վեջապէս արկղը բանալ որոշեցին զի Աբրահամ կընդունէր այնպիսի առաջարկներ որ յոյժ ծանր էին , եւ իրաւամբ կընային կարծել թէ արկղին մէջ պարունակուածը յոյժ դանկագին պէտք էր ըլլալ : Ուստի բացին արկղը , ո՛վ զարմանալեացս , ի՞նչ հեռապատկեր մը կը ներկայանայ առջեւնին տեսնելով հանուր Եգիպտոսի գեղեցիկ սեռին մէջ հանրահռչակ տիպարն Սարրա՝ զոր Աբրահամ արկղի մը մէջ պահած է զիտող աչերէ զայն հեռի կացուցանելու համար :

* * *

Հրէից սոյն օրինակ թալմուտական աւանդութիւնք բազում են : Ի Սողոմ անկողին մը կար կըսէ հանրապատկան , երբ օտարական մը

երթար պառկելու անոր մէջ, եթէ հասակը անկողնէն երկար լինէր ոտքերն կը կարէին որպէս զի անկողնոյն հաւասարի. եթէ հասակը կարճ ըլլար գլխէն ու ոտներէն կը քաշէին մեծամեծ տանջանքներով:

Երբ մուրացիկ մը երթար ի Սօդոմ իւրաքանչիւր ոք արծաթեայ դրամ մը կուտար նմա իւր անունը անոր վրայ քանդակուած: Բայց եղկելուոյն ոչ հաց կը ծախէին ոչ ալ կը թոյլատրէին որ ինքը ճարէ: Հէք արարածն անսուաղ կացութեան մէջ հոգին կաւանդէր, յայնժամ ամէն ոք իբրեւ ժառանգորդ նորա շուրջը ժողովուած դրամին ետ կառնէին:

Ոսպ

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆՔ

Համաճարակ ախտերով վարակեալ անձինք պէտք է դրուին այնպիսի սենեակներու մէջ ուր չգտնուին բրդէ կապերտներ կամ վարագոյրներ եւ կամ մէջը լցուած կահ կարասիք, որպիսի են բարձ, բազմոց, եւլն.: Սենեկին մէջ պէտք է պահել այնպիսի կահեր միայն

որ պիտոյ են հիւանդին եւ նմա սպասաւորողներուն հանգստեան համար. սոքա եւս պարտին լինել պարզագոյն տեսակէ, եւ այնպիսի՝ որ կարելի ըլլայ զայնա լուալ փննական թթուով տոգորեալ ջրով, կամ խարշել ջրով որպէս զի մաքրուին: Սենեկին մէջ բաց կրակը լաւ մաքրիչ է օդոյ եւ կորուսիչ՝ վարակիչ մանրածնեաց որք կը քաշուին անոր մէջ եւ կը սպաննուին: Տան վերնագոյն յարկաց մէջ գտնուող սենեակներն աւելի աղէկ են քան վարի յարկաց մէջ գտնուողները: Եփ եւ փրփրալից աճառաջուրը հականեխական ազդեցութիւն ունի հանգրծից վրայ: Պէտք է դնել զայնա այդ ջերաջերմ փրփրալից ջրոյն մէջ մէկ ժամ եւ կը քաղուի արդիւնքը:

— Երբեք մի վիճիր հիւանդին հետ անպէտ նիւթոց վրայ: Բարտոֆ Տևարտուքիսն անուն թերթը պատշաճապէս կը հարցնէ թէ ի՞նչ վնաս ունի թողուլ որ հիւանդը կանաչ կարծէ վարագոյրը թէպէտ իրապէս կապոյտ է այն: Սոյն խնդրոյ մէջ պարունակեալ սկըզբունքն անտես ընելով՝ ցաւագարներու հանգիստը բաւական կը վրդովի:

— Երբ օտար նիւթ մը կը մտնէ ականջին մէջ, բազմիցս աւելի մնաս յառաջ կու գայ զայն հանելու համար անհանձար ջանքեր ընելով քան լոկ թողլով իւր տեղը : Մանկունք զօրաւոր հակամիտութիւն մը ունին իրենց ականջները լցունել համբիշի հատիկներով, պտղոց կորիզով, գայլախազ քարի բեկորներով, ոլոռով, խեցեմորթի կեղեւներով եւ ուրիշ նիւթերով : Երբ պատահին այսպիսի արկածք, անոնց յոյժ մեծագոյն մասէն հնար է անմնաս ազատուիլ գրեթէ (խնթիզաւ) գործածելու պարզ մեթոտով . պէտք է ականջին մէջ տաքուկ ջուր ներարկել օրը քանի մը անգամ : Ականջի վիրաբոյժք միաձայն կը դատապարտեն անապարանօք դարմանման ձեռնարկութիւնը գործեաց միջոցաւ :

— Մետաքսեայ ասղանին (խպրիշիւ) կամ ձգախիթէ նուրբ ժապաւէնն աւելի աղէկ է կերակրոյ մասնիկներն հանելու համար ակոսներուն միջոցէն քան որ եւ իցէ ատամնափոր (սխւփափ) :

— Ծէյմս Ֆրիմէն Քլէրք որ մինչեւ ութսուն տարի ապրեցաւ, առողջութեան սա հե-

տազայ չորս կանոնները կը պահէր . Երբեք չաճապարել, շատ մարմնամարզ ընել, զուարթամիտ լինել եւ շատ քնանալ :

— Գործածուող անկողինները պէտք չէ պատին դպցունել, Այսպիսի դրից մէջ քնացողին շունչը ետ կ'անդրադառնայ եւ վերստին ներս կը շնչուի . յոյժ վտանգաւոր բան : Ուրիշ առարկութիւն մը եւս է սա որ գուցէ պատէն խոնաւութիւն ընդունուի : Թող անկողնոյն չորս կողմը օդն ազատ շրջան ընէ, մանաւանդ երբ երկու անձինք կը գտնուին հոն :

— «Ռուս Ընկերութիւն Ժողովրդեան Առողջութեան Պահպանութեան համար», առողջապահական պաշտօնական վարչութիւններէն տարբեր եւ ուրոյն կազմակերպութիւն, առողջապահական կեդրոնական վարչութեան առաջարկած է ծրագիր մը արգելելու համար հիւժախտին ծաւալումը ժողովրդեան մէջ, Յիշեալ ընկերութիւնը կը խնդրէ վաւերացումը հետազայ պայմանաց . Հրատարակել պաշտօնապէս՝ թէ հիւժախտն է տարափոխիկ հիւանդութիւն, Բոլոր հիւժախտաւորաց կանոնաւոր ցանկերը պահել ամէն հասարակու-

Թեան մէջ : Մասնաւոր հիւանդանոցներ կամ դարմանատուններ հաստատել հիւժախտաւորաց համար : Զինուորական իշխանութիւնք որ կը մերժեն ընդունիլ հիւժախտաւոր զինուորագրեալները , պարտին այսպիսի նոր զինուորագրելոց ցանկերը զրկել նոցա պատկանեալ գաւառաց քաղաքային իշխանութեանց որպէս զի կանոնաւորապէս արձանագրուին : Ներքին գործոց նախարարութեան առողջապահական վարչութեան պարտի տեղեկութիւն տրուիլ զինուորագրելոց հիւժախտիւ վարակմանց վրայ : Զինուորական իշխանութիւնք պարտին ունենալ մասնաւոր դարմանատուներ հիւժախտաւոր զինուորաց : Բոլոր հանրային տեղեաց մէջ պէտք է դնել թքամաններ եւ գետինը թքնելը խստիւ արգելել , վասն զի հիւժախտաւորաց թուքին կամ լորձունքին գոլորչին կրնայ այլոց առողջութեան վնասել :

— Սոյս տուր երթալէ որ եւ իցէ տարափոխիկ ակտերու վայրերը երբ կը քրտնիս կամ ստամոքսը կերակրով լաւ չես լցուցած : Դատարկ ստամոքսը եւ մարմնոյ բաց ծակտիկք

կ'աւելցունենն ախաէն բռնուելու ընդունակութիւնը :

— Թուքերու արիւնհոսութիւնք կրնան մեղմանալ հիւանդը անկողնոյն մէջ դնելով նրստած գիրքով եւ տասնեւհինգ վայրկեանն անգամ մը տալով մէկ թէյի զգալ աղի եւ քացախի խառնուրդ մը : Գիշերային քրտինքը կրնայ դադարիլ՝ գիշերը մարմինը չփելով չատ տաք ջրոյ մէջ թաթխուած սպունգով : Մորթը զօրացունելու համար առաւօտուն չիէ մարմինը ուժով՝ աղջրոյ մէջ թաթխուած եւ քամուած դաստառակով : Աղը կ'երթայ կը մտնէ ծակտիքները եւ զմարմինն առողջապահական գործունէութեան մէջ կը դնէ :

« Հ Ի Ն Օ Ձ Ը »

Քանի մը տարի առաջ Լոնտոնի թատրոններէն մէկուն մէջ վայրի կենդանեաց ներկայացում մը տրուեցաւ : Առիւծներու , վագրերու , ինձերու եւ բորենիներու վրայ կատարուած խաղերը զայնս կատարող անձին

քաջութեան եւ անվեհերութեան մասին տարակոյս չթողուցին : Ի վախճանի 35 ոտք երկայն Պոս Բոնսրիթոր կոչուած վիթխարի օձի մը եկաւ կարգը : Մարդը այդ օձին քանի մը օրուան եղած առեն զայն ձեռք էր ձգած եւ 25 տարիէ ի վեր ամէն օր նորա հետ կը զբաղէր , այնպէս որ կը կարծուէր թէ կատարեալ ազդեցութիւն ունէր անոր վրայ : Վարագոյրը բացուեցաւ . տեսարանն էր հընդկական խիտ , մացառուտ դաշտ մը : Թուփերուն եւ մացառներուն մէջէն շառաչունով դուրս կը սողայ , ոլորուն գնացքներով , անոնքի օձ մը , որ թատերաբեմին մէջտեղը հասնելով գլուխը վեր բարձրացուցած կը կենայ : Մօտակայ մացառներէն մարդ մը երեւան կ'ելլէ . օձը եւ նա դէմ առ դէմ կեցած են , եւ միմիանց աչաց մէջ կը նային : Օձը մարդուն օտից առջին կ'ոլորի . մարդը կը յաղթանակէ , եւ այժմ այլ եւ այլ շարժումներ կատարել կուտայ օձին , զորս սա ամենայն հնազանդութեամբ ի գործ կը դնէ : Իւր տուած մէկ նշանին համեմատ՝ օձը իրեն կը մօտենայ եւ կը սկսի նորա մարմնոյն վրայ ոլորիլ , ոտքէն

սկսեալ մինչեւ վերը , այնպէս որ մարդը բուրբովին օձին ոլորքներովը կը փաթթուի : Օձը , իւր անոնքի գլուխը մարդուն գլխէն կանգուն մը վեր բարձրացուցած , օղին մէջ կը շարժի . հանդիսականք բուռն ծափահարութեամբ կը թնդացնեն թատրոնը : Սակայն , լռութիւն . ականջ դրէք : Ի՞նչ ձայն է այս : Մահուան սարսափի մէջ եղողի մը սրտածմբիկ աղաղակը իւրաքանչիւրի սիրտահիւ եւ երկիւղով կը լեցնէ : Հանդիսականք , գունաթափ եւ յուզեալ , կ'ուզեն իմանալ եղելութիւնը : Խոր լռութիւն մը կը տիրէ սրահը : Օձին յաղթողին մահուան ձիւն էր սասարսափելի՛ տեսարան : Օձը կը ճնշէր եւ կը ճնշէր զնա , եւ կը լսէին անոր մարմնոյն բուրբ ոսկերաց փշրուելուն ձայնը : Քսանեւհինգ տարի իւր տէրոջ հնազանդող օձն այժմ նորա տէր էր եղած , եւ վերցուց նորա կեանք :

Այս է ազդու պատկեր մեղաց : Մեղքը կը պահենք մեր սրտից մէջ , կը խնամենք զայն եւ կը սնուցանենք , կը խաղանք անոր հետ . իսկ նա օր քան զօր կը զօրանայ , մինչեւ որ ի վերջոյ մեր ազդեցութեան սահմանէն դուրս

կ'ելլէ , անսանձելի եւ աննուաճելի կ'ըլլայ եւ մի հարուածով մեր կենաց վախճան կուտայ , Ուստի յիշենք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի սա ազգու յորդոր . «Թէ որ քու աջ աչքդ քեզ կը գայթակղեցընէ , հանէ զանիկա ու քեզմէ ձգէ . ինչու որ աղէկ է քեզի որ անդամներուդ մէկը կորսուի , ու քու բոլոր մարմինդ դժոխքը չձգուի » «Մեղաց վարձքը մահ է » :

ՅԻՍՈՒՍ ԱՆՀԱՒԱՏԻՑ ՀԱՄԱՐ

Հռոմայեցի հարիւրապետին համար Նա էր «Որդի Աստուծոյ » :

Յուդայի , մոլեգնեալ յուսահատին , համար էր , «անմեղ արիւն » :

Շփոթեալ Պիղատոսի համար էր « առանց յանցանաց մարդը » :

Հրեայ պատմիչ Ֆլավիոս Յովսեպոսի համար էր «իմաստուն մարդը » :

Կեղսոսի համար էր հրաշագործ «մոգ » :

Պայրընի համար էր «թէ՛ մարդ եւ թէ՛ Աստուած » .

Նափուլէոնի համար էր «Թագաւոր սիրոյ » :
Պորփիրոս կոչեց զՆա «բարեպաշտ մարդը» :

Յուլիանոս Ուրացողի համար էր «կաղից , կուրաց եւ դիւահարաց բուժիչը » :

Յրաուտի համար էր «ամենակատարեալ էակն» որ երբեք ապրեցաւ :

Դաւիթ Շիրաուսի համար էր «կրօնի ամենարարձր գաղափարականն » :

Տիտոյի համար Յիսուսի պատմութիւնը «անզուգական պատմութիւն» էր :

Յրանսիս Գոպ ճանաչեց զՆա իբր «վերանորոգիչ մարդկութեան » :

Բոպէրթ Օուէն կոչեց զՆա «անստգիւտ » :

Ֆ. Բիքանթի համար էր «սուրբ առաջի Աստուծոյ եւ անարկու՝ դիւաց » :

Բուսոյի համար Գողգոթայի տագնապը էր «մեռնող Աստուծոյ» մը տագնապը :

Թէոտոր Փարքըրի համար Յիսուս էր «պատանին որ զԱստուած ունէր իւր սրտին մէջ » :

Ճոն Սթիւըրթ Միլի համար էր «մարդկութեան առաջնորդը » :

Լէքիի համար էր «առաքինութեան բարձրագոյն տիպարը » :

Բընանի համար էր «մարդոց որդիներուն մէջ ամենամեծը : »

Եւ ո՛հ իցի՛ւ թէ անհաւատից կողմէ նկատեալ կամ վկայեալ այս ամենաբարձր նկարագրի տէր էակը ըլլար մեզ հաւատացելոցս համար «ամենայն յամենայնի : »

Թարգմանաբար

Յ. Արցաւի Գ. Քէմալեան

Ս Ր Տ Ա Յ Ա Ի

Բազումք կը կարծեն թէ սրտի ցաւ ունին , մինչ իրենց զգացած ցաւին պատճառն է ստամոքսին ճնշումը երբ կ'ուռի կերուած ուտեստով կամ կաղով : Զղացաւ կամ կուրծքի որմոց մկանսկան յօդացաւութիւնը նմանօրինակ ցաւոց պատճառ կ'ըլլան սրտին սահմանաց մէջ , որք զիւրաւ կ'ընծայուին սրտի հիւանդութեան : Մթութիւնը , որ կը պատէ սրտին ջղային դրութեան ամբողջ խնդիրը , անկարելի կ'ընէ խօսիլ որոշակի այսօրինակ ցաւոց վրայ : Զանազան դեղորէք , որ կը յամրացու-

նեն սրտին գործողութիւնը , երբեմն օգուտ կ'ընծայեն : Բայց հարկ է լաւ մը ստուգել նախ թէ սիրտն իրօք հիւանդութիւն ունի : Այսպիսի հիւանդութեամբ տառապողք կրնան յաճախ բժիշկներէն աւելի լաւ գիտնալ անոր պատճառը : Զկայ պատճառ թէ ընդէ՛ր այսպիսի ցաւեր յառաջ բերելու են սոսկում : Մինչեւ իսկ թէպէտ ջղացաւը կամ յօդացաւը տայ ցաւ այդ կողմանց , էապէս փնասակար չէ : Այսպիսի ժամանակներ լաւագոյն է կենալ չոր տեղ , զգուշանալ հովի հոսանքէ , անձրեւէ կամ խոնաւութենէ , եւ ժամերով մնալ պառկած դիրքով : Այս կու տայ սրտին հանգիստ , եւ աստիճան առ աստիճան կը զօրացունէ զայն : Յաւած կողմանց վրայ տաք եւ չոր բաներ դնել միշտ աղէկ է : Զղացաւէ եւ սրտի հիւանդութենէ տառապողք պէտք է որ միշտ տաքուկ ասուեակ (ֆակեշա) կրեն սրտին կողմերը երբ ցաւն է սաստիկ : Այս կ'արգիլէ ջղացաւը այդ գործարանին , վտանգաւորագոյն տեղին մէջ հաստատուելէ :

ՊԱՌԱԻ ԿԻՆՆ ԻՆՉՊԷՍ ԱԶԱՏԵՑ

ԿԱՌԱԽՈՒՄԲԸ ԽՈՐՏԱԿՈՒԵԼԷ

Ազգատ ծեր կին մը կը բնակէր Պալթիմոր-Օհայոյ երկաթուղւոյ գծին վրայ որ կ'անցնէր վայրի եւ անմարդաբնակ գաւառէ մը յԱրեւմրտեան Վիրձինիա : Պառաւը այրի էր , եւ ունէր միայն մէկ դուստր որ իւր հետ կը բնակէր կոճղերէ շինուած խրճիթի մը մէջ , մօտ խոր կիրճի մը որոյ վրայ ձգուած էր երկաթուղւոյն կամուրջը :

Պառաւը հոս իւր ապրուստը կը հայթայթէր հաւ սնուցանելով եւ հաւկիթ ծախելով , նաեւ իրենց եղանակին մէջ հատապտուղներ եւ ուրիշ մանր բաներ վաճառանոց տանելով : Ստիպեալ էր բազում մղոններ քալել երկար եւ ձանձրալի ճամբէ մը դէպ ի քաղաք , հոն ծախելու համար իւր կողովին մէջ գետեղած բաները : Դէպ ի քաղաք գացող երկաթուղին կ'անցնէր անոր խրճիթին քովէն , բայց ա'յնքան չնչին էր կնոջ ըրած շահը որ ստակ չէր ունենար երկաթուղւոյն անցագինը վճարելու .

ուստի ընդհանրապէս հետիտան կ'երթար վաճառանոց :

Հուսկ յետոյ երկաթուղւոյ սոմսակ հարցընող պաշտօնեան տեսաւ զնա որ կը քալէր երկաթուղւոյ գծին քովէն կամ երկաթուղւոյ գիծերուն մէջտեղ գտնուող հետիտան երթալու ճամբուն վրայէն , եւ բարեբարոյ մարդ մը լինելով՝ յաճախ թոյլ կու տար նմա շոգեկառք հեծնել առանց դրամ վճարելու : Նոյն մարդասիրութիւնը կը ցուցնէին ծերունի կնոջ՝ նաեւ շոգեկառաց մեքենավարը եւ կասեցուցիչը , եւ կը զգային թէ չէին անիրաւեր երկաթուղւոյ ընկերութեան շահուց՝ պառաւէն շոգեկառքի անցագին չառելով : Եւ անա շատ չանցաւ պատահեցաւ արկած մը որ ցուցուց թէ իրաւունք եւ արդարութիւն էր ինչ որ անոնք ըրած էին :

Մարտ ամսուն մէջ անձրեւը կ'իջնէր , եւ լեռներէն վար կը խուժէին հալած ձեան եւ սառի գլորող գոռացող հոսանքները դէպ ի պառաւին տան մօտ գտնուող կիրճը : Գիշերուան մութը կոխելուն հետ բարձրացաւ ջուրց հեղեղը , մինչևեւ որ կինը լսեց երկա-

Թուղւոյ կամուրջին ճայթիւնը , վասն զի իւր յենարաններուն վրայէն խախտելով վար ինկած էր եւ իւր ատաղձները գահաւանդին քարածայռուտ կողերուն զարնուած եւ կտոր կտոր ջախջախած էին :

Գրեթէ կէս գիշեր էր : Անձրեւը կ'իջնէր տեղատարափ , եւ թանձր եւ անաւոր մթու թիւնը կը տիրէր : Կէս ժամ յետոյ կառախուժքը հոն պիտի հասնէր : Գծին վրայ չկար հեռագիր , եւ կայանք իրարմէ շատ հեռի կը գտնուէին : Պառաւն ի՞նչպէս կրնար կառախուժքին իմացունել մտալուտ անռելի արկածը : Իւր բնակարանին մէջ հազիւ ունէր ճարպէ մոմ մը , եւ չէր կրնար ճարպով կամ ձէթով , եթէ ունենար իսկ , վառել լոյս մը որ մէկ վայրկեան տոկար հովի եւ անձրեւի այդ փոթորկին մէջ :

Վայրկեան մը պէտք չէր որ կորսուէր , եւ կնոջ միտքը վայրկեանի արագութեամբ կը գործէր : Նա կտրեց իւր միակ մահճակալին չուանները . շալկեց անոր մերկ ցիցերը եւ վրայի եւ քովի ձողերը : Իւր դուստրն ալ հետեւեցաւ իրեն՝ առնով իւր երկու փայտէ

աթոռները : Զառ ի վեր հողակոյտին վրայ ելան մագլցի , հոն գիզեցին բոլոր իրենց անական կահ կարասին երկաթուղւոյ գծին վրայ միայն քանի մը ձողաչափ հեռի խորտակեալ կամուրջին անռելի վայրէն որ կը խոխոջէր գոռացող հեղեղին յարուցած կարկաշատահանքէն : Կառախուժքին բոմբիւնը եւ շառաչիւնը հասաւ հեռուանց անոնց ականջին ճիշդ երբ նոքա վառած էին իրենց տան այն լաւ մը չորցած կարասիները : Խարոյկը կը բոցավառէր գիշերը արձակելով իւր կարմիր եւ փողփողուն լոյսը երկաթուղւոյ գծին երկայնութեամբ : Տասնեւհինգ վայրկեանէն պիտի սկսէր մարիլ . բայց պառաւը կարող պիտի չըլլար վերստին բոցավառել զայն կանաչ թաց փայտով :

Կառախուժքին որոտումը բարձրացաւ : Կրակէն հինգ մղոն միայն հեռի կը գտնուէր ժամանակին պիտի տեսնէին՝ արդեօք զայն : Պառաւը պատռեց հանեց կռնակէն իւր բրդեղէն կարմիր շրջազգեստը եւ կապելով զայն ձողի մը ծայրը , վազեց գծին վրայ ելաւ եւ վառելով զայն , կը ճօճէր իւր երկու ձեռուրնեւրով , մինչ դուստրը քիչ մը առջեւէ իւր գըլ-

խուն շուրջը կը դարձունէր ակթոռի բոցավառ ձող մը :

Մօտալուտ վտանգին անդէտ հարիւր ուղեւորաց կեանքերը կախուած էին յաջորդ վայրեկքէն : Գետինը կը դողար ծերունի կնոջ ոտքին ներքեւ : Շողեգործուոյն խոշոր կարմիր աչքը երեւցաւ , կու գար կը մօտենար կորագծի մը վրայէն : Կառախումբը մեծագոյն արագութեամբ կը սլանար . բայց կասեցուցիչ պաշտօնեայն իւր բոլոր զօրութեամբ կը ջանար կը ճգնէր կեցունել անուոց ընթացքը . անիւներուն թաւալումը հետզհետէ յամրացաւ , եւ ի վերջոյ կեցան ճարճատող կրակին քով , որ տակաւին բաւական լոյս կ'արձակէր եւ կը ցուցնէր խորտաբորտ եզրերը սեւ անդունդին ուր , եթէ պառաւին նշանը չըլլար , պիտի գլորէր կառախումբը բոլոր ուղեւորներովն հանդերձ , եւ պիտի բերէր այնպիսի անաւոր եւ սոսկալի մահ եւ կորուստ , որոյ վրայ մտածելն իսկ սարսափ կ'ազդէ մարդուս :



ՍԵՒԱՄՈՐԹԻՅ ՍՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամերիկայի Հարաւային Նահանգաց սեւամորթին համար ամէն բան նշան եւ նշանակութիւն ունի : Գրեթէ չէք կրնար շարժիլ առանց սնապաշտութեան մը հանդիպելու : Մութը կոխելէն ետքը մոխիրը վերցուր , նա կը հաւատայ թէ մահ կը բերես տան մէջ : Գիշերը համնելէն ետքը աղբ թափէ դռնէն դուրս , ատոր հետ դուրս կ'աւելես ընտանեաց հարստութիւնը : Կաթ թափէ գետինը , կովերուն կաթը կը ցամքի : Եթէ անէն դուրս ելլելէդ ետքը պատահի որ ետ դառնալու պէտք ունենաս , դարձեալ ճամբայ ելլելէդ առջ նստէ , թող ըլլայ մի միայն վայրկեան , եթէ ոչ ապարդիւն կ'ըլլայ ճամբորդութիւնդ : Բուին ճիշդ մահուան նշան է , ինչպէս եւ հուլիսիլըրուիլ թռչնոյն երգը՝ եթէ լսուի ընակարանի մը մօտ . բայց անտաօին մէջ չունի փասս : Սպաննէ մողէս մը , եւ անոր ընկերը կուգայ կը համրէ ակռաներդ եւ դու անշուշտ կը մեռնիս : Շան ոռնալը նշան է

Թէ պիտի մեռնի ընտանեաց անդամներէն մին, սոյն չարիքը կը պատահի նաեւ երբ հաւը կարկաչէ : Այսու ամենայնիւ կրնայ չարիքէն խոյս տրուիլ եթէ այս վերջին պարագային մէջ անմիջապէս սպաննուի հաւը, — միւս եւս եւ պարզ օրինակ Սատանային աքաղաղ գոհելու սովորութեան առ ի քառութիւն : Եթէ մեռեալի մը աչուքները չեն գոցուիր, կը դիտեն նոյն ընտանեաց անդամներէն մին որ նա եւս շուտով պիտի մեռնի : Երբ գերեզման մը կը փորուի, գործածուած բրիչները, եւ այլն, պէտք է գիշերը դուրսը թողուլ, եթէ ոչ շուտով ուրիշ մեռեալի համար գործածելու պէտք պիտի ըլլան . եւ հարկ չէ վախնալ թէ պիտի գողցուին, վասն զի գողը ինք իւր գլուխը պիտի բերէ դատապարտութիւնը : Փայտատը (ջափնս) տնէն ներս տանիլը մեծ գոբաղդութեան գուշակ է, ինչպէս կ'ըսէ պառաւը, եւ թռչնոյ մը պատուհանէն կամ դռնէն ներս թռչիլը անշուշտ ազէտ կը բերէ : Եթէ ձեռքդ կեռայ, փայտի վրայ չփէ գայն, եւ զիր գրպանդ, եւ ստակ կամ պարգեւ պիտի ընդունիս : Եթէ աչքդ խաղայ .

պիտի լաս ընդ հուպ : Եթէ օձ մը կը կտրէ ճամբադ, զգուշացիր թշնամեացդ կողմէ տեղի ունենալու վնասներէ, որոց դէմ կրնաս պահպանուիլ եթէ հալածես օձը եւ սպաննես գայն : Անասնոց զստին յօղուածոյ փոքր ոսկրը եթէ գրպանի մէջ կրուի, յուռութք (թրչաւը) է չարակնութեան (նազար, պիւշիւ) դէմ առ հասարակ, եւ յօգացաւութեան դէմ ի մասնաւորի : Եթէ թռչունք քու մազդ գործածեն իրինց բոյնը շինելու, գլխացաւ պիտի ունենաս մինչեւ որ ձագերը փետրաւորին եւ թռչունք թողուն բոյնը : Հասարակ բան է որ երբ փոքրիկ սեւամորթ մանկունք միասին խաղացած ատեն անոնցմէ մին ծառի բարակ ճիւղով թեթեւ վէրք մը տայ ուրիշի մը եւ գօչէ յաղթական կերպով, « Ահա վիրաւորեցի զքեզ », վիրաւորուողը կը պաղատի անոր որ հարուածն ընդունող նոյն տեղւոյն երկրորդ անգամ զարնէ նոյն ձեռքով : Զնուրնները գլխուն վրայ դնելը նեղութիւն դիզել է : Աղ նետել կրակին վրայ՝ զքեզ կռուոյ կը գրգռէ մերձաւորիդ եւ ամենասիրելոյդ հետ : Սնապաշտ սեւամորթը երբ

ես դառնայ մի եւ նոյն ճամբէն , խաչածեւ
 մը կը դժէ իւր ոտքով եւ կը թքնէ վրան ,
 եթէ ոչ կը հաւատայ թէ ձախորդութիւնք
 անշուշտ պիտի պատահին իրեն երբ յաջորդ
 անգամ անցնի այն ճամբէն : Դատարկ որբան
 օրելը չարիք կը բերէ մանկիկին . եւ եթէ
 մանուկ մը ակռայ հանած ժամանակը հայելին
 նայի , զժուար կը հանէ ակռան : Տախտա-
 կամածին վրայ սլառկած մանկան վրայէն
 անցնելով՝ մանուկը փոքր կը մնայ եւ կ'ըլլայ
 փափկակազմ . եթէ մանուկը ծեծուի աւելով ,
 բոլոր իւր կենացը մէջ անալիտան կ'ըլլայ :
 Ով որ կատու կը սպաննէ , այլ եւս կը զըր-
 կուի իսպառ յաջողութենէ . եւ այն զժբազըր
 որ հայելի կը կոտրէ , թող սպասէ եօթը
 տարի նեղութիւններ կրելու : Սեւամորթը
 կը հաւատայ լուսնին , եւ իւր կենաց բոլոր
 գործառնութիւնները լուսնին երեւոյթներուն
 կը յարմարցունէ : Եթէ իւր խողը մորթէ
 լուսնի երկրորդ կիսամսէին , անոր միսը սա-
 նին մէջ կը կծկի հետզհետէ եւ կը չքանայ .
 եւ սակաւագէտ չէ որ սեւամորթ խոհարար
 մը մսին անյայտացման վրայ մեկնութիւն

մը տայ ըսելով , « Անշուշտ այդ միսը մոր-
 թուած է լուսնին երկրորդ կիսամսէին » :

ԱՐՏԱՍՈՒՔ Ի ՎԵՐԱՅ ՎԵՐ . ԱՂԵՔՍԱՆԴԻ
 ձէձիՁԵԱՆԻ

Տըխրազդեցիկ լուր մահուան
 Երբոր առի ես այգուն ,
 Բեկեալ սիրտ իմ շուտ լեցաւ
 Վիշտով , կոծով , ի մեծ ցաւ :

Աւա՛ղ , արեգ մ'ալ չիջաւ ,
 Փողփողուն շող մ'ալ ինկաւ .
 Իրօք ջան մ'ալ բոցավառ
 Իսկոյն եղաւ լուսասպառ :

Հայր մ'էր տեղւոյն աղքատաց ,
 Մըխիթարիչ եւ գըլթած .
 Կուզենք ըզնա . ո՛ւր է , ո՛ւր ,
 Սակայն , աւա՛ղ , չիք . ի գո՛ւր :

Հովիւ էր նա բարերար ,
 Սընուց իւր հօտն անդադար

Ի յոյս , հաւատ եւ ի սէր ,
Զոր միշտ սիրով բարբառէր :

Վըրկայ մ'էր նա կենդանի ,
Աստուածային Սուրբ Բանի .
Մինչեւ կենաց իւր վախճան
Ճշմարտութեան էր պաշտպան :

Ծառայ բարի Աստուծոյ ,
Անօթ գըթոյ եւ սիրոյ ,
Թըռեաւ ի մէնջ ըշտապաւ ,
Տալով մեզի վիշտ ու ցաւ :

Դուք , սիրելիք վըշտացեալ ,
Ա'խ , մի մոռնաք իւր անցեալ .
Վառ պահեցէք յիշտակ
Անկեղծ սրտի ի յատակ :

Անդր. Կ. Իփէֆնեան

ԳԻՆԵՎ ԱՃԱՌԳՑ ՃՇՄԱՐԻՏ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Ըմպելասէր բարեկամք ,

Պատիւ ունիմք ծանուցանել ձեզ ամենուր
թէ Բարեկենդանի , Ձատկի եւ համայն տօ-
նախմբութեանց առթիւ բացած եմք մի հոյա-
կապ եւ բազմաճղի վաճառանոց , յորում կը
վաճառին գինի , օղի , գարեջուր եւ շարք մը
այլազան ոգելից ըմպելիւներ : Սիրով կը հրա-
ւիրեմք ամեն դասակարգի անձնաւորութիւն-
ները — պաշտօնեայ , ժողովուրդ , ազնուա-
կան , հարուստ , աղքատ , ուսեալ , անուս ,
արհեստաւոր , վաճառական — ի մասնաւորի
զայնպիսիս որք ի վաղուց անտի մեծ կա-
րեւորութիւն ընծայած են սոյն օրինակ ըմ-
պելեաց : Ի հաճոյս ըմպողաց նոր ախորժ եւ
նոր զրգիւռ առթելու ի նպաստ կան բիւրա-
ւոր տեսակներ զորս պատրաստած եմք կարի
խնամով :

Ազնիւ յաճախորդաց շահեկան արդեանց
յապացոյց նորանոր փաստից եւ փաստաբա-
նութեանց պէտք չունիմք , զի պարտուց

փորձառութիւնք անհերքելի փաստեր են եւ կարող միանգամայն հաւատաւելու թէ հաստատութիւնս ձեռնհաս է յարուցանել բազմաթիւ արբեալներ, Մեր վաճառատան բիւրացիի ըմպելիօք անյապաղ սնունդ եւ աճում պիտի մատակարարեմք կռիւներու, գողութեանց, աւազակութեանց, ոճրագործութեանց, շնութեան, անձնասպանութեան, եւ այս կարգի աղիտից :

Կը խոստանամք կարի յաջողակութեամբ վրդովել թէ՛ անհատից, թէ՛ ընտանեաց եւ թէ՛ հասարակաց խաղաղութիւնն, երջանկութիւնն եւ բարեկեցութիւնն : Այսու կը սերմանեմք թշուառութեանց սերմեր, կը կըրկնապատկեմք առօրեայ ծախքեր, կը բազմապատկեմք հիւժիչ ախտեր, տառապեցուցիչ հիւանդութիւններ, մահացու արկածներ, խելագարներ, յիմարներ, որբեր, այրիներ, դատարկապորտներ, թափառաչրջիկներ եւ բանտերու, աղքատանոցներու, անկելանոցներու, մինչեւ իսկ կախաղաններու թշուառ զոհեր :

Առաջադրած ենք յաջորդ սերունդէն զո-

մանս ընել տխմար, արատաւոր, տխեղծ, անդամալոյծ, կաղ, կոյր, հաշմանդամ, քինախնդիր, անհաշտ, գոռոզ, ամբարտաւան, դաժանաբարոյ, անդուծ, անժուժկալ, խարեբայ, ստախօս, կեղծաւոր, անղգամ, յանդուգն, նենգամիտ, նենգախորհուրդ, չարահաւան, զեղխ, հեշտասէր, շուայտաբարոյ, չողմաբարոյ, չարաբան, բանսարկու, քսու, որկրամոլ, ընտանեաց աւերիչ, ընկերութեանց պառակտիչ, միութեանց քայքայիչ, անհատից կործանիչ : Ի հակիրճ բան՝ պիտի ջանամք վերոյիշեալ ըմպելեաց վաճառամբ եղծանել ծնողական, որդիական եւ ընկերական սիրալիր պարտականութեանց յարաբերական փոխանակութիւնները, եւ թէ՛ քաղաքական, թէ՛ կրօնական պաշտօնէից ոմանց մոռցունել իւրեանց պաշտօնին բարձրութիւնն, նուիրականութիւնն, նպատակն եւ յարգն : Այսու ըստ մասին կը յաջողիմք նուաստացունել երկու պաշտօնէից վսեմութիւնն եւ լինել հսկայ խոչընդոտ քաղաքական, կրթական եւ կրօնական յառաջադիմութեանց : Յաւուրս ամե-

նայն աղիտից , ընդարձակ պողոտայ կը բա-
նամք զայլս առաջնորդելու Ֆիզիքական , հո-
գեկան եւ յաւիտենական մահու :

Ի դիմաց ժուժկայաց Ընկերութեան

Յ. Յ. ԼԵՆՈՆԵԱՆ

ԽԵՂՃԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ

Հուշակաւոր մարդասէր Տոքթոր Պէճնար-
տոն է այն զորմէ ունիմ պատմել , Ծննդեամբ
Իռլանտացի՝ եկաւ նա 1866ին ի Լոնտոն բժշ-
կութիւն ուսանելու , ուր սովորական պան-
դոկներու մէջ՝ փողոցի վայրենացեալ մանկա-
հասակ բնակչաց — երկսեռ անտէր անտէրունջ
թափառող տղոց — հետ խիստ մօտէն ծանօ-
թացաւ : Օր մը հիւանդ տղայ մը տեսնելու
հրաւիրուելով ծանր վիճակի մէջ գտաւ զայն .
տղան բժշկել կարենալու համար անպատճառ
իսկոյն հիւանդանոց փոխադրել պէտք էր .
սակայն տան տիկինը որոյ քով տղան կը
մնար , անգութ պառաւ մ'էր եւ կ'ըսէր թէ
պիտի չթողու որ «լակոտը առնէն երթայ

մինչեւ որ չհատուցանէ իւր ստակը » , եւ
հիւանդին հանդերձները առնելով գնաց : Սէ-
րը հնարիչ է : Դեռատի բժիշկը ըսպէի մը մէջ
որոշեց ընելիքը . իսկոյն հանեց վերարկուն ,
տղան մէջը փաթթեց եւ իւր բազուկներուն
վրայ առնլով հիւանդանոց տարաւ զայն , ուր
քիչ առնէն ապագինեցաւ նա : Այս դէպքը
չարժառիթ եղաւ մեծանուն բժիշկին միջոց-
ներ ձեռք առնլու դատարկապորտ տղոց հա-
մար աշխատանոց մը հաստատելու : 1867ին
Տր. Պէճնարտոյ վարձեց փոքրիկ սենեակ մը
ուր կը բերէր կը տեղաւորէր անտէր թափա-
ռիկ մանկտիք , զորս նա խնամով ամէն գի-
շեր փողոցներուն կամուրջներուն տակը , բե-
ռան սակառներու , ապրանք փոխադրող կառ-
քերու , վերջապէս հազար եւ մէկ ծակ ու
ծուկի մէջ գտնելով հոն կ'առաջնորդէր : Ան-
գամ մը նա 73 այսպիսի անխնամ անազուրկ
տղայք միասին գտաւ Լոնտոնի փողոցներէն
մէկին կարծր սալալատակաց վրայ պառկած :
Հաւատաց , աղօթեց եւ գործեց Տր. Պէճնար-
տոյ կարեկից սիրով , եւ Տէրը հրաշալի կեր-
պով օգնեց իրեն . այնպէս որ նոյն տարին

յաջողութեամբ իւր քննութիւնն անցունելով, կարողացաւ հիմնել 2 գթութեան տուներ ալ : Երկու տարի յետոյ, այսինքն 1870 ին 140 տղայոց համար ընդարձակ պատասպարան մը կառոյց : Ամէն երեկոյ նորատի բօիչկը սողօթքի ժողով մը կ'ընէր իւր տղայոց հետ : Անգամ մը յետ պաշտաման փոքր տղայ մը հարցոց թէ արդեօք թոյլ կը տրուէր իրեն գիշերը սրահին մէջ անցունել . — նախորդ գիշերը կառքի մը մէջ քնացած էր : Բարեսիրտ Տօքթորը զայն հետը տուն տանելով կերակրեց եւ հագուեցուց, եւ Յիսուսի վրայով խօսեցաւ նորա հետ : Տղան հետաքրքիր ուշադրութեամբ մտիկ ըրաւ Փրկչին պատմութեան, եւ երբ լսեց թէ ինչպէս Նա ի Գեթսեմանի ձերբակալուեցաւ, յուզեալ սըրտով ընդմիջեց . «Արդեօք մեղաւորներ էին, Պարոն, զինքը բռնողները» . եւ երբ բարեսիրտ Տօքթորը շարունակեց իւր խօսքը, պատմելով երկնից վրայ եւ այն փառաւոր կենաց մասին գոր հոն պիտի վայելեն բոլոր հաւատացեալք, խեղճ տղան որ սաստկապէս հալածեալ արարած մ'ըլլալ կը թուէր, մտա-

հողութիւն արտայայտող նայուածքով մը հարցոց «Կ'աղաչեմ, Պարոն, ըսէք ինձ հոն վախնալու անձեր չկա՞ն» : Ո՛րչափ կարեւոր էր այսպիսի խղճալեաց ոչ միայն ապաստանարան եւ օրապահիկ այլ նաեւ ազագայ բարեկեցիկ կեանքի մը համար հարկ եղած միջոցն հայթայթել, ընձեռելով նոցա պատեհութիւն եւ զիւրութիւն արհեստ մը սորվելու : Տէրը այս վեհ նպատակին իրագործմանն ալ յաջողութիւն պարգեւեց, այնպէս որ շուտով հաստատուեցան դպրոցին հետ նաեւ գործարաններ ուր պատասպարեալք՝ վրձին շինելու, կօշիկ կարելու եւ դերձակութեան պարագելու սկսան : 1870ին Տր. Պէրնարտոյի նորոգապէս հաստատած վարժարանաց մէջ 2,000է աւելի անտէր եւ խղճալի տղայք պատասպարուած էին : Նա հետզհետէ ձեռնարկեց կազմելու «Փայտահատից Վաշտ»ը որ կը բաղկանար այնպիսի տղայոցմէ, որոնք խումբ խումբ ասլին անդին կ'երթային փայլուն կացիւններ յուսին եւ շնորհքով հագուած յարմար համազգեստիւք փայտ կտարելու կամ կտրելու անտառներէն : Յետ այսօրիկ նորա

աշխատութեամբ կազմուեցաւ «Քաղաքային
Բեռնակրաց Վաշտ»ը, որոյ անդամք խիստ
հսկողութեան տակ կ'երթային հասարակու-
թեան ծառայել համեստ աւուրչէքով: Որք
եւ անպաշտպան աղջկանց համար ալ պատու-
պարան մը հաստատեց նա., եւ վատահամբաւ
ընդարձակ թատրոն մը գնելով զայն մասամբ
ժողովարանի եւ մասամբ աշխատաւորաց հա-
մար ճաշարանի եւ զբոսարանի վերածեց:
Տասը տարուան շրջանի մէջ մարդասէր Տոք-
թորին ջանիւք եւ շնորհիւ 10,000 տղայք
պատուած էին թշուառութեան հազար եւ
մի ճիրաններէն: Տեսէք, այս բոլոր մեծա-
գործութիւնները պարզ բժիշկ մ'ըրաւ, մի
եւ նոյն աստե՛նը ըստ բանի Տեառն մերոյ
Ձայս ընելով եւ միւսը զանց չառնելով: Նա
իւր պաշտօնի եւ կոչման պարտականութիւն-
ներն ալ անթերի կատարեց: Դուն ինչ ըրիր,
սիրելի ընթերցող, քու մինչեւ հիմա ան-
ցուցած կեանքիդ մէջ. ո՛հ, եթէ դուն ցարդ
քու Տէրօջդ եւ Փրկչիդ համար բան մ'ըրած
չես, բնաւ զմտաւ չածելով թէ Յիսուս Քրիս-
տոս զքեզ ալ կը հրաւիրէ իրեն սիրոյն հա-

մար իւր եղբարց ծառայելու, այլ եւս մի յա-
պաղիր անմիջապէս դանուած շրջանիդ մէջ
ձեռքէդ եկածը ի գործ դնելու ի փառս Քրիս-
տոսի եւ յօգուտ ու ի մխիթարութիւն Անոր
թշուառ եղբարց, եւ եթէ չես կրնար մեծ
բան մ'ընել, ըրե՛ ինչ որ կրնաս, քանզի
կարողութենէդ վեր բան մը չպահանջուիր
քեզմէ, այլ միայն թէ հաւատարմաբար գոր-
ծածել քեզ յանձնուած տաղանդը, եւ երբ
քիչին մէջ հաւատարիմ ու աշխոյժ ըլլաս,
մեծ պիտի լինի քո վարձքը. Տէրը պէտք
ունի նաեւ իւր օժանդակութեանդ եւ աշխա-
տութեանդ, հոգ չէ թէ ո՛րչափ փոքր լինի
քո ընելիքը յաչս մարդկանց, Աստուծոյ առ-
ջեւ մեծ, գովելի եւ պատուական է այն եւ
ընդունելի. բաց աչքերդ եւ պիտի տեսնես
բաւականէն աւելի թշուառութիւն, աղէտ
եւ վիշտ քու շուրջդ եւ մօտդ որում դուն
կրնաս եւ պարտիս դարման տանել եւ սփո-
փանք մատակարարել. դեռ կեանքը պատեհ
ժամանակ է, աշխատէ քանի որ ցորեկ է,
զի շուտով կուգայ մութ գիշերը, այսինքն
մանը, յորժամ այլ եւս չես կարող գործել:

ՍԵՆԵԿԻՆ ՄԷՋ ԳՈՂ ՄԸ

Հարուստ տիկին մը երեկոյ մը տան մէջ առանձին կը գտնուէր իւր միակ ծառային հետ : Իւր սենեկին մէջ մինչ իւր գոհարեղէնները կը հանէր վրայէն եւ կը զետեղէր դարակին մէջ իրենց սեփհական տեղերը , զիպուածով իւր աչուքները վերցուց զէպ իւր զիմացը գտնուող հայելին , եւ անկիւնը դրուած ճրագին լոյսին միջոցաւ տեսաւ հայելւոյն մէջ մարդու մը կերպարանքը որ սենեկին կեդրոնը գտնուած մեծ սեղանին ներքեւ կձկուած կեցած էր , բայց ամէն կողմէ ծածկուած էր եւ միայն կ'երեւէր հայելւոյն մէջ՝ իւր պատկերին անդրադարձուելովը : Այս կերպով տիկինը տեսաւ որ մարդուն մէկ ձեռքը տախտակամածին վրայ էր : Այս ձեռքին երկու մատերը պակաս էին . եւ նա ճանչցաւ իսկոյն թէ իւր մօտիկը կը գտնուէր ամենէն մեծ չարագործներէն մին , որոյ ոճիրք եւ գազանական արարք սարսափեցուցած էին շուրջ գտնուող երկիրը մղոն-

ներով տեղ : Ո՞վ կը մեղադրէր տիկինը եթէ ճիշտ արձակէր կամ աճապարանօք վաղէր դէպ ի դուռը : Եթէ ըրած ըլլար այսպէս , կնքուած էր իւր ճակատագիրը : Բայց զսպեց ինքզինք , կեցաւ հանդարտ , լմնցուց իւր սկսած գործը դարակին մէջ . այնուհետեւ հանդարտութեամբ քալեց զէպ ի զանգակը , հնչեցուց զայն որպէս զի գար տան մէջ գտնուող մէկ ծառան : Երբ սպասուէին եկաւ , տիկինն ըսաւ անոր անխռով կերպով , «Մա՛րիամ , վազէ Մր. Բի (մօտերը բնակող գոհարավաճառ մը) եւ ըսէ թէ կ'ուզեմ որ ինձ ետ խրկէ աղամանդներս զորս նորոգելու համար իրեն յանձնած եմ : Անոնք ամենէն թանկագինն են բոլոր ունեցածներուս մէջ , եւ եւ անհանգիստ եմ անոնց այսչափ երկար ժամանակ սնէն զուրս գտնուելուն համար : Ըսէ անոր որ քու հետք ինձ զրկէ զանոնք այս գիշեր թէպէտ լմնցած չըլլան ալ : Կեցիր , տոմսակ մը գրեմ , մի գուցէ սխալմունք մը ըլլայ : » Այսպէս տիկինը նստաւ առերեւոյթ ամենայն հանդարտութեամբ , այն նոյն սեղանին առջեւ որոյ ներքեւ մարդը ծածկուած կը կենար , եւ

գրեց տոմսակը : Հարկաւ նա չգրեց ազա-
մանդի վրայ , այլ՝ օգնութեան համար : Աղ-
ջիկը առաւ տոմսակը եւ ելաւ դուրս , եւ
տիկինը բոլորովին մինակ կը սպասէր սոս-
կալի մարդուն քով որ իւր մօտիկը կը գըտ-
նուէր պահուըտած : Որպէս զի կասկած չյա-
րուցանէր , սկսաւ զբաղիլ զանազան բաներ
փոխադրելով այլ եւ այլ տեղեր : Ի՞նչպէս
սոսկալի էին այն վայրկեանները յորս կը
սպասէր նա : Եւ ի՞նչ ուրախութիւն եւ ա-
պահովութիւն զգաց առնելով զանգակին ձայնը
երբ աղջիկը ետ դարձաւ՝ իւր հետ բերելով
չիշեալ բարեկամը եւ ոստիկանութեան պաշ-
տօնեան որք ձերբակալեցին մարդը դեռ սա
ընդգրիմանալու միջոց չունեցած :

ՔՕԼԷՐԱ ՈՒ ԱՆՈՐ ԴԱՐՄԱՆԸ

Որովհետեւ շատ հաւանական է թէ Քօլէ-
րան անանկ տեղեր տարածուի , ուր բժիշկ
չկրնայ գտնուիլ , լաւ համարեցինք Աւետա-
բերէն արտատպել հետեւեալ տեղեկութիւն-
ներն :

Քօլերա ախտի բնութիւնը եւ դարմանը

Առ հասարակ Քօլէրա ախար երկու մասէ
կը բաղկանայ : Նախ՝ փորքշուք եւ փոխել ,
երկրորդ՝ կենսական ուժին խնայը կամ հատ-
նիլը :

Նախ՝ փորքշուքով կ'սկոյի , առանց ցու մը
ուռենալու : Աս փորքշուքը շատ չքշեր ջուրի
պէս կ'ըլլայ , կամ մէջը բրինձի մանր կտոր-
տուքներով խառն բրինձի ջուրի պէս . ու ախ-
տին տեւողութեանը միջոցին հիւանդ երբեմն
քիչ երբեմն շատ՝ առատ դեղնագոյն ջուր մը
կը փոխէ . այն ատեն շուտով բժիշկ մը կան-
չելու է :

Ուտելիք

Բրինձի ջուր , առանց եղի աղէկ մը եփած
բրինձ կամ խորոված հաց ու թէյ միայն տա-
լու է Քօլէրայէն բռնուած ատենը ու անցնե-
լէն ետեւ երկու օր ալ ուտելիքը նոյնպէս
չարունակելու է :

Խմելիք

Հիւանդը շատ ծարաւ զգալով՝ կաղաչէ որ
որ ջուր տան , բայց տրուելու չէ : Պզտիկ

գաւաթ մը պաղ ջուրը շատ հեղ փորքշուքը նորէն սկսած է : Թող պաղ ջուրը բերանը առնելով կոկորդը ցողուէ եւ զուրս թափէ : Արաբիոյ խէժի (զաւխ աւապի) ջուրէն դգալ մը ժամանակէ ժամանակ թող խմէ : Ասիկայ ընելու համար 4 տրամ Արաբիոյ խէժը 100 տրամ ջուրով լուծելու է : Սովորապէս 24 ժամէն ծարաւը կ'անցնի :

Երկրորդ դասը՝ ուժին ինյալը կամ հատնիլն է : Ասիկայ վտանգաւոր մասն է : Ատոր նշաններն են՝ ձեռքի՝ ոտքի՝ բազուկներու եւ սրբունդներու , եւ մինչեւ անգամ լեզուի եւ քիթի պաղիլն ու երեսներուն ու ձեռուրներուն կծկրտիլ քաշուիլը , անզգայ ըլլալն ու ցնցումը (ափսաւն) :

Դարմանելու կերպը

Երկու հոգի հիւանդին ձեռուրները՝ բազուկները , ոտուրներն ու սրունքները շփելու են , ետքը մանանեխի շախա դնելու է ոտքին սրբուրներուն ու ձեռքերուն , (կամ տաք ջուրի շիշեր անոնց քովերը) : Ապուրի դգալ մը զուտ պրակնի՝ ուժ՝ կամ աղէկ ըրախի տալու է

15 բուպէն հեղ մը , մինչեւ տաքութիւնը դառնայ ու զգալ սկսի : Թէ որ չտաքնայ՝ հիւանդը կը մեռնի , փորքշուք ըլլայ թէ չէ . ուստի բնաւ ատեն անցընելու չէ շուտով ամէն յիշուածներն ընելու է մինչեւ որ բժիշկը հասնի :

Թիֆոյիսի կամ ջերմութեան վիճակը

Փորքշուքն ու փսխելը կտրուելէն ետեւ՝ շատերը քիչ շատ ջերմ կուեննան : Աս ալ ախտին մէկ մասն է :

Դիսոդոքիւններ

Փորքշուք եղողը բնաւ ժամանակ կորսնցընելու չէ դեղ առնելու , փորքշուքը ինչ պատճառէ եկած ըլլայ թող ըլլայ , ապահով ճամբան մէկէն դեղ առնել սկսիլն է : Աս տրուած տեղեկութիւններուն ճշդիւ հետեւելով՝ շատերը պիտի ազատին :

«Լոստոն , Յուլիս 22. 1865 :

Տօքթոր Պուտի անուանի բժիշկի մը , 1861 ին Անգլիայի մէջ Գօլէրա եղած ատենը կառավարութեան տուած տեղեկութիւնները՝ ախտին առջեւը առնելու աւելօք յաջողելով

գործածուած ըլլալուն . յիշեալ բժիշկը նոյն ախտին նկատմամբ սա հետեւեալ տեղեկուած թիւնները ինծի հաղորդած է :

Քօլէրան՝ անկէ զարնուողին փսխունքին եւ փորքշուքին մէջ գտնուած թոյնէ մը առաջ կու գայ : Փորքշուքով ելած մնարուածիւնը՝ հիւանդին անկողինը ու արտաքնոցները կամ անոնց ճամբաները պլըշկելով՝ թոյնը օդին կը խառնուի ու անկէ խմելու ջուրերուն ալ կ'անցնի : Ասոնցմէ ախտը շատ շուտով կը տարածի . նաեւ հիւանդին նայողներուն մընտրութեան դպած ձեռքերէն կը պլըշկի : Ախտին տարածուելուն առջեւն առնելու համար՝ հիւանդին մնարուածիւնը եղող ամանին մէջ անմիջապէս դեղ դնելու է որ հոտը ջնջուի կամ զիմֆի *fyornis* կամ թէ կիրի *fyornis* . Թէ որ ասոնք չգտնուի՝ կրնայ զան քուրճու գործածուիլ , ու նաեւ փոշի եղած ածուխն ալ շատ աղէկ կ'ըլլայ : Հիւանդին նայողներուն ձեռքերը շատ մաքուր պահելու է , մնարուած լաթերը , անկողինի ծածկոց ըլլայ թէ ուրիշ բան այրելու է : Խմուած ջուրերէն չպլըշկելու համար , ջուրը խմելէն առաջ եփելու է :

Քօլէրա եղած ու տակաւին շարունակած տեղերը ամէն արտաքնոցներն ու մնարուած թեան ճամբաները վերը գրուած դեղերուն մէկովը ամէն օր մաքրուելու է : Փորհարութեան (խնայ) ալ Քօլէրայի պէս զգուշութիւն ընելու է : Աս կանոններուն հոգ տարուելուն պէս՝ Քօլէրան շուտով կը պակսի ու բոլորովին կը վերջանայ :

Մուսուրուս

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Տանդ իւրաքանչիւր մասը եւ անկիւնը բոլոր փտած եւ զարշահոտ առարկաներէն ազատ պահէ , եւ թող որ արեգակ եւ օդ ամեն մի անկիւն ազատ մուտք գտնէ . մաքուր օդը անհրաժեշտ է առողջութեան :

Եթէ պաղլեղի կամ պօրաքսի փոշի ցանես մըջիւններուն գտնուած տեղը , շուտով կը ցրուին անոնք :

Քարիւղը փետուրով մը մուկներուն զրտ-

հուրած ձեռքերուն քսելով կ'անհետանան :

Միջատներէ խայթուած մասին վրայ դիր ջախջախեալ սոխ մը , ամօնիա ջրախառն կամ քիչ մը տիղմ :

Երբ հարուածով աչքը կարմրի եւ բուրբ-տիքն ուռնեայ , տաք ջրոյ մէջ լաթ մը թաթ-խելով վրան դնելու եւ կրկնելու է մինչեւ ցաւն անցնի : Երբ աչաց մէջ կիր երթայ , ջրախառն քացախով պէտք է լուալ :

Մարմնոյ ո եւ է մասի կտրուացքին վրայ առատ սեւ պղպեղ դնելով պէտք է կապել . արիւնը անմիջապէս կը դադրի :

Հանդերձներն բռնկած առեն անմիջապէս բրդեղէն ծանր ծածկոցի (Ֆանէլա , կարպետ) մէջ փաթթելու է արկածեալը եւ տախտա-կամածին վրայ գլտորցունելու է , մինչեւ որ բոցը մարի . եթէ լաթերը վէրքին փակած են , մի փրցուներ այլ ազատ մասերն մկրատով մը կտրէ ու հանէ :

Երբ փոքրիկ տղայ մը վախնայ , պէտք է փարատել վախն յոյժ զուարթացուցիչ ձեւե-րով եւ ձայներով , ինչպէս սուլելով , ագա-ղաղի նման խօսելով , ոռնալու ձայներ հանե-լով եւ իսկոյն փարատել վախը :

Կարմիր պղպեղը մկնանց այնքան զզուելի է որ երբ անոնց ապաստանած տեղերը զըր-ուին . չուտով տուռէն կը գաղթեն աւելի հա-ճոյական բնակավայր դառնելու համար :

Կանուխ ել , բացօդեայ տեղեր շարժում ըրէ , եւ ցերեկին մի քնանար . Ընթրիքդ թեթեւ ըլլայ եւ միշտ որոշ ժամու անկողին գնա . քաղջ ջրով մարմինդ սպունքով մը լուա եւ կարծր անձեռոցով մը չորցուր եւ լաւ կը քնանաս :

Օձէն խայթուած տեղին վերի կողմէն պինդ լաթ մը կապէ , ծծէ խայթուածքը եւ թուք . սակայն եթէ բերնիդ մէջ բացուած վէրք ու նիս , ուրիշը պէտք է ծծէ խայթուացքը . տաք ջրով լուա եւ հեղուկ ամօնեաք դիր

վրան եւ այս նախազգուշութիւնք ի գործ
դրած ատենդ բժշկին մարդ խրկէ :

Կոկորդի ցաւի համար անձեռոց մը պաղ
ջրոյ մէջ թաթխէ , քամէ եւ վիզդ լաւ մը
փաթթէ , վրայէն ուրիշ չոր անձեռոց մը
փաթթէ եւ գիշերը այնպէս պառկէ : Թէ ցաւ
եւ թէ ուռ այս միջոցով կը բժշկուի : Հասա-
րակ աղը պաղ ջրոյ մէջ դնելով կըլլայ լաւ
կարկարա մը այսպիսի պարագայից մէջ :

Իւզոտ բիծերն կանհետանան պէնզինով ,
ալքոլով եւ կամ նաֆթայով : Հանդերձի վրայի
թթուի բիծերն ամօնեաքով կելլեն . եթէ հան-
դերձին գոյնը բոլորովին չէ գացած՝ քլօրօ-
ֆօրմը վերստին գոյնը տեղը կը բերէ : Սուրճի
բիծերն նախ տաք ջրով եւ օճառով լուալու
եւ ապա ձձումբի ծուխին ըննելու է : Հաւ-
կիթին բիծերն հասարակ աղով չփուելով կը
հեռանան : Պտղոյ բիծերն օքլալիք ասիտով
կը հեռանան եւ խորի բիծերն քլօրօֆօրմով
կամ ալքօլով :

Քանի մը հաւկիթի սպիտակը անմիջապէս

խմցունելու է թունաւորուողին դեռ բժիշկն
չեկած :

Վէրքերու համար կրակարանէն կտոր մը
վառած ածուխ առ փոշի ըրէ եւ ցանէ վէր-
քին վրայ եւ լաթով մը կապէ :

Խիստ խօսքի խիստ պատասխան տալ ա-
մէն մարդ կրնայ . խիստ խօսքի մեղմ պա-
ասխանն տալ ո՞վ է կարող . լոկ առաքինի
անձը :

Հաւագոյն է երբեմն խաբուիլ , քան միշտ
կասկածանաց հալիլ եւ մաշիլ :

Այր եւ կին յուսախափ պիտի ըլլան եւ
ուստի թշուառ եթէ ի միմեանց կատարելու
թիւն ակնկալեն : Պարտին երկուքն ալ մրցիլ
զիրար յարգելու , խնամելու եւ միմեանց հետ
հաշտ ապրելու մէջ . սրտերնուն մէջ միշտ
քաղցր եւ ազնիւ սէր տածելով առ միմեանս :
Ամուսնական ճանապարհին վրայի փուշերն

Թող փրցունել ջանան եւ ոչ թէ նոր փուշե-
րու սերմեր ցանեն :

Կերակրոյ տեսակներն փոխելն կարեւոր է
առողջութեան համար . Անզգիական նաւու մը
ճանապարհորդք կը մեռնէին միօրինակ կերա-
կուր ուտելով . կերակրոց տեսակները փոխ-
ուելով մահն ալ դադարեցաւ :

Մարդս կրնայ միայն կաթով ապրիլ ինչ-
պէս նորածին մանկունք միայն անով կապ-
րին եւ կը խնամուին : Բժիշկներն կըսեն թէ
լոկ հաց ուտելով ալ կրնայ մարդ ապրիլ ,
բաւ է որ պէտք եղած աղն պարունակէ խմորը
եւ թէփն ալ մէկտեղ ըլլայ :

Հում կաթին մէջ հաց փշրելով ուտելն է
լաւագոյն սնունդ . Լոկ հաց պնդութիւն կը
պատճառէ , բայց եթէ ցորենը խոշոր աղաց-
ուի եւ թէփն ալ ալիւրէն չզատուի եւ ըստ
բաւականին աղ դրուի , ան ատեն հացը խիստ
սննդարար կըլլայ :

Միսը արիւն չինող ուտեստներուն երկ-
րորդ կարգէն է , պէտք է սակայն բուսեղի-
նաց հետ լաւ մը եփուի :

Միւրախաւոր մը կով մը գնեց եւ բնա-
կարանէն մղոն մը հեռու արօտավայր խրկեց :
Օրը չորս անգամ քալելով հոն կերթար , կովը
կը կթէր եւ հացը կաթին մէջ ջարդելով կու-
տէր . այս էր իր միակ սնունդ երեք ամիս եւ
ապա առողջացաւ , զօրացաւ եւ գերացաւ :

Յարթայտակ ամանի մը մէջ դիր հաւ-
կիթներ եւ ջուր լից մինչեւ որ ծածկուին .
դիտէ , եթէ դիրքերնին փոխեն եւ սուր ծայրը
վար եւ լայն ծայրը վեր ուղղուին , գիտցիր
որ աւրուած են :

Երախայք երբեմն ստամոքսի թթուութիւն
եւ անմարսութիւն կուսնենան . դարմանը պարզ
է . գաւաթ մը կաթին մէջ դիր երեք կամ
չորս փոքրիկ դգալ կիրի ջուր , որ դեղավա-
ճառաց քով կը գտնուի եւ այսպէս կերակրէ
երախան :

Պատրաստ եղիր կէս ժամ կամ ժամ մը աւելի տալ գործիդ , քան պայմանադրեալ ժամանակը . այն երիտասարդը որ միշտ ժամացոյցին կը նայի եւ բոպէն բոպէին գլխարկը կը դնէ եւ դաւազանը կառնէ ու պաշտօնավարէն կը մեկնի , թող գիտնայ որ երբ գործերն նուազին էն առաջ իրեն պիտի ըսուի « քեզի համար գործ չունիմ » :

Փոշիացեալ պաղլէղը եթէ անկողնոյ շուրջը ցանես , մուկները քեզի այցելութիւն չեն ըներ . այսպէս կըսուի . փորձէ եւ եթէ ստոյգ է այլոց եւս յանձնարարէ :

Շաքարի ամաններու բերնին բոլորտիքը եթէ կաւիճով լայն գիծ մը քաշուի — կըսեն — մըջիւններն մուտք չեն գտներ : Փորձէ ու ստուգէ :

Սենեակդ բռած (պատանա) ատենդ կիրին մէջ պաղլեղ խառնել տուր . ձձիները կը սատկին ու կը ջնջուին :

Հիւանդին համար քունը աւելի օգտակար է քան որեւէ դեղ : Արեւին ճառագայթք բուժիչ զօրութիւն ունին , ուստի հիւանդին սենեակը ստէպ արեւ տեսնելու է . լոյսն է կենսատու , խաւարն մահացու . բաց պատուհանդ լուսոյ եւ օդի :

Ուսուցիչներուն կը յանձնարարենք հետեւեալ պարզ կանոններն ի զարգացումն իրենց աշակերտաց :

Աշակերտաց ուշադրութիւնը եւ փափաքը շարժէ սորվեցունելիք բաներուդ վրայ : — Անանկ լեզուով ու բառերով խօսէ որ իւրաքանչիւր ուսանող հասկնայ : — Ծանօթ եղած բաներէն ա՛ռ օրինակներդ : — Զանա որ հասկըցած իրողութիւններն յստակ ռճով , ապացոյցներով ու օրինակներով անսխալ պատմեն : — Ստէպ քննութիւն ըրէ : — Շատ կանոններ մի դներ , սակայն դրուած կանոնին կատարեալ հնազանդութիւն պահանջէ : — Տղայք թող հասկնան որ ձեր խօսքը օրէնք ու կանոն է : — Ամենափոքր անհնազանդութիւն

խակ անտես մի թողուր : — Խարուժիւն մի ընկեր . մեծէ եւ փոքրէ , հարուստէ եւ աղքատէ միեւնոյն հնազանդութիւն պահանջէ : — Մի պատժեք տղան եթէ առանց անոր կրնաս հնազանդեցունել : — Լաւագոյն է սիրով քան երկիւղ ազդելով կառավարել աշակերտները : — Մարմնոյ ցաւ չտուող պատիժներն լաւագոյն են : — Գլխուն զարնելը վտանգաւոր է , կամքեղք աւելի վտանգաւոր : — Առաջին յանցանաց համար պատժելն լաւ չէ , յանդիմանէ քաղցրութեամբ : — Երբ բարկացած ես մի պատժեր : — Զանա աշակերտներդ այն վիճակին բերել որ քեզ սիրելնուն եւ յարգելնուն համար հնազանդին : — Աշակերտք ի միմեանց անջատ նստելու են , եթէ հնար է , որով միմեանց վրայ ազդեցութիւն չեն կրնար ունենալ : — Ուսման ատեն բնաւ թոյլ տրուելու չէ խօսիլ : — Պէտք է ինքնաջան սորվիլ վարժուին : — Սերտողութեան ատեն շըրթունք շարժելու չեն : — Առանց ուսուցչին հրամանին ոչ տեղերնուն ելլելու եւ ոչ դուրս երթալու են : — Առանց կարգապահութեան ոչինչ կը յաջողի . ամեն ճիգ ի գործ դիր այս

կանոններն պահել տալու ու դպրոցդ յաջող դիրքի մէջ է :

Ամերիկացիք կապիկներն կը բռնեն անոնց եղած տեղին մօտ արեւեցուցիչ ըմպելիք դնելով . կապիկները կը խմեն ու կը գինովնան . որսորդն կուզայ եւ թեւեղնուն բռնելով եւ խաղալով գիւղը կը տանի զայն , 10—12 կապիկ ալ այս երկուքին ետեւէն կերթան եւ բոլորն ալ կը բռնուին : Սատանան ալ մարդիկ այսպէս կը բռնէ : Զգուշացիր ոգելից ըմպելիքներէ :

Կաղամբի տերեւը որեւէ վէրքի վրայ դըրուելով ոչ թէ վէրքը կը բուժի այլ սպին իսկ կանհետացունէ :

Լայնարեւրան անօթի մը մէջ 4 քաջ ջուր լից եւ հետը 12 տրամ նշաղըրի ոգի խառնէ : Հազ ունեցողն անկողին չմտած թող կանգնի այս անօթին քով որոյ մէջ տաք աղիւս մը ձգելով շոգի մը կելլէ ուր քանի մ'անգամ կրկնուելով ամենախիստ հազն իսկ կը բուժէ :

Սպանիոյ գերեզմանաց մէկուն վրայ սա-
պէս է գրուած :

Աղէկ էի, ուզեցի արեղի աղէկ ըլլալ
Դեղ առի, եւ անա հոս եմ թաղեալ :

Վրէժն է միակ պարտք մը զոր վճարելու
չենք :

Նեղութիւնք կրկնապատկին անոնց վրայ
խորհելով :

Միշտ գոհ ըրէ կինդ, խիղճդ եւ ստամոքսդ :

Բաղձանք նուաղին, հանգստութիւն եւ եր-
ջանկութիւն արեւնան :

Հսկէ խորհուրդներուդ վրայ երբ առանձին
ես, կրիցդ վրայ երբ ընտանեաց մէջ ես եւ
չեզուրիդ վրայ երբ ընկերութեան մէջ ես :

Այսօր շատ տարիներու պատրաստութիւն-
ներ կընես մինչ մահը վաղը քու դուռդ կը
զարնէ :

Աջ եւ ձախ կողմէն մեր հետ կընկերանայ
անստուգութիւն :

Առաքինութիւնը ժառանգական չէ :

Ով որ գիտէ քաղցր խօսիլ քիչ դրամագըլ-
խով կրնայ շատ վաստկիլ :

Շատ գիտցող, քիչ գիտցող, լուռ կեցող
ամենէն աղէկ գիտցող :

Քիչ խօսք շատ հանգիստ :

Գլուխդ միշտ զով բարեխառն չափաւորու-
թեամբ, ոտքերդ՝ ջերմ աշխատութեամբ ու
չարժամար, կանուխ ել, կանուխ պառկէ,
եւ երբ չափազանց գիրնալու վրայ ես աչ-
քերդ բաց ու բերանդ գոցէ, այսինքն քիչ
քնացիր եւ քիչ կեր ու խմէ :

Մննդարար կերակուր մարմնոյ հանգստու-
թիւն եւ սրտի խաղաղութիւն շատ հիւան-
դութիւններէ ազատ կը պահեն զմարդ :

Ապառողջ կերակուր՝ աժան ըլլալուն համար
գնողն անոր եռապատիկը դեղի համար պիտի
տայ :



Տկար թոք ունեցողներն ձայնական երա-
ժըշտութեան հետեւելու են եւ թոքերնին
չուտով պիտի զօրանան :



Կանայք եւ օրիորդք մազերնին այնքան
ձիւզ հիւսելու չեն , քանզի արմասներն կը
թուլնան եւ մազերն թափիլ կսկսին : Նոյն
պատճառաւ մազերուն բաժանման տեղն եր-
բեմն փոխելու է :



Ծանր, ծանր ուտողն է որ երկար կապրի ,
լաւ ծամէ կերածդ , ակռաններն բերնին մէջ
են եւ չէ թէ ստամոքմին մէջ , ուստի չծա-
մած կուլ մի տար :

Ակռաները մինչեւ գերեզման պէտք են ,
ուստի կարծր նիւթեր մի կտորեր անոնցմով :
Կերակրոյ մնացորդք եթէ անոնց մէջէն չը
մաքրես, բերանդ դարչաճոտ կըլլայ եւ ակ-
ռաներդ կը փախն : Պաղ եւ տաք միմեանց
ետեւէ բերան զրուելու չէ : Ակռաներուն դե-

ղին աղաը առամնաբոյժին մաքրել տուր ,
ծակած ակռան լեցունել եւ փտածը հեռա-
ցունել պէտք է :



Զօրաւոր թէյ եփէ եւ մէջը շաքար խառնե-
լով պնակներով սենեակդ դիր , ձանձերն կը
հրապուրուին եւ կը սասկին :

Սոզին լեարդը կրակարանին մէջ այրէ եւ
տկար աչք ունեցողը գլուխը այս ծուխին
վրայ թող բռնէ , 5—6 օրէն տկար աչք կը
բուժին :



Երկաթը կրակի նման տաքցուր եւ շունէն
խածուածքին վէրքը եւ անոր եզերքը իսկոյն
այրէ , եթէ ոչ խածնողն ալ կը կատղի :



Շիլ աչք կրնայ բուժուիլ առողջ աչքը կա-
պելով որով տկարը կը պարտաւորի առարկա-
յից վարժուիլ . կամ թէ ակնոցի մը ապակի-
ներն հանելով շիլ աչքին տեղը թիթեղ ման-
ցունելու է մէջտեղը ծակով մը , որով շատ
շիլ աչքեր բժշկուած են :



Հաւ մեղը 16 տրամ եւ 8 տրամ հնդկաիւղ միասին խառնելով առտու եւ երեկոյ փոքր դգալ մը կեր շնչարգելութեան բուժման համար :

Թշնամեացդ բարիք ըրէ քեզի բարեկամ կըլլան , բարեկամացդ բարիք ըրէ որ բարեկամ մնան :

Օղիի շիշերու կը յաջորդեն գեղերու շիշեր :

Պէտք չեղած բանը ո՛րքան աժան ալ ըլլայ բնաւ մի գներ :

Անհանգիստ խիղճ , ամենամեծ նեղիչ :

Քու առջիդ ուրիշը բամբասողը , քեզ ալ ուրիշին առջին պիտի բամբասէ անտարակոյս :

Մեր օրական հացը տուր , կ'աղօթենք . քու օրական պարտքդ կատարէ , կը պատասխանէ Աստուած :

ԵՐՁԱՆԻԿ ԼԻՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ

1. Օրը երկու ժամ քալէ :
2. Ամեն գիշեր եօթը ժամ քնացի՛ր :
3. Արթննալուդ պէս ե՛լ :
4. Ելնելուդ պէս աշխատէ՛ :
5. Անօթի եղած ատենդ միայն կե՛ր եւ ծանր ծանր :
6. Ծարաւի եղած ատենդ միայն խմէ՛ :
7. Պէտք եղած ատենը միայն խօսէ , եւ մտքէդ անցուցածիդ միայն կէ՛ան ըսէ :
8. Այն բանը միայն գրէ՛ , զոր կրնաս ստորագրել :
9. Ըրէ՛ միայն այն բանն , զոր կրնաս ըսել :
10. Դրամը՝ իր արժէքէն աւելի մի՛ յարգեր : յիշէ թէ լաւ ծառայ մ'է՛ դրամն եւ գէշ տէր մը :
11. Քեզմէ՛ վար նայէ՛ , երբե՛ք քեզմէ՛ վեր :
12. Ուրիշները եղբարցդ տեղ դի՛ր , եւ ըստ այնմ վարուէ՛ նոցա հետ :

Երեք բան կայ որոնց նմանիլ պարտի կին մը եւ որոնց պէտք չէ նմանի , ըսած է անգղիացի փիլիսոփայ մը :

1. Պարտի նմանիլ խխունջին՝ որ բնաւ դուրս չեկնէր իւր տունէն , բայց պէտք չէ խխունջին պէս՝ բոլոր ունեցածը կռնակին վրայ կրել :

2. Պարտի նմանիլ արծազանգին՝ որ այն ատեն միայն կը խօսի երբ բան մը հարցուի իրեն , բայց պէտք չէ արծազանգին պէս նայի որ միշտ իր խօսքն լինի :

3. Պարտի նմանիլ քաղաքի ժամացոյցին վերջին ծայր ճիշդ ու կանոնաւոր , բայց պէտք չէ որ ժամացոյցին պէս այնչափ ձայն հանէ՝ որ քաղաքն ողջոյն զինքը լսէ :

ԱՐՁՆ ՈՒ ԻՐ ԶԱԳՈՒԿԸ

Արջ մը ձագուկ մը ծնած էր չափազանց տգեղ որուն վրայ անասնոյ մը կերպարանք բնաւ չէր տեսնուէր , այլ միայն այլանդակ շարժուն զանգուած մը լինել կը թուէր :

Արջն ամչնալով այսպիսի ձագուկ մը ծնած ըլլալուն գնաց իրեն բարեկամ եղող Ուրիին (Աթմաճա) երբ մեծ աղմուկ կը հանէր իր սովորական թուլածնօտութեամբը եւ ըսաւ անոր , « Ի՞նչ պիտի ընեմ իմ շատախօս բարեկամս այս տձեւ փոքրիկ հրէշը , նպատակս է բզկտել ու նետել զայն » : Իսկ Ուրին խրատեց արջը որ այդ բանը չընէ , եւ ըսաւ . « Լիզէ , խնամէ զանիկայ որքան որ կրնաս : Ես դիտեր եմ ուրիշ շատ մը արջեր ալ որոնք նոյն մտատանջութիւնը ունէին որով դուն հիմա կը տառապիս , անոնք իմ խրատէս գոհ եղան . դուն ալ գնա՛ լիզէ մեղմօրէն խնամէ ձագուկդ եւ վստահ եղի՛ր որ այն շուտով պիտի գեղեցկանայ , փափկանայ եւ սիրուննայ քեզի պատիւ բերելու չափ : »

Մայր արջն լսելով իր ձագուկին գեղեցկանալուն դարմանը՝ ուրախութեան ճիչ մը արծակեց , եւ գնաց սկսաւ համբերութեամբ լիզել ու դարմանել իր ձագուկը որչափ որ կրնար : Եւ անա տակաւ առ տակաւ անոր տգեղութիւնը անհետացաւ , ուստի գնաց չնորհակալ ըլլալու Ուրիին անոր տուած բա-

րի խրատին համար եւ ըսաւ՝ « Եթէ անհամբերութիւնս զսպելու ջանացած չըլլայիր, անտարակոյս մեծ անգլթութեամբ պիտի բզկտէի ձագուկս, քանի որ հիմա անով է որ կեանքս ամեծամեծ հաճոյից եւ ուրախութեան մէջ կը գտնեմ: »

Անհամբերութիւնը որքան գէշ է:

ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՀԱՄԱԴԵՊ ՕՐԵՐ

Մեծն Աղեքսանդր ծնաւ Քրիստոսի թուականս 356 տարի առաջ եւ մեռաւ իւր ծնընդեան 33 ըրդ. տարեգարծի օրը, ճիշդ նոյն ամսոյն նոյն օրուան մէջ:

Յուլիոս Կեսար, Հռովմէական առաջին կայսրը, ծնաւ Քրիստոսի թուականէն 98 տարի առաջ Մարտ ամսոյ 15 ին, եւ մեռաւ իւր ծննդեան 44 ըրդ. տարեգարծի օրը, ճիշդ նոյն ամսոյ նոյն օրուան մէջ:

Պղատոն ծնաւ Քրիստոսի թուականէն 426 տարի առաջ, եւ մեռաւ իւր ծննդեան տարե-

գարծի մը օրը, այն նոյն սենեակին մէջ յորում ծնած էր:

Մեղանկտոն ծնաւ 1500 թուականին Քրիստոսի եւ մեռաւ իւր ծննդեան 60 ըրդ տարեգարծին՝ Մայիս 13 ին:

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԵԱՅՆ ԵՒ ԻՒՐ ՄԱՆԿԻԿԸ

Աւետարանի պաշտօնեայ մը երբ իր գրատունը տան ստորնայարկէն վերին յարկը կը փոխադրէր, իր մանկիկը ուզեց օգնել եւ հայրը տուաւ անոր ձեռքը մեծկակ գիրք մը: Մանկիկը ջանաց գիրքը տանել վերին յարկը, բայց սանդուխին կիսուն հազիւ հասած, ուժաթափ ըլլալով սկսեց աղաղակել: Հայրը լսելով անոր աղաղակը, դարձաւ եւ գիրքով մէկտեղ գրկեց մանկիկը ու համբուրելով երեսները հանեց վեր:

Այսպէս կը վերցնէ Քրիստոս այն ծանրաբեռնեալ հաւատացեալը որ Անոր կաղաղակէ:

ՄԵՆԱՐԺԷՔ ՀՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Սուրբ Աւետարանի հնագոյն ձեռագրի կուրած թերթերը գտնուել են : Յունարէն Աւետարանի ձեռագիրներից հնագոյն եւ նշանաւորն է Ձ. դարուց Պատմոսի ձեռագիր կոչուածը : Այս Աւետարանը գրուած է ծիրանեգոյն մագաղաթի վրայ եւ ծաղկած է արծաթագոյն եւ ոսկեգոյն : Պատմոսի ձեռագրից ցարդ գտնուած էին 45 թերթ , որոնցից 33 պահուում էին Պատմոսում , 6 թերթ վատիկանում , 4 բրիտանական մուսէոնում եւ 2 վիեննայում , Թէպէտեւ Թիշղնդորֆի անունով յայտնի Աւետարանի ձեռագիրը սրանցից հին է , բայց սա նշանաւոր է իւր արտաքին գեղարուեստական ձեւով , Ձեռագրիս պակաս թերթերը գտնուել են այժմ Տաճկաստանում : Կեսարիոյ շրջակայք մի փոքրիկ գիւղական եկեղեցում , համեմատութիւնը ցոյց է տալիս , որ այդ թերթերը թէ մագաղաթով , թէ գրութեամբ եւ թէ ընագրով լրացնում են

յայտնի Պատմոսի թերին : Այս գիւտի լուրը տարածուելուն պէս բազմաթիւ գնողներ լոյս ընկան , գլխաւորաբար անգլիացիք եւ ամերիկացիք , բայց վերջ ի վերջոյ այդ թանկագին նշխարը գնեց ռուսաց կառավարութիւնը 25,000 ֆրանքով :



ՎԻՐԱՅՈՒԹԱԿԱՆ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐ

Օտեսայի հիւանդանոցին մէջ վիրաբուժական դժուարին գործողութիւն մը կատարուել է Եպլթացի կնոջ մը վրայ որ , ջղային տագնապներու վայրկենին , ձեռքին հանդիպածը կը կլէր : Այդ հիւանդին ստամոքսէն հանուել են երեսունըօթը զանազան առարկաներ , ի մէջ այլոց պատառաքազ մը , երկաթի կտոր մը , երկու պղտիկ դգալ , ասեղ մը , տանթէլայի կտոր մը՝ կռասեղով մէկտեղ , երկու գամ , չորս կտոր ապակի , ութ կոճակ զանազան մեծութեամբ , բանալի մը եւ այլն : Գործողութիւնը շատ յաջող կերպով կատարուել

է եւ հիւանդը անվտանգ վիճակի մէջ կը գըտնուի : Ստամոքսէն հանուած առարկաները ցուցագրուեր են հիւանդանոցի սրահին մէջ ուր հետաքրքիրներու բազմութիւն մը, մասնաւորապէս շրջակայ քաղաքներէն եկող բժիշկներ , կ'այցելեն ու կը դիտեն : Գործողութիւնը կատարող բժիշկները կ'ենթադրեն թէ հանուած նիւթերուն մեծ մասը չորս ամսէ ի վեր մնացած էին խեղճ կնոջ ստամոքսին մէջ :

ՅՈՓԱԿԵԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ ՎՆԱՍՆԵՐԸ

Գերմանիոյ մէջ դարուս վերջերը գինեմուտքներէ մեռեր է կին մը : Անկից ի վեր այդ կնոջ զաւակներուն ու թոռներուն թիւը հասած է 834 ի : Ասոնց 709 ին վիճակն ու ապրելու եղանակը քննուելով սա արդիւնքը ձեռք բերուած է .

106 ը՝ ապօրէն կերպով ծներ են , 162 ը՝ մուրացկանութեամբ ապրեր , 64 ը՝ աղքատաց ապաստանարանը մտեր , 181 ը՝ ցոփութեան մէջ իրենց կեանքը վերջացուցեր , 76 ը՝ իւր

րեւ ոճրագործ դատապարտուեր , եւ 7ը՝ մահուան դատապարտուեր են : Գերմանական կառավարութիւնն եօթանասունըհինգ տարուան մէջ այդ ընտանիքին պատճառաւ 6,250,000 մարք վնաս կրեր է :

ԱՌԱՆՑ ՈՍԿՈՐԻ ՄԱՐԴ ՄԸ

Ամերիկայի Թէքսաս նահանգին մէջ Վէլիմ Բօտս անուն երկրագործ մը սաստիկ ժանտատենդէ բռնուելով վեց ամիս անկողնոյ ծառայեր է եւ այդ միջոցին գրէթէ բոլոր ոսկորները հալեր են : Մարմինը օձի մարմնոյն նման սկսեր է գալարիլ . մարդը չկրնալով քալել օձի նման կը սողոսկի եղեր : Բօտս կատարելապէս քաջառողջ ըլլալով առաջուան չափ կերակուր կուտէ սակայն : Շատ մը բժիշկներ զինքը քննելու եւ զարմանք յայտնելէ զատ ուրիշ բան մը չեն կրցեր ընել : Բժիշկներն ամենէն աւելի զարմացեր են տեսնելով Բօտսի աջ ձեռքն , որուն մորթը՝ գոյնը փոխելով օձի մորթի՝ գոյնն ստացեր է : Բազմա-

թիւ բժիշկներ տակաւին կը քննեն այս տա-
րօրինակ պարագան :

ԾԵՐՈՒՆԵՒ ՊՍԱԿԱՒՈՐ

Ամեն հասակի մէջ կարելի է բան սորվիլ :
Իէնտի համալսարանին փիլիսոփայութեան ճիւղը վերջերս տօքթօրութեան վկայական տուեր է վաթսուներեօթը տարեկան ծերունիի մը որ « յոյժ փայլուն կերպով » անցուցած էր իր քննութիւնները , երիտասարդ ուսանողի մը պէս :

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՈՐՍ ՄԸ

Փառակազմ առաջատանաւ մը անցեալ մա-
յիտին կալկաթայէ Նիւ-Յօրք երթալուն Ս.
էլէն կղզւոյն բացերը շանաձուկ մը որսացեր է , որուն փորին մէջէն Թայլզի մէկ թիւն ելեր է : Կենթադրուի թէ այդ թերթ Գլուխ Բարեյուսոյի թղթատարական պնջուսակներէն

ինկած ըլլայ : Թերթին գիրերը անաղարտ մնա-
ցեր են :

ԶՈՒՍՐՃԱԼԻՔ

Գիւղացի մը իր զակէն նամակ մը կ'ըն-
գունի , բայց կարդալ չգիտնալով գիւղին վար-
ժապետին կը դիմէ ըսելով :

— Պարոն , աղաս նամակ մը ղրկեր է , զոր բարձր ձայնով պիտի կարդաս , սակայն ա-
կանջներդ պիտի գոցես , որպէս զի միայն
ես իմանամ :

— Սեղանին վրայ , պէպէ , ներկայից զբա-
ղեալ մէկ միջոցէն օգտուելով իր աթոռին
վրայ կ'ելնէ եւ ձեռքը կը մխէ պտուղով լե-
ցուն պնակի մը մէջ :

— Մեծ մայրը տեսնելով խիստ դէմքով մը
երեսը կը նայի : Փոքրիկը ժպտելով կը պա-
տասխանէ :

— Մեծ մայր , քեզի տալու համար պիտի
առնէի :

— Երիտասարդ մը՝ չափէն աւելի շատախօս՝ կը տեսնուէր գեղանի կնոջ մը հետ, որ զայն մտիկ ընել ձեւացնելով միւս կողմէ իր շունը կը շոյէր :

— Տիկին, ըսաւ երիտասարդը, դուք որ այնչափ մտացի էք, ինչպէս կ'ըլլայ որ այդչափ սիրէք շուն մը :

— Ինչ ընեմ, յարեց կինը ժպտելով, որովհետեւ չխօսիր :

— Ա՛ս ինչ է, ծո՛յլ, կ'ըսէր հողագործ մը իր զաւակն արթնցնելով, տակաւին կը քնանաս եւ արեւը արդէն ծագած է :

— Զաւակը աչքերը չփելով ըսաւ միամտօրէն :

— Յանցանքը ի՞մա է եթէ արեւը չլուսցած կը ծագի :

ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի լրագիրք կը պատմեն թէ գեառափի արկին մը վարդի մօտենալուն շնչահեղձութեան տազնապներու կը մատնուի եղեր :

Օր մը այդ կին բժիշկի մը կ'երթայ այդ մասին անոր խորհուրդ հարցնելու համար : Բժիշկը քիչ մը հարցափորձէ վերջը կը յանձնարարէ որ ուրիշ անգամ մ'ալ ներկայանայ : Այդ անգամ երբ կինը սենեկէն ներս կը մտնէ, բըժիշկը ձեռքը խոշոր վարդ մը բռնած զինքը կը զիմաւորէ : Կինը նորէն կը մատնուի շնչահեղձութեան տազնապներու, բայց բժիշկը կը ծիծաղի, որովհետեւ ձեռքը բռնած վարդը թուղթէ շինուած էր :

ՆՈՐ ԳՈՒՇԱԿ ՄԸ

Այս նոր գուշակը զոր Ֆրանսա ունեցաւ օրիորդ Քուէտոնէն ետք, ինը տարու է, Բօլէն-Տելլրօնան : Այս սղան որ միմիայն գաւառաբարառ կը խօսէր եւ բնաւ կրթութիւն չէ առած, շատ քաջ կը խօսի Քրանսերէն եւ նոյն իսկ լատիներէն երբ տազնապի մէջ ըլլայ, եւ յոյժ հետաքրքրաշարժ բաներ կ'ըսէ : Խել մը տեսիլքներ կ'ունենայ, մանաւանդ Սէնդ-Ամանը, Սէն-Ժօզէֆը, Սէն-Բօլէնը եւ

այլն շատ կը տեսնայ, բայց ամենէն արտասովոր բանն է գաղտնիքներ գուշակելն ու պահուած առարկաներ երեւան հանելը :

Այսպէս, գուշակեր է տեղն՝ ուր թաղուած են եղեր հին եկեղեցիի մը՝ Սէնդ-Ամանի՝ եկեղեցիին զանգակները : Յոյց տուեր է այդ տեղը եւ յայտարարեր է որ փորելով նախ երկու կմախքներ պիտի գտնուէին, յետոյ զանգակները :

Փորեր են եւ արդարեւ գտնուեր են երկու կմախքները : Հիմա զանգակները փնտռելու վրայ են տենդոտ գործունէութեամբ մը : Ամեն կողմէ բազմութիւն կը խուժէ հոն :



ԱՄՈՒՄՆԱՅԵԱԼ ԵՒ ԱՄՈՒՐԻ ԱՆՁԻՆՔ

Չարդ Տարուին գիտութեան նուիրուած իր երկար կեանքին մէջ նշանաւոր յաջողութեամբն իրաւացի ընծայած է իր սա համբաւը թէ երբեք բան մը չէր խօսեր եթէ նախ չստուգէր խնամեալ հետազօտութեամբ :

Մր. Տարուին հռչակաւոր Սկովտացի գիտուն Տր. Սթարքի հետ միաբան կը հաստատէ թէ ամուսնական կեանքը երկարակեցութեան ամենէն նպաստաւոր վիճակներէն մին է : Կ'ըսէ թէ 1853ին հաւաքուած բազում վիճակագրութիւններ ցուցած են թէ ի Գաղղիա քսանէ մինչեւ ութսուն տարեկան մեռնող ամուրի անձանց թիւը շատ մը աւելի է քան ամուսնացողներունը : Չոր օրինակ, քսան եւ երեսուն տարեկան հասակներուն մէջտեղ գրտնուող 1,000 չամուսնացած անձերէ 11. Յը կը մեռնին մէկ տարուան մէջ, մինչ յիշեալ տարիքներն ունեցող ամուսնացածներու 1,000 էն 6-5 միայն կը մեռնին : Նմանօրինակ վիճակագրութիւններ հաւաքուեցան 1863ին եւ 1864ին ի Սկովտիա, եւ գտնուեցաւ որ քսանի եւ երեսունի մէջտեղ տարիք ունեցողներուն մէջ 1,000 չամուսնացողներէն 14-97ը կը մեռնին մէկ տարուան մէջ, մինչ ամուսնացողներէն կը մեռնին միայն 7-24 : Տր. Սթարք պնդած է թէ ամուրիութիւնը աւելի վնասակար է կեանքի քան ամենէն վատառողջ արհեստը կամ վատառողջ տան կամ զաւառի

քնակութիւնը ուր երբեք ձեռնարկուած չըլլայ
առողջապահական դարգացուն միջոցներու :
Գտած է նաեւ թէ ինչպէս ի Սկովտիա՝ նոյն-
պէս եւ ի Գաղղիա այն անձինք որք չունին
ամուսին , շատ աւելի կը տառապին հիւան-
դութենէ քան այնպիսիք որ ամուսնական
կեանք ունին :

ՄԱՐԾԻՆԻՆ ՈՒ ՀՈԳԻՒՆ ՄԷՋՏԵՂ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

« Եղբայր , » ըսաւ հոգին մարմինին . « Մենք
քիչ ատենէն պիտի բաժնուինք իրարմէ . ե-
կուր հիմա հաշիւ ընենք մէկտեղ : »

« Ընենք , քոյր , » ըսաւ մարմինը :

« Դուն զբաղեալ ես , » ըսաւ հոգին , « եւ
անդադար աշխատելով քեզի հաճելի շատ բա-
ներ զիգած ես . զանոնք ո՞վ առնէ տանի , ե՞ս
թէ դու : »

« Ո՛հ , » ըսաւ մարմինը . « ես ի՞նչպէս կըր-
նամ հետս տանիլ զանոնք : Գերեզմանին մութ
տեղը , փոշիին ու ապականութեան մէջ , ի՞նչ
օգուտ պիտի ընեն ինձի հոն : »

« Հապա ե՞ս պիտի տանիմ , » ըսաւ հոգին ,
« այնպիսի տեղ մը ուր երկրաւոր բաներ բնա-
կարող չեն մտնել : »

« Ճշմարիտ է ուրեմն , շատ չանցած աս
զիգուած բաներ ոչ իմ պիտի լինին՝ ոչ քուկդ՝
ըսաւ մարմինը ցաւալի հառաչանօք :

« Այո , բայց մեր հաշիւը դեռ չլինցաւ , »
պատասխանեց հոգին . « Մենք նորէն պիտի
գտնենք մէկզմէկ . բայց ի՞նչպէս , ցաւի՞ մէջ
թէ ուրախութեան մէջ : Դու բնաւ չթողու-
ցիր ինձի նայիլ դէպ ի երկինք , այլ յափշտա-
կեցիր իմ ազատութիւնս ու գործածեցիր իմ
բոլոր կարողութիւնս՝ միայն երկրաւոր բաներ
ստանալու համար : »

« Ափսոս , » ըսաւ մարմինը , « դու հրա-
մայեցիր ինձի եւ հիմա կը նախատե՞ս զիս : »

« Ուրեմն , » պատասխանեց հոգին . « մենք
պիտի գտնենք մէկզմէկ իբրեւ պատժոյ ըն-
կերներ յաւիտենականութեան դատապարտ-
ուած : Ես ալ , դուն ալ ապականեալ ենք ու
բնաւ հոգ չտարինք մեր մաքրութեանը : Ես
ալ իրաւունք չունիմ երկինք ժառանգելու ,
դուն ալ չունիս . ու բնաւ փոյթ չունեցար

հոն մտնելու : Ուստի այն զիգուած բաներ պիտի ըլլան մեր դատախազը յաւիտեանակա- նութեան մէջ . ու ես պիտի կշտամբեմ քեզ յաւիտեանականութեան մէջ , զանիկա ձեռք բերելու մտօք զիս ի կորուստ մատնելուդ համար : »

Յակոբ Պ. Պասմանեան

ԿԱԹՈՒՆ՝ ՄԻՔՐՈՊԷ ԶԵՐՄ

Կաթը միփրոպներէ զերծ պահելու համար Մալքըմ Մորիս սապէս հրահանգ կուտայ : Դի՛ր կաթը մաքուր շիշի մը մէջ եւ գոցէ բերանը մաքուր բրդեղէնով : Այնուհետեւ շիշը դիր մետաղեայ յարմար ամանի մը մէջ այնպէս որ անոր յատակէն իբր կէս մատնա- չափ բարձր մնայ շիշը : Պաղ ջուր լեցուր՝ դուրսի ամանին մէջ . թող ջուրը կաթին մա- կերեսին հաւասար բարձրանայ , եւ կամաց կամաց տաքցուր ջերմոցի վրայ մինչեւ որ ե- ռացման աստիճան տաքնայ ջուրը : Ապա ա- մանը վար առ կրակին վրայէն , եւ վրան

ծածկէ թոյլ կերպով բրդեղէն լաթով մը եւ թո՛ղ կէս ժամ : Կէս ժամէն ետքը վերցուր շիշը եւ դիր զով տեղ մը :

Այս առթիւ շահեկան է գիտնալ թէ 75 տրամ կաթին մէջ 300,000է մինչեւ 135 մի- լիոն միքրոպ կը գտնուի եղեր :

ՀԱՒԱՌՈՒԾՈՒԹԻՒՆ

Թէ՛ թխսելու եւ թէ՛ ածելու համար ա- մենէն աւելի համբաւ ստացող հաւը՝ Պոլսոյ մէջ իսլիկ ըսուածն է , որուն հասակը ընդ- հանրապէս կարճ կ'ըլլայ եւ ոտքը գրեթէ փետուրներով գոցուած :

Հաւերուն պարտէզի հողը պէտք է աւա- զուտ ըլլայ եւ քիչ մ'ալ շեղ որպէս զի ջուր չկենայ . պտրտէզին դիրքը պէտք է ըլլայ ա- րեւելեան կամ հարաւային կողմը . ասկէց զատ , հաւերը տաքութենէ չնեղուելու հա- մար , պէտք է պարտէզին մէջ ասղին անդին ծառեր տնկուած ըլլան , ինչպէս թթենի, ա- քասիա , թանթրուենի որոց պտուղներն ալ

մինչեւ մէկ աստիճան հաւերուն կեր կրնայ ըլլալ : Պարտէզին հիւսիւսակողման պատը պէտք է միւսներէն բարձր լինի , սաստիկ հովերու հոսանքները արգիլելու համար : Հաւու պարտէզ մը լաւ կազմուած ըլլալու համար պէտք է ունենայ .

1. Հաւերը ազատ պտրտելու համար բաւական ընդարձակ տարածութիւն (հակառակ պարագային մէջ կենդանիները կը հիւանդանան) :

2. Հովանաւոր տեղ մը (ծառեր տնկուած տեղ մը) :

3. Հաւնոց մը :

4. Եթէ պարտէզին մէջ ջուր չիկայ , պըզտիկ աւազան մը :

5. Աւազնոց մը :

Հովանաւոր տեղը երկու տեսակ կ'ըլլայ , մէյ մը ծառեր տնկելով եւ մէկ մ'ալ հովանոցի ձեւով տանիք մը շինելով . այս վերջինը եթէ միանայ հաւնոցին տանիքին հետ՝ աղէկ կ'ըլլայ , որովհետեւ ձմեռները առանց մտելու եւ թրջուելու կրնան պատսպարուիլ հովանիին յատակը պէտք է որ գետնէն քիչ

մը բարձր ըլլայ եւ ձմեռը հոն պէտք է թափել չորցած աղբ . այս կերպով թէ՛ հաւերը չեն մսիր եւ թէ՛ աղբին մէջէն ճճիներ գտնելով ախորժանօք կ'ուտեն : Աղբը ամէն ատեն խառնելու եւ ամէն ամիս նորոգելու է :

Հաւերը մեծապէս կը մնասուին եթէ ճահիճներէ կամ կեցած ջուրերէ ջուր խմեն , անոր համար կարելի եղածին չափ զգուշանալու է հաւերը ատանկ տեղեր դրկելէ եւ կամ թէ՛ ճահիճները , եթէ շատ մեծ չեն , պէտք է չորցունել :

Հաւերու պարտէզին մէջ իրարմէ հեռու պզտիկ փոսեր պէտք է փորել , որոնց մէջ լեցունելու է մոխիր կամ բարակ աւազ , որպէս զի՝ զիրենք անհանգիստ ընող ոջիլներէն մաքրուելու համար՝ մոխիրով կամ աւազով լեցուած փոսերուն մէջ տապալտրկին :

Հաւնոցը պէտք է երկու դուռ ունենայ , մէկը պզտիկ՝ որպէս զի հաւերը մտնեն եւ միւսը մեծ , հակիթը առնելու եւ հաւնոցը մաքրելու համար : Հաւնոցը պէտք է շինուած ըլլայ աղիւսով կամ քարով , թէեւ փայտով ալ կը շինեն , որ սակայն շուտ փը-

տելէն ի զատ անողջապահիկ ալ չէ : Հաւնոցը պէտք է ունենայ դէմ դիմաց պատուհաններ , որպէս զի ներսի ապականեալ օդը դիւրաւ մաքրուի (պատուհաններուն շատութիւնը հաւնոցին մեծութեան համեմատ պէտք է ըլլայ) . տանիքին վրայ յարդի խաւ մը տարածելը աղէկ է , որովհետեւ ամառը զով , իսկ ձմեռը տաք կը պահէ :

Մ. Արեւնաս

ԲԱՄԲԱՍԱՆՔԸ

Մեր ընտանեկան կազմակերպութեան ու բարքերու մէջ շատ բաներ կան ուսումնասիրելիք . ճարտար բարոյազէտ մը միայն կրնայ կենդանի գոյն մը տալ իր նկարագրութիւններուն եւ մատնացոյց ընել թերութիւնները , չանտեսելով միանգամայն առաքինութիւններնիս : Անգամ մը եթէ անցողաբար ահանջ դնենք մեր կիներուն ու աղջիկներուն խօսակցութեան , պիտի համոզուինք թէ շատ հեռու են անոնք դարուս փափկանկատ պա-

հանջներէն ու յառաջադէմ քաղաքակրթութենէն : Մէկը՝ երիտասարդի մը կեանքի ընթացքին չհաւնիր , ուրիշ մը հաճոյք չզգար անոր ներկայութենէն . սա՛ զայրոյթէն կը բռնկի անոր ուշադրութիւնը իր վրայ չի հրաւիրելուն համար . նա՛ քարեր կը տեղացնէ անոր գլխուն , թերեւս պատրանքի մը զօն երթալուն համար : Եւայի թողնելը վերջապէս վհատած՝ չարախօսութեան ու բամբասանքի կը սկսին , ասոր անոր մուր կը քսեն , սուտ մը , զրոյց մը կ'ողորեն , կծիկ կը շինեն որուն սկիզբը ու վերջը շատ դժուար է գտնել :

Բամբասանքը հասարակաց ախտն է կիներուն համար . կար կարած ատեն , ճամբան , շոգենաւին մէջ , շոգեկառքը , հանրակառքին մէջ , վաճառատունը , պատուհանէ պատուհան , միշտ ան «տունի ճպուռները» չեն ձանձրանար երգելէ :

Երիտասարդը՝ շուարած կանացի ուղմագիտութեան այս զէնքին հանդէպ , իմաստութիւն կը սեպէ հեռանալ : Նահանջման մէջ յաղթած է անոնց , վառն զի այդ անիմաստ

ծեքծեքուհներ օղին մէջ կ'անհետին ուչ կամ կանուխ :

Մինչդեռ Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ լուսամբա կիներ իրենց սեռի վերաբերեալ ընկերաբանական լուրջ խնդիրներով կը դբազին եւ միջազգային համաժողովներու մէջ կը պաշտպանեն կնոջ դասը որ մեծ բարեշրջում մը առաջ պիտի բերէ ընտանեկան շրջանակներու մէջ , ասղին մերիններուն մեծագոյն մասը կը շարունակեն բամբասանքով զբաղիլ : Այս վարմունքը փոխելու է ընտանեկան սրբավայրին մէջ սուրբ խորհուրդներ տիրելու են , հայ կիներ թո՛ղ հետաքրքրուի , եթէ չի մասնակցիր , իր արեւմտեան քոյրերուն զարգացման :

Հ. Մ.

ԶԻՐԱՐ ԲԱՐԵԻԵԼՈՒ ԶԵԻՆԻ

Հարաւային Ովկիանոսի կղզեաց բնակիչներուն տարօրինակ կերպը բարեւելու՝ է սափոր մը ջուր պարպել բարեկամին գլխուն վրայ : Այս կրնայ կոչուիլ մանաւանդ պաղ ընդունե-

լութիւն , բայց այդ սոթակէզ երկրին մէջ հաւանականապէս կ'ընեն այսպէս՝ բարի դիտաւորութեամբ : Ափրիկէի քանի մը ցեղերու մէջ բարեւողը բարեւ ընդունողին հանդերձը կը հանէ եւ ինք կը հագնի զայն : Կան մատենագիրք որ կը հաւաստեն թէ այս սովորութիւնը ծագում առած է մեծի մը առջեւ գտնուած ժամանակ երեսը ծածկելու հին սովորութենէն , ճիշդ ինչպէս որ յԱփրիկէ՝ իւր հանդերձները մերկանալու վերնոյն հակառակ սովորութիւնը կը համարուի ծագում առած կօշիկները ոտքերէն հանելու սովորութենէն իբրեւ անոր ծայրայեղ մէկ ձեւը : Իրարու հանդիպած ժամանակ կօշիկները հանելու սովորութիւնը ընդհանուր է առ Ճաբոնացիս : Ափրիկէի ինչ ինչ կողմերը բարեւելու շատ խոնարհական եւ թատերական ձեւ մը սա է որ ստորնագոյն անձը կ'իյնայ իւր մեծին ոտից առջեւ երեսի վրայ եւ ձեռուրները տարածած : Աւստրալիոյ բնիկները անսովոր կերպ մը ունին բարեւելու . երբ իրարու կը պատահին , իրենց լեզուներն իրարու կը ցուցնեն : Ըստ երեւութիւն անմեկնելի է այս ձեւ բարեւը ,

վասն զի այսպիսի բան մը առ մեզ կը համարու-
ուի նշան հեգնութեան : Ապառաժ Արարիոյ
մէջ սովորութիւն է այտը այտին դնել : Խալ-
մուխք կոչուած ցեղին բարեւելու եղանակն
է շատ նման Եսկիմացոց եղանակին : Անոնք
ալ իրենց քիթերը կը շփեն . բայց տակաւին
չհասած միեւնոյն տեղը , ծնկան վրայ կու-
գան եւ կը սկսին սողալով երթալ դէպ իրար .
երբ կը մօտենան իրարու , հոն վերջին աստի-
ճանին կը համի որջնատուութեան եռանդը ,
ուժգին իրարու բաղխելով իրենց քիթերը :
Կոնա կոչուած ժողովուրդը ունի սովորու-
թիւն իրարու ականջ քաշել իբրեւ բարեւի
արարողութիւն բարեկամաց մէջ : Ասոնք ա-
մէնքն ալ կրնան նախնի ժամանակաց իրար
գրկելու սովորութեան իբրեւ մեղմ ձեւերը
համարուիլ :



Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ



Տոմարական գիտելիք
Օրացոյց

Էջ
2
7

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

Նոր տարի 37
Ֆարատէյի կորուսեալ բաժակը 39
Եթէ հայրս բռնէ ձեռքս 40
Մատաղահասակ անձինք շատ քնանալու պէտք
ունին 43
Ելեց գերբին չափ հին ցորեն 45
Աւետարանական առաքելութիւնք 46
Հիւանդի սենեկաց համար 48
Կայլակք 50
Դատաստան Աստուածային 51
Հեռո՛ւ բաժակ (ոտանաւոր) 55
Ունայնութիւն ունայնութեանց 57
Տուր ինձ (ոտանաւոր) 59
Աւողջարանական 61
Բարոյական եւ դործնական դասեր 64

Պիչըրի խրատք առ իւր որդին	65
Ստամբուի թթուութիւն	71
Հրէական ականդութիւնք	72
Առողջարանականք	76
Հին օձը	81
Յիսուս անհաւատից համար	84
Սրտացաւ	86
Պառաւ կինն ի նչպէս ազատեց կառախումբը խորտակուելէ	88
Սեւամորթից սնապաշտութիւններ	93
Արտասուք ի վերայ Գեր. Աղեքսանգը ճէճիզէանի (ոտանաւոր)	97
Գինեվաճառաց ճմարիտ ծանուցագիր	99
Խեղճին բարեկամը	102
Սենեկին մէջ գող մը	108
Քուլէրա ու անոր դարմանը	110
Օգտակար դիտելիքներ	115
Երջանիկ լինելու արուեստը	131
Արջն ու իր ձագուկը	132
Ծննդեան եւ մահուան համադէպ օրեր	134
Աւետարանի պաշտօնեայն եւ իր մանկիկը	135
Մեծարժէք հնութիւն մը	136
Վիրաբուժական հրաշալիքներ	137
Ֆոփակեաց ընտանիքի մը փլասները	138
Առանց ոսկորի մարդ մը	139
Ծերունի պսակաւոր	140
Արտասովոր որս մը	140
Զուարճալիք	141

Երեւակայութիւնը	142
Նոր գուշակ մը	143
Ամուսնացեալ եւ ամուրի անձինք	144
Մարմինն ու հոգին մէջտեղ խօսակցութիւն մը	146
Կաթը միքրոպէ զերծ	148
Հաւաբուծութիւն	149
Բամբասանքը	152
Զիրար բարեկերու ձեւեր	154



معارف عمومیه نظارت جلیله سنک ۳ جمادی الاول ۳۱۴
 و ۲۸ ایلول ۳۱۲ تاریخلی و ۳۷۹ نومرولی
 رخصتنامه سیله طبع اولمشدر

Handwritten signature or initials in the bottom left corner.

6740

2013

« Ազգային գրադարան »



NL0031976

